Թամարա Թովմասյան

Մայրենի

Մեթոդական ուղեցույց

5

Թամարա Թովմասյան

ՄԱՅՐԵՆԻ

5

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

Երևան 2023

Թովմասյան Թամարա

Մայրենի 5: Մեթոդական ուղեցույց, Թամարա Թովմասյան, Եր., Էդիթ Պրինտ, 2023, 124 էջ:

© Թ. Թովմասյան

© Էդիթ Պրինտ

Սիրելի՛ ուսուցիչ

Մեթոդական ուղեցույցի նպատակն է 5-րդ դասարանի մայրենիի ուսուցիչներին ոչ միայն մեթոդական օգնություն ցուցաբերել, մայրենիի ուսուցումը առավել մատչելի ու հետաքրքիր դարձնել, այլև ուսուցման ժամանակակից մեթոդներն ավելի հասկանալի և նպատակային դարձնել ուսումնական նյութի թեմատիկ պլանավորման, դասերի պլանավորման և գնահատման գործում: Որքան էլ անթերի լինեն ծրագիրն ու դասագիրքը, բոլոր դեպքերում ուսուցման մեջ վճռորոշը ուսուցչի դերն է:

Այսօր կրթական բարեփոխումներն ու ուսուցչի դերի նորովի արժևորումը դարձել են օրվա հրամայականը:

Մայրենիի միասնացված ուսուցումը կազմակերպվում է ուսուցանվող նյութերի հաղորդման, մատուցման գործընթացը կատարելագործելով՝ ելնելով բնագրերը սովորեցնելու բուն նպատակից և լեզվաքերականական նյութերը բնագրի վրա գործնական կիրառելու առանձնահատկություններից:

Յուրաքանչյուր ուսուցիչ ունի թեման ստեղծագործաբար ներկայացնելու իր մոտեցումներն ու հնարավորությունները, և այս ուղեցույցում առկա դասի պլանները զերծ են պարտադրանքից. դրանք ունեն միայն ուղղորդող բնույթ:

5-րդ դասարանում գրական և լեզվական գիտելիքների ուսուցումը նպատակ ունի զարգացնելու տարբեր բնույթի բանավոր և գրավոր շարադրանք ստեղծելու կարողություններ, ձևավորելու արժեհամակարգ ունեցող քաղաքացի:

5-րդ դասարանի մայրենիի դասագրքում ներառված են հեքիաթներ, առակներ, պատմվածքներ և բանաստեղծություններ: Այդ նյութերի մատուցումը հետաքրքիր ու նպատակային դարձնելու համար կազմվել է սույն մեթոդական ուղեցույցը՝ հաշվի առնելով այն բարեփոխումները, որոնք այսօր միտված են կրթության որակի բարելավմանը:

Հեղինակների սեղմ կենսագրությունները, ստեղծագործական կյանքի հիմնական փաստերը, բնագրերը բխում են չափորոշչային ուսումնական նպատակներից: Նպատակն այն է, որ դասընթացն անցնի հետաքրքիր՝ դասավանդման ավանդականից տարբեր մեթոդներով: Ծրագրային բոլոր նյութերն ուղեկցվում են ուղղորդող առանձին մեկնաբանություններով, հարցերով ու առաջադրանքներով:

Ուղեցույցի նպատակն է ուսուցչին ուղղորդել մայրենիի դասավանդումն առավել հետաքրքիր ու մատչելի դարձնելու՝ ժամանակի գիտամեթոդական պահանջներին համապատասխան, որպեսզի աշակերտը ոչ միայն տիրապետի տեղեկությունների ու փաստերի, այլև հանգամանորեն յուրացնի գրական երկը որպես արվեստի ստեղծագործություն, նաև ինքը (ինքնուրույն կամ ընկերների հետ միասին) մասնակցի գրական երկերի մեկնաբանական, վերլուծական, բացատրական աշխատանքներին: Ամեն ինչ արվել է, որ աշակերտն ինքնուրույնաբար ընկալի նյութը՝ իր ընդունակություններին ու կարիքներին համապատասխան: Յուրաքանչյուր հեղինակին հատկացվող ժամաքանակը հնարավորություն է տալիս գրողին ու նրա գրական երկն ուսումնասիրել ավելի հանգիստ ընթացքով: Դարաշրջանի հա-

մար բնութագրական տեքստի խոր ուսումնասիրությամբ աշակերտն արդեն կարող է իր պատկերացումն ունենալ նաև համանման այլ ստեղծագործությունների վերաբերյալ:

Մեթոդական ուղեցույցը կոչված է մեթոդապես ու մասնագիտորեն օգնելու ուսուցչին և նպաստելու հանրակրթական դպրոցում մայրենիի միասնացված ուսուցման թերությունները շտկելուն, սովորողի ժամանակակից պահանջների բավարարմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Ձեռնարկի դասավորությունն ու բովանդակությունը

5-րդ դասարանի մայրենիի դասընթացն ունի գործնական ուղղվածություն, հետևաբար համապատասխան բնագրերը և լեզվական գիտելիքները պետք է նպաստեն սովորողների՝ կապակցված խոսք կառուցելու, ստեղծագործական, վերլուծական, հետազոտական կարողությունների զարգացմանը:

Բացի սովորողների վերարտադրողական կարողությունների զարգացումից, ուղեցույցը կնպաստի նաև սովորողների ստեղծագործական մտածողության, դիտողականության, երևակայության, համեմատելու, ընդհանրացնելու, դասակարգելու, վերլուծելու կարողությունների զարգացմանը:

Վարժությունները և առաջադրանքներն ընդգրկում են ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանությանը, բառագիտությանը, բառակազմությանը, ինչպես նաև տեքստի կառուցվածքին, բառարանագիտությանը վերաբերող նյութեր:

Յուրացման համար կազմվել են այնպիսի առաջադրանքներ, որոնք հնարավորինս ապահովում են սովորողի անհրաժեշտ գիտելիքների գործնական իրացումը՝ նրանց ընկալողական կարողունակություններին համապատասխան: Վարժություններն իրենց բովանդակային ծավալով, տարաբնույթ առաջադրանքներով ձևավորում են անհրաժեշտ չափանիշներ սովորողի և՛ ուսումնական պատրաստվածությունը, և՛ ինքնուրույն մտածելու, տրամաբանելու ունակությունը ստուգելու, բացահայտելու համար:

Սովորողների ուղղագրական և կետադրական կանոնների յուրացումն ապահովելու նպատակով ներառվել են տեքստեր, որոնց ընտրության ժամանակ հաշվի է առնվել ոչ միայն դրանց ուսուցողական, այլև գեղարվեստական, դաստիարակչական նշանակությունը. հատվածներն ընտրվել են հայ և այլազգի անվանի հեղինակների ստեղծագործություններից:

Այսպիսով՝ դասագրքի առաջադրանքներն այնպես են կազմված, որ սովորողին մղում են ոչ թե մեխանիկական աշխատանք կատարելու, այլ խթանում ու հարստացնում են նրա լեզվական գիտելիքները գործնականորեն կիրառելու կարողությունը: Վարժությունները կարող են կիրառվել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ուսուցման նպատակով: Դրանք նաև հարուստ նյութ են ուսուցանող գնահատման համար:

Ըստ հաստատված Հանրակրթական պետական չափորոշչի՝ «Մայրենին»՝ իբրև առարկա, ունի իր առանձնահատկությունները. այն հայոց լեզվի և գրականության միասնացված դասընթաց է, որը ներառում է գրական և ոչ գրական տեքստեր, լեզվական և գրականագիտական տարրական գիտելիքներ՝ նպաստելով սովորողի հաղորդակցական կարողությունների ձեռքբերմանը, ձևավորելու որոշակի

վերաբերմունք աշխարհի, մարդկանց ու բնության հանդեպ, զարգացնելու աշակերտի ստեղծարար կարողությունը:

Մեր կողմից կազմվել է թեմատիկ պլանավորում՝ շաբաթական 7 դասաժամի համար՝ դասի նպատակներով ու վերջնարդյունքներով:

«Մայրենի 5» դասագիրքը բաղկացած է 4 թեմատիկ խմբից՝ «Լինում է, չի լինում», «Առակս ի՞նչ կցուցանե», «Ականջ դնենք հետաքրքիր պատմություններին», «Եվ այսպես հյուսվում է իմ երգը»:

Յուրաքանչյուր բաժնից մեր կողմից ընտրվել է մեկ կամ մի քանի թեմա և հանգամանորեն վերածվել դասի պլանի, որ ուսուցչին օգնի վերակառուցելու իր դասավանդումը՝ մայրենիի առանձնահատկություններին համապատասխան:

Ուղեցույցում միաժամանակ զետեղված է գնահատման նոր համակարգի վերաբերյալ նյութ, որը կօգնի կատարելու ճիշտ գնահատում՝ միավորային և ուսուցանող կամ բնութագրական:

Քանի որ ուսուցիչները դժվարանում են կազմել հայտորոշիչ թեստեր, հետևաբար մենք ներկայացրել ենք համապատասխան թեստեր, որոնք հնարավորություն կտան հայտնաբերելու սովորողի ուսումնական բացթողումները և բարելավելու ու շտկելու դրանք:

Դասագիրքն այնպես է կազմված, որ ողջ տարվա ընթացքում սովորողները կուսումնասիրեն հայ դասական և ժամանակակից գրողների բնագրեր, ինչպես նաև տարբեր ժողովուրդների ստեղծագործության նմուշներ: Յուրաքանչյուր դասանյութ ունի «Բառային աշխատանքներ» և «Տեքստային աշխատանքներ» բաժինները: Դրանց հաջորդում են լեզվական նյութերը՝ համապատասխան առաջադրանքներով:

Դասագիրքն ունի բացատրական բառարան, որը կնպաստի աշակերտների ճիշտ գրելու և ճիշտ խոսելու կանոնների իմացությանը:

Դասագրքի լրացուցիչ նյութերը զետեղված են QR ծածկագրի տակ, որտեղ առկա են գրողների կենսագրություններ, թեմային համապատասխան մուլտֆիլմեր, բնագրերի համար գրված մեղեդիներ, էլեկտրոնային վարժություններ, որոնք լուծելուց հետո ստուգումն իրականացվում է համակարգի միջոցով:

Դասագիրքն ունի խորհրդանիշներ.

Ընթերցանության նյութ

Լեզվական նյութ

Բառային աշխատանք

Տեքստային աշխատանք

Առաջադրանքներ

QR ծածկագիր

Ձեր բարեկամ՝ Թամարա Թովմասյան

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Մայրենի 5-րդ դասարան

(տարեկան 238 ժամ, շաբաթական 7 դասաժամ)

Կազմող՝ Թամարա Թովմասյան

Դասագրքի հեղինակներ՝ Աշոտ Գալստյան, Թամարա Թովմասյան

ԺԱՄ	ԹԵՄԱ	ՆՊԱՏԱԿ	ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ
4	Նախորդ դասարանում անցածի կրկնություն	Վերհիշել և ամրապնդել անցած դասարանում սովորածը:	**Վերարժևորել** և **ճանաչել** սեփական գիտելիքները:
1/1	Մուտքի դաս: Զրույց մայրենիի մասին	**Բացատրել՝** ՀՀ պետական լեզուն հայերենն է: **Սեր արթնացնել** մայրենիի հանդեպ: **Նպաստել** մայրենի լեզվի պահպանմանն ու զարգացմանը:	**Գիտակցել** մայրենի լեզվի դերը հայ մարդու կյանքում: **Արժևորել** մայրենի լեզուն՝ որպես ազգապահպանության և գոյատևման նախապայման: Մայրենի լեզվի պահպանման գործում **կարևորել** սեփական անձը:
2/1	Մեսրոպ Մաշտոցը և հայերեն տառերի ծնունդը	**Ծանոթացնել** Մաշտոցի կյանքին ու գործունեությանը և հայոց գրերի ստեղծման պատմությանը:	**Բնութագրել** գրերի գյուտը՝ հին և միջնադարյան գրականության բովանդակության, պատկերային համակարգի, ազգային արժեքների ժամանակի և տարածության համատեքստում: **Մեկնաբանել** այբուբենի դերը հին և միջնադարյան գրականության ազգային արժեհամակարգի դրսևորման և մշակութային արժեքների պահպանման գործում:

			Արժևորել գրերի գյուտը: **Գնահատել** Մեսրոպ Մաշտոցի և գրերի գյուտի դերը հայ ժողովրդի կյանքում: Կենսագրությունից ելներով՝ **արժևորել** Մաշտոցի **գործունեությունը** նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում:
2/2	Հայերենի այբուբենը և տառերի թվային արժեքը (ուսուցանող գրավոր) Սիլվա Կապուտիկյան, «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը	**Ծանոթացնել** հայերենի այբուբենին և նրա թվային արժեքին: **Ծանոթացնել** Ս. Կապուտիկյանի բանաստեղծությանը և դրա միջոցով **ցույց տալ** մեր լեզվի հարստությունն ու գեղեցկությունը: **Նպաստել** մայրենի լեզուն աշակերտին սիրելի դարձնելուն:	Մաշտոցին **ներկայացնել** որպես Հայ առաքելական եկեղեցու սրբերի շարքին դասվող կերպար: **Արժևորել** այբուբենի թվային արժեքը: «Խոսք իմ որդուն» բանաստեղծության բովանդակությունը **վերաշարադրել** արձակ շարադրանքով: Բանավոր խոսքում **պահպանել** հայերենի հնչյունների ճիշտ արտասանությունը: **Կարևորել** մայրենի լեզվի դերը սեփական հույզերը, ապրումները, մտքերը գրագետ և շրջապատին հասկանալի ձևակերպելու գործում:
	Թեմատիկ գրավոր աշխատանք 1	**Ստուգել** և **գնահատել** ստացած գիտելիքները	

	ԲԱԺԻՆ Ի: ԼԻՆՈՒՄ Է, ՉԻ ԼԻՆՈՒՄ		
5/1	«Ոսկի արտ» հայկական ժողովրդական հեքիաթը: Նախադասություն: Ինչ է հեքիաթը	**Ծանոթացնել** հեքիաթի տեսակներին և ժանրային առանձնահատկություններին: **Ծանոթացնել** հայկական ժողովրդական հեքիաթի առանձնահատկություններին՝ «Ոսկի արտ» հեքիաթի միջոցով: Սովորողի մեջ **ձևավորել** տեքստի ուսումնասիրման, մտքերը տարբեր նախադասություններով արտահայտելու և հիմնականն ու երկրորդականը միմյանցից առանձնացնելու կարողություններ:	**Ներկայացնել** հեքիաթը՝ որպես ժողովրդական բանահյուսության տեսակ: **Տարբերել** հեքիաթի տեսակները (հրաշապատում, կենդանական, իրապատում) և **բացատրել** ժանրային առանձնահատկությունները՝ արտահայտիչ և հասկանալով **ընթերցելով**: Կարողանալ **ըմբռնել** հեքիաթի և իրականության տարբերությունը:
5/2	«Ոսկի արտ» հեքիաթի բովանդակությունը և գաղափարը: Նախադասություն	**Զարգացնել** ընթերցելու, կարդացածը վերարտադրելու, հիմնական գաղափարը մատնանշելու, խմբում աշխատելու կարողություններ՝ հարստացնելով բառապաշարը տարբեր տեսակի նախադասությունների կիրառմամբ:	Տեքստում **զանազանել** գլխավորը երկրորդականից, **կազմել** գրագետ խոսք, **վերարտադրել** լսածն ու կարդացածը՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը: Տեքստից **առանձնացնել** հեքիաթի գլխավոր միտքն արտահայտող նախադասությունը, **ցույց տալ** իրականի և երևակայականի սահմանները:
5/3	«Ոսկի արտ» հեքիաթի կերպարների բնութագիրը: Նախադասություն	**Նպաստել** սովորողների ընթերցելու, հեքիաթի տեքստը հասկանալու, հերոսներին բնութագրելու կարողությունների զարգացմանը՝ հարստացնելով բառապաշարը տարբեր տեսակի նախադասությունների կիրառմամբ:	Բնագիրը **կարդալ** վարժ, անսխալ ու արտահայտիչ: **Վերարտադրել** ընթերցած հեքիաթը՝ բնութագրելով և վերլուծելով կերպարները: Հեքիաթի բովանդակությունը **վերարտադրել** ստեղծագործաբար: **Նկարագրել** և **ներկայացնել** հերոսներին, նրանց արարքներն ու դրդապատճառները:

			Տեքստում **ցույց տալ** դուր եկած նախադասությունները և **հիմնավորել** ընտրությունը:
5/4	«Ոսկի արտ» հեքիաթի վերլուծությունը: Նախադասություն	**Նպաստել** սովորողի բառապաշարի հարստացմանը, կապակցված խոսք կազմելու կարողության զարգացմանը: **Զարգացնել** վերլուծելու կարողություններ: **Ձևավորել** անսխալ գրելու կարողություն:	**Վերարտադրել** «Ոսկի արտ» հեքիաթը՝ բնութագրելով և վերլուծելով կերպարները, **կատարել** համեմատական բնութագիր: **Նկարագրել** և **ներկայացնել** հերոսներին, նրանց արարքների պատճառահետևանքային կապը: Տեքստից ընտրված բառերով **կազմել** նախադասություններ:
5/5	«Ոսկի արտ» հեքիաթի դաստիարակչական նշանակությունը: Նախադասություն	Հեքիաթի ուսումնասիրության հիման վրա **ձևավորել** ազնվություն, բարություն, մեծահոգություն, հարգանք, հանդուրժողականություն, պարտաճանաչություն և այլն: **Ձևավորել** որոշակի վերաբերմունք և արժեքային համակարգ: **Զարգացնել** սովորողների ստեղծարարությունը:	Տեքստից **առանձնացնել** հեքիաթի գլխավոր միտքն արտահայտող նախադասությունը, **ցույց տալ** իրականի և երևակայականի սահմանները: Կարծիք **հայտնել** հեքիաթի մասին: Ստեղծագործության մեջ պատկերած պատմությունների և գործող անձանց մասին **դատել** իրեն հետաքրքրող և կարևոր տեսանկյունից: **Անվանել** տեքստի գեղագիտական արժեքավոր հատվածները: **Գնահատել** հերոսների վարքագիծը և արտահայտել վերաբերմունք: Գործող անձի գործունեությունը **կապել** անհատական կենսափորձի հետ և **հիշել** նման իրավիճակներ: **Գնահատել** հեքիաթի ազդեցությունը անձի արժեհամակարգի ձևավորման վրա:

5/1	«Հայրը և զավակները»: Հաղորդակցում, տեսակները	**Պատկերացում տալ** խորվաթական ժողովրդական հեքիաթների մասին: **Ծանոթացնել** խոսքի հաղորդակցման տեսակներին:	**Կարդալ** արտահայտիչ և սահուն: Հեղինակային և սեփական բառերով համառոտ **պատմել** հեքիաթը: Բանավոր և գրավոր **վերաշարադրել** հեքիաթը տարբեր հերոսների անունից: Կարծիք **հայտնել** հեքիաթի մասին: **Գտնել** հեքիաթի բովանդակությանը համապատասխան մեղեդի, **նկարազարդումներ անել** կամ **ծեփել:** **Կատարել** նորածանոթ բառերի բացատրություն:
5/2	«Հայրը և զավակները» հեքիաթի բովանդակությունը և գաղափարը: Հաղորդակցում, տեսակները	**Խթանել** սովորողի հաղորդակցական կարողությունների զարգացումը: **Բացատրել** հեքիաթի բովանդակությունն ու գաղափարը, հնարավորություն տալ աշակերտին սեփական բառերով արտահայտել լսածն ու հասկացածը:	**Վերարտադրել** «Հայրը և զավակները» հեքիաթը՝ վեր հանելով նրա հիմնական գաղափարը: **Հորինել** հեքիաթ՝ պահպանելով ժանրին բնորոշ առանձնահատկությունները: **Որոշել** խորվաթական ժողովրդական հեքիաթի տարբերակիչ առանձնահատկությունները՝ **համեմատելով** հայկական ժողովրդական հեքիաթների հետ: **Համեմատել** հեքիաթի գրական տեքստը համանման կինոնկարի, ներկայացման կամ մուլտֆիլմի հետ. **նշել** նմանությունները և արբերությունները:
5/3	«Հայրը և զավակները» հեքիաթի կերպարների բնութագիրը: Գրավոր և բանավոր խոսք	**Զարգացնել** գրավոր և բանավոր խոսքը: **Զարգացնել** սովորողի՝ գրական հերոսին բնութագրելու կարողությունները:	**Ներկայացնել** հեքիաթի ժանրային բնութագիրը, **ցույց տալ** լեզվաոճական առանձնահատկությունները: **Նկարագրել** և **ներկայացնել** հերոսներին, նրանց արարքների պատճառահետևանքային կապը: **Մասնակցել** հեքիաթի բեմադրման աշխատանքներին:

5/4	Հեքիաթի վերլուծությունը: Նախադասության տեսակները՝ ըստ հաղորդակցության և հնչերանգի	**Զարգացնել** սովորողների ստեղծարարությունը: **Ձևավորել** կերպարը վերլուծելու կարողություններ: **Նպաստել** նախադասության տեսակներն ըստ հաղորդակցության և հնչերանգի ընկալելուն:	**Վերարտադրել** հեքիաթը՝ բնութագրելով և վերլուծելով կերպարները, հերոսների համեմատական բնութագիր **կատարել**: **Ճանաչել** ու **բացահայտել** բնագրում առկա նախադասության տեսակները՝ ըստ հաղորդակցության և հնչերանգի: Տեքստում **տարբերել** նախադասությունները՝ ըստ հաղորդակցության և հնչերանգի:
5/5	«Հայրը և զավակները» հեքիաթի դաստիարակչական նշանակությունը: Նախադասության տեսակները՝ ըստ հաղորդակցության և հնչերանգի (ուսուցանող գրավոր)	**Ձևավորել** երախտագետ ու լավությունը գնահատող անձ և քաղաքացի: **Զարգացնել** սովորողների ընթերցելու, հեքիաթի տեքստը հասկանալու կարողություններ: **Նպաստել** նախադասության տեսակներն ըստ հաղորդակցության և հնչերանգի ընկալելուն:	**Նկարագրել** հերոսներին և **ներկայացնել** նրանց արարքներն ու դրդապատճառները: **Ճշտել** սեփական վերաբերմունքը հերոսների նկատմամբ (հիանում է, մեղադրում է, արդարացնում է): **Հիմնավորել** կարծիք՝ համապատասխան բառերի, արտահայտությունների, հատվածների մեջբերումով: Հեքիաթի բովանդակությունը **վերարտադրել** ստեղծագործաբար՝ կիրառելով նախադասության տարբեր տեսակներ՝ ըստ հաղորդակցության և հնչերանգի: **Մատնանշել** տեքստի նախադասության տեսակներն ըստ հնչերանգի, ճիշտ **կետադրել** նախադասությունները: **Կազմել** կապակցված խոսք՝ կիրառելով համապատասխան լեզվաքերականական նյութը:
2	Թեմատիկ կրկնություն	**Ամրապնդել** գիտելիքներն ու կարողությունները, **զարգացնել** դիրքորոշում դրսևորելու հմտությունները:	

1/1	***Թեմատիկ գրավոր աշխատանք 2***		
6/1	Գրիմ եղբայրներ, «Անտառի տնակը» հեքիաթը: **Նախադասության տեսակները**՝ ըստ կազմության	**Ծանոթացնել** հեղինակային հեքիաթի առանձնահատկություններին: **Նպաստել** նախադասության տեսակներն ըստ կազմության ընկալելուն:	**Բացատրել** հեղինակային հեքիաթի տարբերակիչ առանձնահատկությունները: Արտահայտիչ և հասկանալով **ընթերցել** «Անտառի տնակը» հեքիաթը: Հեքիաթը **վերարտադրել** պարզ նախադասություններով: Պատմելիս **կիրառել** պարզ ընդարձակ նախադասություններ: Տեքստում **ճանաչել** պարզ և բարդ նախադասությունները, **կազմել** համապատասխան նախադասություններ:
6/2	«Անտառի տնակը» հեքիաթի բովանդակությունը: Պարզ և բարդ նախադասություն	**Նպաստել** հեքիաթի բովանդակությունն ընկալելուն: **Ծանոթացնել** պարզ և բարդ նախադասությունների կառուցվածքին:	«Անտառի տնակը» հեքիաթի բովանդակությունը **վերաշարադրել** ստեղծագործաբար: **Վերաշարադրել** հեքիաթի բովանդակությունը՝ ըստ պլանի և ստեղծագործաբար:
6/3	«Անտառի տնակը» հեքիաթի գաղափարը: Պարզ համառոտ և -պարզ ընդարձակ նախադասություններ	**Նպաստել** հեքիաթի արտահայտած գաղափարը հասկանալուն: **Օգնել** հասկանալու պարզ և բարդ նախադասությունների կառուցվածքային տարբերությունները:	**Ներկայացնել** հեքիաթի գաղափարը սեփական բառերով: Բնագրում **գտնել** գլխավոր գաղափարն արտահայտող նախադասությունը:

6/4	«Անտառի տնակը» հեքիաթի կերպարները: Նախադասություն-բառ-ինչյուն (պատմողական հարցական, հրամայական, բացականչական նախադասություններ) (ուսուցանող գրավոր):	**Ծանոթացնել** պատմողական, հարցական, հրամայական, բացականչական նախադասությունների քերականական առանձնահատկություններին:	**Բնութագրել** հեքիաթի հերոսներին՝ ըստ նրանց արարքների: **Համեմատել** տարբեր հեքիաթների տեքստեր, հերոսներին, **նշել** նրանց տարբերությունները, նմանությունները: Բնագրում **գտնել** պատմողական, հարցական, հրամայական, բացականչական նախադասություններ, ինքնուրույն **կազմել** համապատասխան նախադասություններ և **կետադրել**:
6/5	«Անտառի տնակը» հեքիաթի դաստիարակչական նշանակությունը: Հնչյունաբանություն: Հայերենի հնչյունները: Ձայնավոր հնչյուններ	Ուսումնասիրված հեքիաթից ելնելով՝ **ձևավորել** սովորողի արժեքային համակարգը: **Ծանոթացնել** հայերենի ձայնավոր հնչյուններին:	Հեքիաթում **տարբերել** և **առանձնացնել** գլխավոր մտքերը երկրորդականից, **վերաշարադրել** համապատասխան տրամաբանական հերթականությամբ՝ ըստ մտադրության և նախօրոք կազմած պլանի: Հաղորդելիք նյութի համար **ընտրել** համապատասխան երաժշտություն, կտավի վերատպություն, քանդակ, մուլտֆիլմից հատվածներ և **բացատրել** ընտրության շարժառիթը: **Ձևակերպել** հեքիաթի եզրակացությունը մեկ նախադասությամբ: Տեքստի ընտրված հատվածում գտնել ձայնավոր հնչյունները և **հիմնավորել:**
6/6	«Անտառի տնակը» հեքիաթի ամփոփումը	**Կատարել** թեմայի ընդհանրացում և ամրապնդում**:**	Արտահայտիչ, վարժ **կարդալ** տեքստերը, **պահպանել** հայերենին հատուկ արտասանությունը, շեշտադրումը: **Վերարտադրել** դեպքերի հաջորդական ընթացքը՝ պահպանելով տեքստի հիմնական բովանդակությունը: Պատմելիս **կիրառել** յուրացրած ուսումնական նյութերի լեզվաքերականական առանձնահատկությունները:

			Բացատրել ձայնավորների արտասանական առանձնահատկությունները:
2	Նախագծային աշխատանքի ընտրություն և պարզաբանում	**Ձևավորել** և **զարգացնել** հետազոտական աշխատանքի կարողություններ և հմտություններ:	**Ձևակերպել** հետազոտության հարցը, նպատակը, հիմնախնդիրը: **Պլանավորել** և **գրառել** կատարելիք քայլաշարը: **Գտնել** և **առանձնացնել** համապատասխան աղբյուրներ, **հավաքել** հետազոտությանն առնչվող փաստեր: **Նշել** օգտագործված աղբյուրները: **Հավաքել** թեմային համապատասխան անհրաժեշտ նյութեր, տեղեկություններ դպրոցական հանրագիտարաններից, ուսուցչի ցուցումով որոշակի կայքէջերից (տարիքին համապատասխան): Գտած տեղեկությունը **վերաշարադրել** տարբեր ձևերով՝ հակիրճ կամ մանրամասն, **պատասխանել** հետազոտության համար կազմած հարցին, **հավելել** սեփական հակիրճ դիտարկումները:
5/1	Աննա Ադամյան, «Տառի, հեռախոսի ու համակարգչի վեճը»: Բաղաձայն հնչյուններ	**Ծանոթացնել** ժամանակակից հեղինակների ստեղծած հեքիաթի առանձնահատկություններին: Մատչելի **բացատրել** ստեղծագործության միտքն ու գաղափարը, հնարավորություն տալ աշակերտին սեփական բառերով **արտահայտելու** լսածն ու հասկացածը: **Ընկալելի դարձնել** ձայնավորների և բաղաձայնների տարբերությունները:	**Կարդալ** հասկանալով և **կազմել** հեքիաթում պատմվող դեպքերի պլան: Հեղինակային և սեփական բառապաշարով պատմել հեքիաթը: Կարողանալ **ցույց տալ** իրականի և երևակայականի սահմանները: Տեքստում **գտնե**լ բաղաձայն հնչյունները և տեսակավորել աղյուսակում:

5/2	«Տառի, հեռախոսի ու համակարգչի վեճը» հեքիաթի բովանդակությունը և գաղափարը: Բաղաձայն հնչյունների տեսակները	**Զարգացնել** սովորողի ստեղծագործության բովանդակությունը սեփական և հեղինակային բառապաշարով ներկայացնելու կարողությունները և հմտությունները: **Ծանոթացնել** բաղաձայն հնչյունների տեսակներին:	**Վերաշարադրել** հեքիաթի բովանդակությունը ըստ պլանի և ստեղծագործաբար: Տեքստից **առանձնացնել** հեքիաթի գլխավոր միտքն արտահայտող նախադասությունը: **Մատնանշել** բաղաձայն հնչյուններն ըստ տեսակի: **Կազմե**լ կապակցված խոսք՝ կիրառելով համապատասխան լեզվաքերականական նյութ: Հայերենի հնչյունական համակարգը **համեմատել** օտար լեզուների հնչյունական համակարգի հետ:
5/3	«Տառի, հեռախոսի ու համակարգչի վեճը» հեքիաթի կերպարների բնութագիրը: Բաղաձայն հնչյունների տեսակները	**Նպաստել** սովորողի բառապաշարը հարստացնելուն, զարգացնել կապակցված խոսք կազմելու կարողությունները: **Ձևավորել** անսխալ գրելու ու կարդալու կարողություններ:	**Թվարկել** հեքիաթի հերոսներին: Վերաբերմունք **արտահայտել** յուրաքանչյուրի վերաբերյալ: Տեքստից ընտրած փաստերով **հիմնավորել** սեփական կանխատեսումը: Տեքստում **գտնել** գրական կերպարի արտաքինը, բնավորությունը ներկայացնող հատվածները, արարքների դրդապատճառները բացահայտող խոսքային միջոցները, հիմնվելով դրանց վրա՝ վերլուծել: **Բնութագրել** հեքիաթի հերոսներին՝ ըստ նրանց արարքների: **Համեմատել** տարբեր հեքիաթների տեքստեր, հերոսներին, **նշել** նրանց տարբերությունները, նմանությունները, **ձևակերպել** եզրակացություն:

5/4	«Տառի, հեռախոսի ու համակարգչի վեճը» հեքիաթի վերլուծությունը: Բաղաձայն հնչյունների տեսակները	**Զարգացնել** տեքստը վերլուծելու կարողություններ: **Խթանել** սովորողի հաղորդակցական կարողությունների զարգացումը: **Ձևավորել** անսխալ գրելու ու կարդալու կարողություններ:	Արտահայտիչ, վարժ **կարդալ** տեքստը, **պահպանել** հայերենին հատուկ արտասանությունը, շեշտադրումը, **վերարտադրել** դեպքերի հաջորդական ընթացքը՝ պահպանելով տեքստի բովանդակությունը: **Վերլուծել** կերպարները՝ առանձնացնելով սիրելի հերոսին: **Արդարացնել** կամ **մեղադրել** կերպարներից յուրաքանչյուրին:
5/5	«Տառի, հեռախոսի ու համակարգչի վեճը» հեքիաթի դաստիարակչական նշանակությունը: Բաղաձայն հնչյունների տեսակները (ուսուցանող գրավոր)	**Ձևավորե**լ որոշակի վերաբերմունք և արժեքային համակարգ: **Ձևավորել** անսխալ գրելու ու կարդալու կարողություններ:	**Ընկալել** հեքիաթի դաստիարակչական նշանակությունը անձի ձևավորման գործում: **Առանձնացնել** հերոսներին և նրանց արարքները բնութագրող բառերն ու արտահայտությունները: Բանավոր կամ գրավոր **արտահայտել** կարծիք հերոսների վարքագծի կամ դեպքերի կապակցությամբ: **Տարբերել** բաղաձայն հնչյունների տեսակները, դրանք **ճանաչել** տեքստում:
1/1	Ընտրած որևէ հեքիաթի քննարկում	**Նպաստել** սովորողի բառապաշարը հարստացնելուն, կապակցված խոսք կազմելու կարողություններ, որոշակի վերաբերմունք և արժեքային համակարգ **ձևավորելուն**: **Ձևավորել** քննադատական մտածողություն:	**Կարդալ** առոգանությամբ՝ պահպանելով հայերենին բնորոշ արտասանությունը, ուղղախոսությունը: **Կարդալ** ընտրովի հատվածներ՝ **հիմնավորելով** ընտրությունը: Սեփական վերաբերմունք **արտահայտել** ստեղծագործության վերաբերյալ: **Ներկայացնել** հեղինակի հույզերը իր հերոսների նկատմամբ: **Հորինել** հեքիաթ՝ հեքիաթին բնորոշ առանձնահատկությունները հաշվի առնելով:

1/1	***Թեմատիկ գրավոր աշխատանք 3***	**Ամփոփել** և **ընդհանրացնել** գիտելիքները:	
2	Կազմել որևէ հեքիաթի բեմագիր	**Զարգացնել** ստեղծարարական կարողունակություններ:	
2	Հեքիաթի բեմադրում	**Զարգացնել** դերասանական հմտություններ:	
2	Թեմատիկ կրկնություն	**Ամրապնդել** և **ընդհանրացնել** գիտելիքները:	

	ԲԱԺԻՆ II. ԱՌԱԿՍ ԻՆՉ ԿՑՈՒՑԱՆԵ		
4/1	Եզոպոս, «Եղջերուն և խաղողը» առակը: Ինչ է առակը	**Ուսուցանել** առակի ժանրային առանձնահատկությունները: **Ծանոթացնել** արձակ և չափածո առակների տեսակներին:	**Մեկնաբանել** առակի ժանրային բնութագիրը և ձևավորման լեզվական առանձնահատկությունները: **Մեկնաբանել** առակի կառուցվածքային առանձնահատկությունները: **Ներկայացնել** առակի տեսակները և կառուցվածքը: **Բացատրել** տվյալ առակին բնորոշ այլաբանությունը և բարոյախոսությունը: **Տարբերել** արձակ և չափածո առակները, նրանց բնորոշ առանձնահատկությունները:
4/2	«Եղջերուն և խաղողը» առակի բովանդակությունը և գաղափարը: Հնչյուն և տառ	**Ծանոթացնել** առակի բովանդակությանը և նրան բնորոշ լեզվաոճական առանձնահատկություններին: **Բացատրել** հնչյուն և տառ հասկացությունների տարբերությունները:	**Վերարտադրել** ընթերցած առակի բովանդակությունը և **ընկալել** առակին բնորոշ լեզվաոճական հնարները: **Նկարագրել** և **բնութագրել** առակի հերոսներին: Ինքնուրույն տեսակետ **հայտնել** ընթերցած առակի վերաբերյալ: **Վերարտադրել** ընթերցած առակի բովանդակությունը և **ընկալել** նրա բարոյախոսական նշանակությունը: **Զանազանել** հնչյուն և տառ եզրույթները:
4/3	«Եղջերուն և խաղողը» առակի հերոսների բնութագիրը և բարոյախոսությունը: Հնչյուն և տառ	**Ընկալել տալ** առակի այլաբանությունը՝ որպես գրական հնարք: **Ծանոթացնել** հնչյուն և բառ հասկացությունների գրության և արտահայտության առանձնահատկություններին:	**Բացատրել** «Եղջերուն և խաղողը» առակի բարոյախոսական նշանակությունը, նրան բնորոշ լեզվաոճական հնարները: **Ճանաչել** հայ և օտարազգի նշանավոր առակագիրներին և **համեմատել** նրանց ստեղծագործությունները:

			Հորինել առակ՝ հաշվի առնելով ժանրային առանձնահատկությունները: Տեքստում **գտնել** և **ապացուցել** տառի և հնչյունի գրության և արտասանության տարբերությունը:
4/4	«Եղջերուն և խաղողը» առակի այլաբանությունը և դաստիարակչական նշանակությունը: Հնչյուն և տառ	**Ձևավորել** բարձր արժեհամակարգով ապրելու գիտակցում:	**Ընկալել** առակի այլաբանությունը և դաստիարակչական նշանակությունը: **Կատարել** առակի լեզվաոճական և բովանդակային վերլուծություն**:** **Մասնակցել** առակի շուրջ ծավալված մտքերի փոխանակմանը՝ արտահայտելով դիրքորոշում: **Արտահայտել** զգացմունքներ, ապրումներ և **փորձել բացատրել** դրանք. (զարմացա, որովհետև…, զայրացա, քանի որ …): Հաղորդակցվելիս **դրսևորել** բարեկիրթ խոսք և վարքագիծ:
4/1	Վարդան Այգեկցի, «Բարին ու չարը» առակը: Բառ և վանկ	**Նպաստել** առակի ընկալմանը: **Ձևավորել** բառի վանկային և հնչունային կառուցվածքը ճանաչելու ունակություն:	**Բացահայտել** առակի վերնագրի և բովանդակության կապը: **Տարբերակել** տեքստում հեղինակի և գործող անձանց խոսքերը, երկխոսությունը և մենախոսությունը: **Բացատրել** վանկի դերը գրավոր խոսքում:

4/2	«Բարին ու չարը» առակի բովանդակությունը և գաղափարը: Միավանկ բառեր	Ծանոթացնել «Բարին ու չարը» առակի բովանդակությանը: **Նպաստել** միավանկ բառերը բազմավանկից տարբերելուն:	Տեքստում ինքնուրույն **գտնել** բառեր և արտահայտություններ, որոնք հեղինակը կիրառել է գործող անձանց, փաստերն ու իրադարձությունները նկարագրելու համար: **Պատմել** առակում ներկայացված պատմությունը հերոսներից մեկի բերանով: Տեքստն ավելի լավ գիտակցելու նպատակով հարցեր **առաջադրել** կարդացածի հետ կապված: **Կողմնորոշվել** տեքստի իմաստային բովանդակության մեջ և կարողանալ **պատասխանել** դասագրքում զետեղված հարցերին: Տեքստում ինքնուրույն **գտնել** բառեր և արտահայտություններ, որոնք հեղինակը կիրառել է գործող անձանց, փաստերն ու իրադարձությունները նկարագրելու համար: Տեքստից ընտրված հատվածում **ցույց տալ** միավանկ բառերը:
4/3	«Բարին ու չարը» առակի կերպարները և բարոյախոսությունը: Բազմավանկ բառեր	**Մշակել** առակի հենակետային բառերը գտնելու կարողություն**:** **Ծանոթացնել** բազմավանկ բառերի առանձնահատկություններին:	Տեքստից **առանձնացնել** հերոսներին բնութագրող դեպքերը, բնության պատկերները նկարագրող բառերն ու արտահայտությունները: **Որոշել** առակի գործող անձանց խոսքի առանձնահատկությունները: **Հակադրել** առակի հերոսների արարքները այլ առակների տարբեր հերոսների արարքների հետ: **Բացահայտել** նրանց վերաբերմունքը շրջապատի նկատմամբ:

			Որոշել հերոսների արարքների դրդապատճառները, **դրսևորել** վերաբերմունք դրանց նկատմամբ կամ **գնահատել**՝ ուսուցչի ուղղորդմամբ: **Գնահատել** հերոսների վարքագիծը և **արտահայտել** սեփական վերաբերմունքը: Տեքստում **գտնել** և **ցույց տալ** բազմավանկ բառեր:
4/4	«Բարին ու չարը» առակի այլաբանությունը և դաստիարակչական նշանակությունը: Բաց և փակ վանկեր (ուսուցանող գրավոր)	**Նպաստել** տվյալ առակի բարոյախոսական ու դաստիարակչական նշանակությունն ընկալելուն: **Ծանոթացնել** բաց և փակ վանկերի կազմությանը, բառերի վանկատման սկզբունքներին: **Ուսուցանել** վանկը և դրանով պայմանավորված շեշտադրությունն ու տողադարձը: **Ամրապնդել** վանկի մասին ունեցած գիտելիքները:	**Վերարտադրել** ընթերցած առակի բովանդակությունը և **ընկալել** նրա այլաբանությունը: **Բացահայտել** առակի և իրականության տարբերությունը: Գործող անձի գործունեությունը **կապել** անհատական կենսափորձի հետ և **հիշել** նման իրավիճակներ: Տեքստն ավելի լավ գիտակցելու նպատակով՝ հարցեր առաջադրել կարդացածի հետ կապված**:** **Բեմադրել** առակը՝ բեմագիր գրելով: Դերերը կատարելու համար համապատասխանաբար **օգտագործել** օժանդակ միջոցները (ժեստ, դիմախաղ, բնորոշ շարժում, որոշակի արտասանություն, հարմարվածության կամ այլ հատկանիշներ և զգացմունքներ արտահայտող ակնարկներ): **Բացատրել** վանկի ոճական արժեքը և նշանակությունը: **Մեկնաբանել** վանկարար հնչյունի դերը վանկատման մեջ: **Տարբերել** բաց, փակ վանկերը և դրանք գործնականում կիրառելու հմտություն ձեռք բերել վարժությունների միջոցով: **Տարբերել** վանկը բառից:

1/1	**Գործնական աշխատանք 1**	**Զարգացնել** գործնական աշխատանք կատարելու հմտություններ:	
4/1	Հովհաննես Շիրազ, «Հավերժական վեճ» առակը: Բառային շեշտ	**Ձևավորել** արտահայտիչ ընթերցելու կարողություն՝ հաշվի առնելով հայերենի շեշտադրության առանձնահատկությունները: **Ծանոթացնել** հայերենի շեշտի վերջնավանկային դիրքին:	**Ներկայացնել** չափածո առակի առանձնահատկությունները: **Պարզաբանել՝** ինչով է տվյալ առակն իր համար հետաքրքիր: **Մատնացույց անել՝** ինչն է հավանել առակում՝ պատմությունը, գործող «դեմքի» վարքը, բնության նկարագիրը, երկխոսությունները և այլն: Սեփական կարծիքի հիմնավորման համար **կիրառել** համապատասխան տողեր կարդացած տեքստից և օրինակներ անձնական փորձից: Բանավոր և գրավոր խոսքում ճիշտ շեշտադրություն **կատարել՝** կիրառելով շեշտադրության ընդունված կանոնները:
4/2	«Հավերժական վեճ» առակի բովանդակությունը և գաղափարը: Շեշտ	**Ձևավորել** հասկանալով ընթերցելու, առակի ժանրին բնորոշ առանձնահատկություններն ընկալելու կարողություններ: **Նպաստել** առակի բովանդակությունը հասկանալուն: Ընկալելի **դարձնել** շեշտի ուղղախոսական արժեքը: **Զարգացնել** լեզվաքերականական նյութը կապակցված խոսքի մեջ կիրառելու կարողությունը:	**Վերարտադրել** առակի բովանդակությունը արձակ շարադրանքով և **վեր հանել** արտահայտած գաղափարը: Տարբեր ձևերով **արտահայտել** վերաբերմունքը (օրինակ՝ համառոտ բնութագիր, մեկնաբանություն հերոսի վարքի մասին ...) գործող դեմքի նկատմամբ: **Ստեղծել** առակի մեկ այլ ավարտով գրավոր տարբերակ: **Պարզաբանել** արձակ և չափածո առակների լեզվաոճական առանձնահատկությունները: Առակի իմաստը հաղորդելիս՝ ստեղծագործաբար **օգտագործել** հեղինակային բառապաշարը և գեղարվեստական միջոցները: **Բացատրել** շեշտի ուղղախոսական արժեքը:

4/3	Բնութագրել «Հավերժական վեճ» առակի հերոսներին: Բառային շեշտ	**Ծանոթացնել** «Հավերժական վեճ» առակի գաղափարական բովանդակությունը: **Նպաստել** սովորողի բառապաշարը հարստացնելուն, առակի այլաբանական հիմքի շուրջ որոշակի վերաբերմունք ձևավորելուն: **Նպաստել** շեշտի ուղղախոսական արժեքը հասկանալուն:	**Ներկայացնել** վերնագրի և տեքստի իմաստային փոխադարձ կապը: **Անվանել** վերնագրի այլընտրանքային տարբերակներ: **Անվանել** տեքստի թեման, դատողություններ անել թեմայի շուրջ: Առարկաների, երևույթների անվանման համար **տարբերել** և **օգտագործել** նրանց արտաքին և իմաստային բնութագրիչներ: Տեքստից **առանձնացնել** առակի հերոսներին բնութագրող դեպքերը, բնության պատկերները նկարագրող բառերն ու արտահայտությունները**:** **Մեկնաբանել** հայերենի շեշտի վերջնավանկային դիրքը և **ներկայացնել** նրա շեղումները բանավոր և գրավոր խոսքում: **Բացատրել** շեշտի ուղղախոսական արժեքը, և **ընկալել** բառերի ճիշտ շեշտադրության կարևորությունը:
4/4	«Հավերժական վեճ» առակի այլաբանությունը և դաստիարակչական նշանակությունը: Շեշտի կանոններից շեղումներ (ուսուցանող գրավոր)	**Ձևավորել** առակի խրատական-դաստիարակիչ դերը ըմբռնելու, առակը վերլուծելու, սեփական դիրքորոշում ձևավորելու, բարոյական դասեր քաղելու կարողություններ: Մատչելի **ուսուցանել** հայերենի շեշտի վերջնավանկային դիրքի շեղումներն ընդունված օրինաչափությունից (հարադրավոր բառեր, օտար բառեր, դասական թվականներ, վերաբերականներ և այլն):	**Մեկնաբանել** առակի դաստիարակչական նշանակությունը: **Նկարել** առակը՝ բովանդակությանը համապատասխան: **Գտնել** երաժշտություն՝ տեքստի ռիթմին համահունչ: Առակի տեքստը **կարդալ** արտահայտիչ և հասկանալով. **կազմե**լ առակից սովորած բառերի բացատրական բառարան: **Մատնանշել** առակի տեքստի կառուցվածքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ, խրատաբանություն:

		Ծանոթացնել հայերենի շեշտի վերջնավանկային դիրքի և դրա շեղումների մասին:	**Առանձնացնել** առակի գլխավոր միտքը և ընթերցողին տրվող խրատը: **Հավաքել** տեղեկություններ առակում նշվող առարկաների, կենդանիների, բույսերի, թփերի, մետաղների, երևույթների մասին և **ներկայացնել:** **Մեկնաբանել** հայերենի շեշտի վերջնավանկային դիրքը և **ներկայացնել** նրա շեղումները բանավոր և գրավոր խոսքում:
1/1	***Թեմատիկ գրավոր աշխատանք 4***	**Ստուգել** և **գնահատել** ստացած գիտելիքները:	
4/1	«Հայրն ու որդին» ժողովրդական առակը: Բառի կազմությունը	**Նպաստել** առակի խրատական-դաստիարակիչ դերը ըմբռնելուն, առակը վերլուծելու, սեփական դիրքորոշում ձևավորելու, բարոյական դասեր քաղելու կարողությունները **զարգացնելուն**: **Ծանոթացնել** բառի բաղադրիչներին (արմատ, ածանց, հոդակապ):	Արտահայտիչ և հասկանալով **կարդալ** «Հայրն ու որդին» ժողովրդական առակը, սովորած բառերը **գործածել** ստեղծագործաբար: **Թվարկել** առակի հերոսներին: **Գնահատել** առակի բառապաշարը, հիմնավորել լեզվի պարզությունը: **Բացատրել** բառերի կազմությունը՝ բերելով համապատասխան օրինակներ: **Բացատրել՝** առակում ժամանակաշրջանը, միջավայրը ինչ կերպ են ազդում հերոսների հոգեբանության վրա:
4/2	«Հայրն ու որդին» ժողովրդական առակի բովանդակությունը և գաղափարը: Պարզ և բարդ բառեր	**Զարգացնել** մարդուն ու մարդկայինը տեսնելու և ընտանիքի միասնությունը գնահատելու կարողություններ: Մատչելի **բացատրել** պարզ և բարդ բառերի կազմության առանձնահատկությունները:	Առակի վերնագիրը **կապել** բովանդակության հետ: Առակի բովանդակությունը **հաղորդել** ինչպես սեփական բառերով, այնպես էլ նոր սովորած բառային միավորների օգտագործմամբ: **Բնութագրե**լ առակի հերոսներին, **համեմատել** և **մեկնաբանել** նրանց արարքները:

			Մեկնաբանել հերոսների արարքների դրդապատճառները: **Ներկայացնել** հոր և որդու համեմատական բնութագիրը: Տղայի կերպարի միջոցով **ստանալ** և **արմատավորել** ծնողասիրության, ընտանիքի միասնության գաղափարը: Առակում **գտնել** կազմությամբ պարզ և բարդ բառերը և **գործածել** գրավոր խոսքում:
4/3	«Հայրն ու որդին» ժողովրդական առակի կերպարները և այլաբանությունը: Հոդակապ	**Զարգացնել** առակի վերաբերյալ կարծիք հայտնելու, վերլուծական խոսք ասելու և գրելու կարողություններ: **Նպաստել** բառակազմության մեջ հոդակապի դերն ու նշանակությունը ընկալելուն:	**Առանձնացնել** առակի գլխավոր միտքը և ընթերցողին տրվող խրատը: **Արտահայտել** կարծիք առակի գաղափարական բովանդակության վերաբերյալ: **Վերլուծել** առակը, ներկայացնել հիմնական գաղափարը: Տեքստում **գտնել** հոդակապավոր բարդ բառեր և բացատրել կազմությունը:
4/4	Հայրն ու որդին» ժողովրդական առակի դաստիարակչական նշանակությունը: Հոդակապավոր և անհոդակապ բարդ բառեր (ուսուցանող գրավոր)	**Նպաստել** ընթերցանության շնորհիվ յուրացված նոր բառապաշարը սեփական խոսքում գործածելու կարողություն ձևավորելուն: **Ծանոթացնել** հոդակապով և անհոդակապ բարդ բառերի կառուցվածքին: **Զարգացնել** բառի բաղադրիչները ճանաչելու և անսխալ գրելու կարողություններ:	**Ներկայացնել** գործող անձանց փոխհարաբերությունները (ով ում է օգնում, սիրում, ատում, անտարբեր է, աննրբանկատ...): **Անվանել** առակի հերոսների գործողությունների դրդապատճառները (ինչո՞ւ այսպես վարվեց) և **գնահատել** նրանց վարքագիծը: **Արմատավորել** մարդուն սիրելու, օգնելու, խնամելու ու խնայելու կարողություններ: **Հորինել** առակ՝ դրսևորելով սեփական դիրքորոշումը և **մեկնաբանել** ուսումնասիրած առակներից քաղած բարոյական դասերը: Տեքստում **ճանաչել** կազմությամբ հոդակապով և անհոդա-

			կապ բարդ բառերը, բառակազմական վերլուծություն **կատարել**:
4/1	Իվան Կռիլով, «Որսորդ առյուծը» առակը: Ածանց	**Նպաստել** չափածո առակի իմաստը ընկալելուն: **Ճանաչել տալ** հայ և օտարազգի նշանավոր առակագիրներին: **Ծանոթացնե**լ ածանցի տեսակներին և բառակազմական նշանակությանը:	**Թվարկե**լ առակի հերոսներին, **համեմատել**, **գտնել** ընդհանրություններ և տարբերություններ: **Գտնել** այն բառերն ու արտահայտությունները, որոնք ստեղծագործության մեջ տրամադրվածություն են ստեղծում: **Համեմատել** հերոսների արարքները, սեփական վերաբերմունքն **արտահայտել** դրանց վերաբերյալ: Տեքստում **գտնել** ածանց ունեցող բառերը և **առանձնացնել** ածանցները: Օտարազգի գրողների առակները **համեմատել** մեր առակների հետ:
4/2	«Որսորդ առյուծը» առակի բովանդակությունը և գաղափարը: Ածանցավոր բառեր	**Զարգացնել** տեքստի թեման, բովանդակությունը և գաղափարը տարբերելու կարողություններ: **Նպաստել** ածանցավոր բառերի կազմությունը յուրացնելուն: **Նպաստել** լեզվի բառապաշարի հարստացման գործում ածանցավոր բառերի նշանակությունն ընկալելուն:	Առակը **պատմել** արձակ՝ հավատարիմ մնալով հեղինակային բառապաշարին: **Ամրապնդել** ընկերասիրության, հավատարմության, ազնվության, երախտագիտության պատկերացումները՝ առակի բովանդակությունից ելնելով: **Համեմատել** հերոսների արարքները, առանձնացնել լավն ու վատը, մերժելին և ընդունելին: **Ստեղծել** առակի բովանդակությանը համապատասխան շարադրանք կամ առակի որևէ դրվագին համապատասխան նկար:

			Գնահատել առակի բառապաշարը, հիմնավորել լեզվի պարզությունը: Բառերի բառակազմական վերլուծություն **կատարել** (**գտնել** բառի բաղադրիչները՝ արմատ, ածանց, հոդակապ և այլն):
4/3	«Որսորդ առյուծը» առակի կերպարները և այլաբանությունը: Նախածանցներ	**Ընկալել տալ** այլաբանությունը որպես գրական հնարք: **Նպաստել** նախածանցների բառակազմիչ նշանակությունն ընկալելուն:	**Թվարկե**լ առակի հերոսներին, **համեմատել**, **գտնել** ընդհանրություններ և տարբերություններ: **Գտնել** այն բառերն ու արտահայտությունները, որոնք ստեղծագործության մեջ տրամադրվածություն են ստեղծում: **Համեմատել** հերոսների արարքները, սեփական վերաբերմունքն **արտահայտել** նրանց արարքների վերաբերյալ: **Վերլուծել** կերպարները՝ մեկնաբանելով նրանց արարքների շարժառիթները, հույզերն ու ապրումները: Բառակազմական վարժություններ **կատարել** (**գտնել** նույն արմատով և ածանցով բառեր, **կազմել** բաղադրյալ բառեր և այլն):
4/4	«Որսորդ առյուծը» առակի դաստիարակչական նշանակությունը: Վերջածանցներ	**Ձևավորել** բարձր արժեհամակարգով ապրելու գիտակցում: **Նպաստել** վերջածանցների բառակազմիչ նշանակությունն ընկալելուն:	**Ուսումնասիրել** առակը, ստացած տեղեկությունը **մշակել**, տվյալները **վերլուծել** և եզրահանգումներ **անել**: **Գնահատել** առյուծի վարքագիծը և **արտահայտե**լ վերաբերմունք: **Մասնակցել** առակի շուրջ ծավալած մտքերի փոխանակությանը և **արտահայտել** դիրքորոշում: Առակի հերոսների վերաբերյալ **արտահայտել** զգացմունքներ (ապրումներ, փորձել **բացատրել** դրանք (զարմացա, որովհետև…, զայրացա, քանի որ …):

			Տեքստում **գտնել** ածանցավոր բառերը և **գործածել** բանավոր կամ գրավոր խոսքում:
1/1	Այլ հեղինակների առակների ընթերցում և դասարանական քննարկում	**Ամրապնդել** ստացած գիտելիքները և **զարգացնել** հաղորդակցական հմտություններ:	
4/1	«Տունը» առակը: Հնչյունափոխություն	**Նպաստել** հասկանալու «Տունը» առակի իմաստը: **Նպաստել** հնչյունափոխության միջոցով բառի փոփոխությունները ճանաչելուն և **ձևավորել** անսխալ գրելու կարողություններ:	**Կարդալ** և մեկնաբանել առակը**:** **Ամրապնդել** պատկերացումը առակում պատկերված հայրենիքի, հայրենի եզերքների, մարդկային ապրումի և հույզի, գեղեցիկի մասին: **Գնահատել** առակի բառապաշարը, հիմնավորել լեզվի պարզությունը: Բառերում **ճանաչել** շեշտի տեղափոխության հետևանքով կատարվող հնչյունափոխությունը: **Կազմել** կապակցված խոսք՝ կիրառելով յուրացրած լեզվաքերականական նյութը:
4/2	«Տունը» առակի բովանդակությունը: Է(ե) ձայնավորի հնչյունափոխությունը	**Հասկանալի դարձնել** առակի բովանդակությունը: **Նպաստել** ընկալելու է(ե) ձայնավորի հնչյունափոխությունը:	Առակի բովանդակությունը **վերաշարադրել** չափածոյով՝ հավատարիմ մնալով հեղինակի բառապաշարին: **Հաղորդել** առակի բովանդակությունը ինչպես սեփական բառերով, այնպես էլ նոր սովորած բառային միավորների օգտագործմամբ: **Արտահայտել** կարծիք առակի գաղափարական բովանդակության վերաբերյալ: **Վերլուծել** առակը՝ ներկայացնելով հիմնական գաղափարը:

			Ստեղծել առակի բովանդակությանը համապատասխան շարադրանք կամ առակի որևէ դրվագին համապատասխան նկար: Տեքստում **գտնել** է(ե) ձայնավորի հնչյունափոխության կանոններին վերաբերող բառեր:
4/3	«Տունը» հայկական ժողովրդական առակի գաղափարը և այլաբանությունը: Է(ե) ձայնավորի հնչյունափոխությունը	**Զարգացնել** առակի գաղափարը և այլաբանությունը ինքնուրույն ձևակերպելու կարողություններ: **Նպաստել** ընկալելու է(ե) ձայնավորի հնչյունափոխությունը:	**Մեկնաբանել** «Տունը» առակում դեպքերի կատարման մոտավոր ժամանակաշրջանը, պատմական վայրը: **Ներկայացնել** առակի գաղափարական բովանդակությունը սեփական ընկալմամբ: **Բնութագրել** առակի կերպարներին: **Բնութագրել** տղային առակի սկզբում և վերջում: **Գնահատել** տղայի արարքը: Տեքստում **գտնել** է(ե) ձայնավորի հնչյունափոխության հետ կապված բառեր և **վերականգնել** անհնչյունափոխ ձևը:
4/4	«Տունը» հայկական ժողովրդական առակի կերպարներն ու դաստիարակչական նշանակությունը: Է(ե) ձայնավորի հնչյունափոխությունը (ուսուցանող գրավոր)	**Զարգացնել** ընթերցանության շնորհիվ յուրացված նոր բառապաշարը սեփական խոսքում գործածելու կարողություններ: **Նպաստել** ընկալելու է(ե) ձայնավորի հնչյունափոխությունը:	**Հաղորդել** պատմվածքի բովանդակությունը ինչպես սեփական բառերով, այնպես էլ նոր սովորած բառային միավորների օգտագործմամբ: Գործող անձի գործունեությունը **կապել** սեփական կենսափորձի հետ և **հիշել** նման իրավիճակներ: **Մեկնաբանել** տղայի արարքների դրդապատճառները, **դրսևորել** վերաբերմունք դրանց նկատմամբ կամ **գնահատել:** **Կողմնորոշվե**լ տեքստի իմաստային բովանդակության մեջ և կարողանալ **պատասխանել** տրված հարցերին: Տրված բառերով **կազմել** նոր բառեր՝ նշելով կատարված

			հնչյունափոխությունը: **Նշել**՝ առակը ինչ վերաբերմունք և արժեքներ ձևավորեց:
1/1	***Թեմատիկ գրավոր աշխատանք 5***	**Ամփոփել** և **ամրապնդել** սովորածը	
5/1	Ավետիք Իսահակյան, «Կաքավն ու աղվեսը» առակը: Ի ձայնավորի հնչյունափոխությունը	**Զարգացնել** ճիշտ և արտահայտիչ կարդալու կարողություններ: **Նպաստել** հնչյունափոխության միջոցով բառի փոփոխությունները ճանաչելու և **ձևավորել**ու անսխալ գրելու կարողություններ:	Վարժ **կարդալ** և **թվարկել** «Կաքավն ու աղվեսը» առակում առկա հերոսներին: Առակի վերնագիրը **կապել** տեքստի հետ: **Ներկայացնել** կաքավին ու աղվեսին՝ արտահայտելով վերաբերմունք նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ: **Հասկանալ** առակի հերոսների զգայական վիճակը, **գնահատել** նրանց հարաբերությունները, արարքները: **Նկարագրել** կամ **նկարել** աղվեսին սեփական ընկալմամբ:
5/2	«Կաքավն ու աղվեսը» առակի բովանդակությունը: Ի ձայնավորի հնչյունափոխությունը	**Հասկանալի դարձնել** առակի բովանդակությունը: **Նպաստել ի** ձայնավորի հնչյունափոխության ընկալմանը:	**Վերարտադրել** «Կաքավն ու աղվեսը» առակի բովանդակությունը: **Ներկայացնել** դեպքերի պատճառահետևանքային կապերը: **Փոխել** առակի վերջնամասը՝ նոր ավարտ հորինելով: Առակի շրջանակում **կազմել** բովանդակային, գաղափարական և բանավիճային հարցեր:
5/3	«Կաքավն ու աղվեսը» առակի գաղափարը և այլաբանությունը: Ի ձայնավորի հնչյունափոխությունը	**Զարգացնել** առակի գաղափարը և այլաբանությունը ինքնուրույն ձևակերպելու կարողություններ: **Նպաստել ի** ձայնավորի հնչյունափոխության ընկալմանը:	**Ներկայացնել** առակի հիմնական գաղափարը: **Բնութագրել** հերոսներին, կարծիք արտահայտել նրանց արարքների վերաբերյալ: Թեման **ծառայեցնել** սեփական մտածողության և աշխարհաճանաչողության շրջանակի ընդլայնմանը:

			Որոշել տեքստում նկարագրված իրադարձությունների միջև եղած կապերը: Բնագրում պատկերված պատմությունը **կապել** ներկայիս իրականության հետ: **Գնահատել** առակի այլաբանությունն ու արժեքները:
5/4	«Կաքավն ու աղվեսը» առակի հերոսների բնութագիրը և դաստիարակչական նշանակությունը: Ի ձայնավորի հնչյունափոխությունը (ուսուցանող գրավոր)	**Զարգացնել** ընթերցանության շնորհիվ յուրացված նոր բառապաշարը սեփական խոսքում գործածելու կարողություններ: **Նպաստել ի** ձայնավորի հնչյունափոխության ընկալմանը:	**Արդարացնել** կամ **մեղադրել** հերոսներից յուրաքանչյուրին՝ հիմնավորելով: Տեքստից **գտնել** եզրակացությունն արտահայտող նախադասությունը: **Գտնել** և **գրել** նման բովանդակությամբ երեք ասացվածք: **Հարստացնել** սեփական բառապաշարը՝ օգտվելով հեղինակային բառապաշարից: Առակը **բաժանել** հատվածների և յուրաքանչյուրը **վերնագրել** բովանդակությանը համապատասխան: Տեքստում **գտնել ի** ձայնավորի հնչյունափոխություն ունեցող բառեր և **վերականգնել** անհնչյունափոխ արմատը:
5/5	«Կաքավն ու աղվեսը» առակի ամփոփումը: Առակի բեմադրում	**Նպաստել** բեմագիր կազմելու կարողությունները զարգացնելուն: Ամփոփել **ի** ձայնավորի հնչյունափոխությունը:	Բեմագրի համար **ստեղծել** տեքստ (հեղինակի և գործող անձանց խոսքեր, երկխոսություն և մենախոսություն):

4/1	Մխիթար Գոշ, «Ճնճղուկներն ու արագիլը» առակը: Ու ձայնավորի հնչյունափոխությունը	**Նպաստել** հասկանալու «Ճնճղուկներն ու արագիլը» առակի իմաստը: **Նպաստել** հնչյունափոխության միջոցով ճանաչելու բառի փոփոխությունները և անսխալ գրելու կարողություններ **ձևավորել:**	**Կարդալ** և **ցույց տալ** առակում ներկայացված դեպքերի հաջորդական ընթացքը: **Բացատրել ի** ձայնավորի հնչյունափոխության հետ կապված օրինաչափությունները: Տրված տեքստում **գտնել ի** ձայնավորի հնչյունափոխություն ունեցող բառեր, **ցույց տալ** հնչյունափոխությունը:
4/2	«Ճնճղուկներն ու արագիլը» առակի բովանդակությունը: Ու ձայնավորի հնչյունափոխությունը	**Հասկանալի դարձնել** առակի բովանդակությունը: **Նպաստել ի** ձայնավորի հնչյունափոխության ընկալմանը:	Ստեղծագործաբար **վերաշարադրել** առակի բովանդակությունը՝ կիրառելով սովորած բառերը և պատկերավոր արտահայտությունները: Նոր հերոս **ներմուծել** առակում: Առակը **հաղորդել** որպես նամակ: **Մեկնաբանել** առակի վերնագրի կապը բովանդակության հետ: **Ներկայացնել** հերոսի արտաքինը նկարագրող, բնավորությունը բացահայտող էական գծերը:
4/3	«Ճնճղուկներն ու արագիլը» առակի գաղափարն ու այլաբանությունը: Ու ձայնավորի հնչյունափոխությունը	**Զարգացնել** առակի գաղափարը և այլաբանությունը ինքնուրույն ձևակերպելու կարողություններ: **Նպաստել ի** ձայնավորի հնչյունափոխության ընկալմանը:	**Պարզաբանել** առակի գլխավոր գաղափարը սեփական ընկալմամբ: **Ընդգծել** պատմվածքի գլխավոր գաղափարն արտահայտող բանալի բառերը, նախադասությունները: **Ներկայացնել** առակի այլաբանությունը և **հիմնավորել:** Մեկ նախադասությամբ **ձևակերպել**՝ առակն ինչ սովորեցրեց: **Դուրս գրել** համատեքստային բառեր ու դրանք կիրառել խոսքում:

4/4	«Ճնճղուկներն ու արագիլը» առակի հերոսների բնութագիրը և դաստիարակչական նշանակությունը: Ու ձայնավորի հնչյունափոխությունը	**Զարգացնել** ընթերցանության շնորհիվ յուրացված նոր բառապաշարը սեփական խոսքում գործածելու կարողություններ: **Նպաստել ի** ձայնավորի հնչյունափոխության ընկալմանը:	**Բնութագրել** հերոսներին՝ առակից դուրս բերելով նրանց բնութագրող տողեր: **Բնութագրել** հերոսներին՝ իրենց արարքներին համապատասխան: **Հորինել** կերպարների բնավորությունն արտահայտող խորհրդանիշներ: **Ներկայացնել** հերոսների նմանությունները և տարբերությունները: **Պարզել** շրջապատի կարծիքը հերոսի մասին: **Ներկայացնել** հերոսների արարքների պատճառահետևանքային կապերը: **Դիտել** էջի թեմատիկ նկարը և դրա շուրջ **գրել** շարադրանք: **Բացատրել ի** ձայնավորի հնչյունափոխության հետ կապված օրինաչափությունները: Տեքստում **գտնել ի** ձայնավորի հնչյունափոխություն ունեցող բառեր, դրանցով նոր բառեր **կազմել, ցույց տալ** հնչյունափոխությունը:
1/1	**Գործնական աշխատանք 2**	**Զարգացնել** տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:	

5/1	«Երեք ծառաների առակը»: Երկհնչյունների հնչյունափոխությունը	**Ձևավորել** և **զարգացնել** ակտիվ ընթերցող: **Նպաստել** երկհնչյունների հնչյունափոխության միջոցով դրանց փոփոխությունները ճանաչելուն և **ձևավորել** անսխալ գրելու կարողություններ:	**Կարդալ** առակը և **մեկնաբանել** սեփական դատողությամբ: **Ներկայացնել** առակի հերոսների էական և ոչ էական հատկանիշները: **Բացատրել** երկհնչյունների հնչյունափոխությունը և բերել համապատասխան օրինակներ: Առակին նոր սկիզբ **հորինել** և **վերնագրել:** Տեքստում **գտնել** երկհնչյուն ունեցող բառեր՝ ընդգծելով դրանք:
5/2	«Երեք ծառաների առակի» բովանդակությունը: **Յա** երկհնչյունի հնչյունափոխությունը	**Նպաստել** պատմելու կարողությունները զարգացնելուն: **Ծանոթացնել յա** երկհնչյունի հնչյունափոխությանը:	**Պատմել** առակի բովանդակությունը և **համեմատել** նման բովանդակության այլ առակների հետ: **Գտնել** նմանություններ և տարբերություններ: Տեքստից ելնելով՝ **ներկայացնել** հերոսների արտաքին նկարագիրը: **Բացատրել յա** երկհնչյունի հնչյունափոխության հետ կապված առանձնահատկությունները: Տեքստում **գտնել յա** երկհնչյունի հնչյունափոխություն ունեցող բառեր, դրանցով նոր բառեր **կազմել, ցույց տալ** հնչյունափոխությունը:
5/3	«Երեք ծառաների առակի» գաղափարը և այլաբանությունը: **Ույ** երկհնչյունի հնչյունափոխությունը	**Նպաստել** առակի գաղափարը, այլաբանությունը հասկանալուն: **Ծանոթացնել** ույ երկհնչյունի հնչյունափոխությանը:	**Ձևակերպել** առակի գաղափարը սեփական բառերով, հիմնավորել: **Ներկայացնել** առակի այլաբանությունը սեփական ընկալմամբ: Առակում **ցույց տալ** բարոյախրատական մասը, **մեկնաբանել:**

			Թվարկել այն բոլոր բառերը, որոնք անծանոթ են, և **բացատրել**՝ օգտվելով բառարանից: **Բացատրել** ***ույ*** երկհնչյունի հնչյունափոխության հետ կապված առանձնահատկությունները: Տեքստում **գտնել** ***ույ*** երկհնչյունի հնչյունափոխություն ունեցող բառեր, դրանցով նոր բառեր **կազմել,** **ցույց տալ** հնչյունափոխությունը: **Կատարել** նորածանոթ բառերի բացատրություն՝ գործածելով խոսքում:
5/4	«Երեք ծառաների առակի» կերպարները և բարոյախոսությունը: **Յու** երկհնչյունի հնչյունափոխությունը	**Զարգացնել** կերպարը վերլուծելու և առակի բարոյախոսական մասը ընկալելու կարողություններ: **Ծանոթացնել յու** երկհնչյունի հնչյունափոխությանը:	**Մեկնաբանել** առակի արտահայտած հույզերն ու ապրումները և դրանց ազդեցությունն ընթերցողի վրա: **Ներկայացնել** առակի հերոսների արարքների պատճառահետևանքային կապերը: **Պարզաբանել** հերոսներից յուրաքանչյուրի արարքների դրդապատճառը: **Բնութագրել** ծառաներից յուրաքանչյուրին: **Գնահատել** հերոսներին՝ ելնելով առակի բովանդակությունից: **Բացատրել** ***յու*** երկհնչյունի հնչյունափոխության հետ կապված առանձնահատկությունները: Տեքստում **գտնել** ***յու*** երկհնչյունի հնչյունափոխություն ունեցող բառեր, դրանցով նոր բառեր **կազմել,** **ցույց տալ** հնչյունափոխությունը:
5/5	«Երեք ծառաների առակի» դաս-	**Օգնել** զարգացնելու դիրքորոշում դրսևո-	Առակի վերնագիրը **կապել** բովանդակության հետ:

	տիարակչական նշանակությունը: **Յու** երկհնչյունի հնչյունափոխությունը (ուսուցանող գրավոր)	ռելու կարողությունները: **Խթանել** լեզվաքերականական նյութի տեղին կիրառումը կապակցված խոսքում:	**Անվանել** առակի հերոսների գործողությունների դրդապատճառները (ինչո՞ւ վարվեց այսպես) և **գնահատել** նրանց վարքագիծը: **Արմատավորել** մարդուն սիրելու, օգնելու, խնամելու ու խնայելու կարողություններ: **Համեմատել** հերոսների արարքները, **առանձնացնել** լավն ու վատը, մերժելին և ընդունելին: **Ներկայացնել** ծառաների համեմատական բնութագիրը: Նոր ավարտ **հորինել** առակին և **վերնագրել:**
1/1	***Թեմատիկ գրավոր աշխատանք 6***	**Ամփոփել** և **ամրապնդել** գիտելիքները:	
2	Առակի բեմադրում	Հմտությունների զարգացում:	
2	Թեմատիկ կրկնություն	**Ամփոփել** և **ամրապնդել** գիտելիքները:	

	ԲԱԺԻՆ III. ԱԿԱՆՋ ԴՆԵՆՔ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ		
6/1	Հովհաննես Թումանյան, «Գելը» պատմվածքը: Ինչ է պատմվածքը	**Զարգացնել** տեքստը՝ հասկանալով ընթերցելու, տեքստում գլխավոր միտքն արտահայտող, հերոսներին բնութագրող բառերը ճանաչելու կարողություններ: **Բացատրել** պատմվածքի ժանրային առանձնահատկությունները:	Առոգանությամբ **կարդալ, թվարկել** պատմվածքում գործող հերոսներին: **Կարդալ** տեքստը հասկանալով, մատնանշել պատմվող դեպքերի հաջորդական ընթացքը: **Ներկայացնել** պատմվածքի ժանրային ատանձնահատկությունները: **Պարզաբանել** «Գելը» պատմվածքում դեպքերի կատարման ժամանակաշրջանը, վայրը:
6/2	«Գելը» պատմվածքի բովանդակությունը և գաղափարը: Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության	**Զարգացնել** պատմվածքի միտքն ընկալելու կարողություններ: **Խթանել** լեզվաքերականական նյութի տեղին կիրառումը կապակցված խոսքի մեջ:	**Ընդհանրացնել** և հակիրճ **ձևակերպել** պատմվածքի հիմնական գաղափարը: Վերնագիրը **կապել** պատմվածքի բովանդակության հետ: **Ներկայացնել** «Գելը» պատմվածքի գաղափարական բովանդակությունը: **Բացատրել** բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության և բերել օրինակներ: **Բացատրել** անծանոթ բառերը բառարանի օգնությամբ, **գտնե**լ տեքստում հանդիպած բառերի հոմանիշները:
6/3	«Գելը» պատմվածքի բովանդակությունը և գաղափարը: Հոմանիշներ	**Զարգացնել** դեպքերը հաջորդական ընթացքով պատմելու կարողություններ: **Օգնել** հարստացնելու բառապաշարը, կապակցված խոսքի մեջ ճիշտ կիրառելու բառերի տարբեր տեսակները:	**Վերլուծել** պատմվածքը՝ մեկնաբանելով հերոսների արարքների շարժառիթները, հույզերն ու ապրումները: Տեքստից ստացած տեղեկությունը **մշակել,** տվյալները **վերլուծել** և եզրահանգումներ **անել**: **Ներկայացնել** հեղինակի հույզերը հերոսների հանդեպ: Բանավոր **վերաշարադրել** տեքստը տարբեր հերոսների,

			կենդանիների, իրերի անունից: Գրավոր **վերաշարադրել** տեքստը՝ հավելելով նոր հերոսներ, հորինելով նոր սկիզբ և ավարտ: **Վերլուծել** պատմվածքի բովանդակությունը, **մատնանշել** գլխավոր միտքը: **Մեկնաբանել** հոմանիշների դերը բառագիտության մեջ, տեքստում **գտնել** հոմանիշներ:
6/4	«Գելը» պատմվածքի հերոսների բնութագիրը: Հոմանիշներ	**Նպաստել** զարգացնելու հերոսներին բնութագրող բառերը, բառակապակցությունները, նախադասություններն առանձնացնելու կարողություններ: **Օգնել** հարստացնելու բառապաշարը, կապակցված խոսքի մեջ ճիշտ կիրառելու բառերի տարբեր տեսակները:	**Բնութագրել** գլխավոր հերոսին՝ մեկնաբանելով նրա արարքները: **Նկարագրել** գլխավոր հերոսի արտաքինը: **Թվարկել** հերոսների անունները, **բնութագրել** նրանց և **առանձնացնել** գլխավոր և երկրորդական հերոսներին: **Բնութագրել** դուր եկած հերոսին՝ պատճառաբանելով: **Կազմել** տեքստի պլանը պարզ նախադասություններով, հարցական նախադասություններով, բառակապակցություններով: **Գտնել** տեքստի բանալի բառերը, նախադասությունները, **բացատրել** ընտրությունը: Բառաշարում **գտնել** հոմանիշները՝ գործածելով շարադրանքում:

6/5	«Գելը» պատմվածքի դաստիարակչական նշանակությունը: Հոմանիշներ (ուսուցանող գրավոր)	**Զարգացնել** առակի բովանդակությունն ըստ պլանի մշակած հարցերի, նաև ստեղծագործաբար վերարտադրելու կարողություններ: **Նպաստել** կարծիք հայտնելու, դիրքորոշում դրսևորելու կարողությունների զարգացմանը: **Օգնել** բառապաշարը հարստացնելու հոմանիշ բառերով:	**Գտնել** այն բառերն ու արտահայտությունները, որոնք ստեղծագործության մեջ տրամադրվածություն են ստեղծում: **Համեմատել** հերոսների արարքները, սեփական վերաբերմունքն **արտահայտել** նրանց արարքների վերաբերյալ (պատմող, տղա, գայլ): **Ներկայացնել** գործող անձանց փոխհարաբերությունները (ով ում է օգնում...): **Ցույց տալ** պատմվածքի դաստիարակչական նշանակությունը: Տեքստի նշված բառերը **փոխարինել** հոմանիշներով: **Արժևորել** պատմվածքը:
6/6	Թեմատիկ կրկնություն	**Ամփոփել** ու **ամրապնդել** թեման	
6/1	Ստեփան Զորյան, «Շեկոն» պատմվածքը: Հականիշներ	**Նպաստել** հասկանալու պատմվածքի արտահայտած իմաստը: **Ծանոթացնել** հականիշների բառագիտական նշանակությանը:	**Կարդալ** տեքստը հասկանալով, **մատնանշել** պատմվող դեպքերի հաջորդական ընթացքը: **Կարդալ** ընտրովի հատվածներ, **բացատրել** ընտրությունը: **Կազմել** տեքստի պլանը պարզ նախադասություններով, հարցական նախադասություններով, բառակապակցություններով: Տեքստում **գտնել** հականիշներ՝ նշելով գործածության նպատակը:

6/2	«Շեկոն» պատմվածքի բովանդակությունը և գաղափարը: Հականիշներ	**Զարգացնել** հասկանալով ընթերցելու, տեքստում գլխավոր միտքն արտահայտող, հերոսներին բնութագրող բառերն ու նախադասությունները **գտնելու** կարողությունները: **Խթանել** լեզվաքերականական նյութի տեղին կիրառումը կապակցված խոսքում:	**Վերլուծել** պատմվածքի բովանդակությունը, **մատնանշել** գլխավոր միտքը: **Առանձնացնել** տեքստում գլխավոր միտքն արտահայտող, հերոսներին բնութագրող բառերը, բառակապակցությունները, նախադասությունները, **բացատրել** դրանք: **Գտնել** պատմվածքի մտքին համապատասխան մեղեդի, նկարազարդումներ անել, **ծեփել՝** բովանդակության ընկալումը ցույց տալու նպատակով: **Հիմնավորել** ընտրությունը:
6/3	«Շեկոն» պատմվածքի հերոսների բնութագիրը: Նույնարմատ հականիշներ (ուսուցանող գրավոր)	**Օգնել** հարստացնելու բառապաշարը, կապակցված խոսքի մեջ ճիշտ կիրառելու բառերի տարբեր տեսակները: **Նպաստել** ճանաչելու նույնարմատ հականիշները:	**Բնութագրել** հերոսներից յուրաքանչյուրին՝ բացահայտելով նրանց արարքների դրդապատճառները: Գրավոր **վերաշարադրել** տեքստը՝ հավելելով նոր հերոսներ: Առակի համար **հորինել** նոր սկիզբ և ավարտ: **Անվանել** ստեղծագործության հերոսների գործողությունների դրդապատճառները (ինչո՞ւ վարվեց այսպես) և **գնահատել** նրանց վարքագիծը: **Համեմատել** տարբեր պատմվածքների տեքստեր, **ցույց տալ** նմանությունները և տարբերությունները: **Կարծիք հայտնել** պատմվածքի մասին:
6/4	«Շեկոն» պատմվածքի վերլուծությունը: Տարարմատ հականիշներ	**Օգնել** հարստացնելու բառապաշարը, կապակցված խոսքի մեջ ճիշտ կիրառելու բառերի տարբեր տեսակները: **Նպաստել** ճանաչելու տարարմատ հականիշները:	**Գտնել** տեքստի բանալի բառերը, նախադասությունները, **բացատրել** ընտրությունը: Բանավոր **վերաշարադրել** տեքստը տարբեր հերոսների, կենդանիների, անունից: Համեմատելով՝ **վերլուծել** արձակ և չափածո, գրական և ոչ գրական տեքստերը, **եզրահանգումներ անել**:

			Գրել նամակ պատմվածքի հերոսին կամ հերոսի անունից: **Բացատրել** տրված բառերի կազմությունը, հնչյունափոխությունը, ուղղագրությունը. **կազմել** նոր բառեր տրված արմատներով, **ցույց տալ** արտասանության և գրության տարբերությունը: **Ներկայացնել** սեփական վերաբերմունք սիրած կենդանու վերաբերյալ:
6/5	«Շեկոն» պատմվածքի դաստիարակչական նշանակությունը: Տարարմատ հականիշներ	**Օգնել** հարստացնելու բառապաշարը, կապակցված խոսքի մեջ ճիշտ կիրառելու բառերի տարբեր տեսակները;	Գրավոր **վերաշարադրել** տեքստը՝ հավելելով նոր հերոսներ, հորինելով նոր սկիզբ և ավարտ: **Բացատրել** անծանոթ բառերը բառարանի օգնությամբ, **գտնել** տեքստում հանդիպած բառերի հոմանիշները, հականիշները: Անձնական կյանքից **հիշել** համանման օրինակներ՝ համեմատելով տեքստի հետ: **Գնահատել** հեղինակի ասելիքը՝ սեփական դիրքորոշում դրսևորելով: **Կազմել** կապակցված խոսք՝ տեղին կիրառելով բառերի տեսակները:
6/6	Թեմատիկ կրկնություն	**Ամփոփել** և **ամրապնդել** գիտելիքները:	
1/1	***Թեմատիկ գրավոր աշխատանք 7***	**Ստուգել** և **գնահատել** ստացած գիտելիքները:	
6	Կիսամյակային կրկնություն	**Ամփոփել** և **ամրապնդել** գիտելիքները:	
6	Նախագծային աշխատանք	**Զարգացնել** սովորողի հետազոտական աշխատանքի կարողությունները	

	ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ		
6/1	Էդմոնդո դի Ամիչիս, «Ջուլիո» պատմվածքը: Համանուններ	**Նպաստել** հասկանալու պատմվածքի իմաստը: **Ծանոթացնել** համանունների բառագիտական նշանակությանը	**Բացատրել**՝ ինչու է պատմվածքը վերնագրվել «Ջուլիո»: **Մեկնաբանել՝** պատմվածքում ժամանակաշրջանը, միջավայրը ինչ կերպ են ազդում հերոսների հոգեբանության վրա: **Հաղորդել** պատմվածքի բովանդակությունը ինչպես սեփական բառերով, այնպես էլ նոր սովորած բառային միավորների օգտագործմամբ: Գործող անձի՝ Ջուլիոյի գործունեությունը **կապել** անհատական կենսափորձի հետ և **հիշել** նման իրավիճակներ: Համանունները **տարբերե**լ բառերի մյուս տեսակներից, տեքստում **գտնել** համանունները և **գործածել** նախադասություններում:
6/2	«Ջուլիո» պատմվածքի բովանդակությունը և գաղափարը: Բացարձակ համանուններ	**Զարգացնել** հասկանալով ընթերցելու, տեքստում գլխավոր միտքն արտահայտող, հերոսներին բնութագրող բառերն ու նախադասությունները **գտնելու** կարողություններ: **Խթանել** տեղին կիրառելու լեզվաքերականական նյութը կապակցված խոսքում:	**Վերարտադրել** պատմվածքի բովանդակությունը պարզ նախադասություններով: **Որոշել** տեքստի հիմնական միտքը, հենակետային բառերը: **Թվարկել** պատմվածքի հերոսներին, **համեմատել,** ընդհանրություններ և տարբերություններ **գտնել:** **Գտնել** այն բառերն ու արտահայտությունները, որոնք ստեղծագործության մեջ տրամադրվածություն են ստեղծում: **Համեմատել** հերոսների արարքները, սեփական վերաբերմունքն **արտահայտել** նրանց արարքների վերաբերյալ: **Ճանաչել** բացարձակ համանունները և կիրառել խոսքում:

6/3	«Ջուլիո» պատմվածքի կերոսների բնութագիրը: Նույնագիր համանուններ	**Նպաստել** հերոսների բնութագրմանը: **Օգնել** հարստացնելու բառապաշարը, կապակցված խոսքի մեջ ճիշտ կիրառելու բառերի տարբեր տեսակները: **Նպաստել** ճանաչելու նույնագիր համանունները:	Տեքստից **առանձնացնել** հերոսներին բնութագրող հատվածները և **կազմել** նրանց համեմատական բնութագիրը: Հերոսներին արդարացնելու հիմնավորումները **ներկայացնել** դատողական խոսքով: Հերոսներին բնութագրելիս փորձել **գտնել** սխալ վարքագծի դրսևորումներ և **հիմնավորել, ներկայացնե**լ կարծիք: Մտքեր **փոխանակել** մարդկանց վարքագծի, արարքների, բարեկրթության թեմաներով: Բովանդակությունը **հաղորդել**՝ հերթագայելով պատմելն ու նկարագրումը: **Վերարտադրել** դեպքերի **հաջորդական** ընթացքը՝ պահպանելով տեքստի բովանդակությունը: Տեքստում **գտնել** գրական կերպարի արտաքինի նկարագրությունները, բնավորությունը բնութագրող հատվածները, արարքների դրդապատճառները բացահայտող խոսքային միջոցները, հիմնվելով դրանց վրա՝ **վերլուծել:** **Տարբերել** բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության, բանավոր և գրավոր խոսքում ճիշտ և տեղին **կիրառել** հոմանիշ, հականիշ, համանուն բառերը:
6/4	«Ջուլիո» պատմվածքի դաստիարակչական նշանակությունը: Նույնահունչ համանուններ	**Նպաստել** պատմվածքի դաստիարակչական նշանակությունը հասկանալուն: **Օգնել** հարստացնելու բառապաշարը, կապակցված խոսքի մեջ ճիշտ կիրառելու բառերի տարբեր տեսակները;	**Փոփոխել** տրված տեքստը. նոր հերոսներ **ավելացնել** կամ ընդհակառակը՝ **սեղմել, կրճատել:** **Հորինել** դիպաշար (սյուժե) ունեցող պատմություններ՝ օգտագործելով պլան, նախօրոք մշակված հարցեր, պայմանական նշաններ և միջոցներ (պատկերապատում, ծաղրանկար և այլն:

		Նպաստել ճանաչելու նույնահունչ համանունները:	**Կազմել** նկարագրական խոսք՝ կիրառելով տրված բառերը, բառակապակցությունները, նախադասությունները: **Գնահատել** հերոսների վարքագիծը և **արտահայտել** վերաբերմունք: Գործող անձի գործունեությունը **կապել** անհատական կենսափորձի հետ և **հիշել** նման իրավիճակներ: Ըստ տեքստի **ստեղծել** ուսումնական նյութեր՝ բառարան, պաստառ, գրքույկ և այլն, դրանց համար հակիրճ գրառումներ **անել:** **Տարբերել** բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության: **Նշել** տեքստի դաստիարակչական արժեքը:
6/5	«Ջուլիո» պատմվածքի վերլուծությունը: Նույնահունչ համանուններ (ուսուցանող գրավոր)	**Զարգացնել** պատմվածքը վերլուծելու կարողություններ: **Օգնել** հարստացնելու բառապաշարը, կապակցված խոսքի մեջ ճիշտ կիրառելու բառերի տարբեր տեսակները:	**Տարբերակել** ընտանեկան միջավայրի խոսելու ոճը և պաշտոնական միջավայրի (դպրոցական պաշտոնական իրադրություն) լեզուն ու համապատասխանաբար **օգտագործել** դրանք: Պատմելիս **օգտագործել** հեղինակային բառապաշարը: **Հետևել** սյուժետային գծին և հաջորդականորեն **հաղորդել** փաստերն ու իրադարձությունները: **Մասնակցել** գեղարվեստական ստեղծագործության շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը: **Մասնակցել** պատմվածքի վերլուծությանը և քննարկմանը: **Արտահայտել** վերաբերմունք և փորձել **բացատրել** դրանք (զարմացա, որովհետև, զայրացա, քանի որ ...): Բանավոր և գրավոր խոսքում ճիշտ և տեղին **կիրառել** հոմանիշ, հականիշ, համանուն **բառեր**:

6/6	Թեմատիկ կրկնություն	**Ամփոփել** և **ամրապնդել** գիտելիքները:	
1/1	***Թեմատիկ գրավոր աշխատանք 1***	**Ստուգել** և **գնահատել** գիտելիքները:	
6/1	Արթուր Մանուկյան, «Մեր բակի պատմությունը» պատմվածքը: Մակդիր	**Նպաստել** պատմվածքի իմաստը հասկանալուն: **Ծանոթացնել** մակդիրի նշանակությանը:	Արտահայտիչ, վարժ **կարդալ** տեքստը, **պահպանել** հայերենին հատուկ արտասանությունը, շեշտադրումը: **Վերարտադրել** դեպքերի հաջորդական ընթացքը՝ պահպանելով տեքստի բովանդակությունը: Պատմվածքը կարդալիս **կանխատեսել** դեպքերի զարգացման ընթացքը: Տեքստից ընտրած փաստերով **հիմնավորել** կանխատեսումը: Տեքստերի շուրջ **կազմել** պլան, **մշակել** հարցեր, ըստ դրանց՝ **ձևակերպել** պատասխաններ, **վերապատմել** տեքստի բովանդակությունը: Տեքստերում **ցույց տալ** դեպքերի հաջորդական ընթացքը: Տեքստը **վերապատմել, վերաշարադրել** բանավոր և գրավոր՝ հետևելով գործողությունների ընթացքին: Տեքստում **գտնել, բացատրել** պատկերավորման միջոցների (մակդիր, համեմատություն) դերը տվյալ ստեղծագործության մեջ:

6/2	«Մեր բակի պատմությունը» պատմվածքի բովանդակությունը և գաղափարը: Բառի բազմիմաստությունը: Մենիմաստ և բազմիմաստ բառեր	**Զարգացնել** հասկանալով ընթերցելու, տեքստում գլխավոր միտքն արտահայտող, հերոսներին բնութագրող բառերն ու նախադասությունները գտնելու կարողությունները: **Խթանել** լեզվաքերականական նյութի տեղին կիրառումը կապակցված խոսքում: **Օգնել** ճանաչելու մենիմաստ և բազմիմաստ բառերը:	Տրված տեքստը **բաժանել** պարբերությունների, **որոշել** հիմնական միտքը և պարբերությունների իմաստային կապը: Հնարավորության դեպքում **հորինել** ևս մեկ պարբերություն: **Ճանաչել** մենիմաստ և բազմիմաստ բառերը և համապատասխան նշանակությամբ **կիրառել** բանավոր և գրավոր խոսքում:
6/3	«Մեր բակի պատմությունը» պատմվածքի հերոսների բնութագիրը: Բառի ուղիղ իմաստը	**Նպաստել** հերոսների բնութագրմանը: **Օգնել** հարստացնելու բառապաշարը, կապակցված խոսքի մեջ ճիշտ կիրառելու բառերի տարբեր տեսակները: **Նպաստել** ճանաչելու բառի ուղիղ իմաստը:	**Թվարկել** հերոսներին, յուրաքանչյուրին բնութագրել արարքներին համապատասխան: Տեքստում **գտնել** գրական կերպարի արտաքին նկարագրությունները, բնավորությունը բնութագրող հատվածները, արարքների դրդապատճառները բացահայտող խոսքային միջոցները, հիմնվելով դրանց վրա՝ **վերլուծել** պատմվածքը: Տեքստի վերաբերյալ առաջադրված հենակետային բառերի և նախադասությունների միջոցով **վերականգնե**լ տեքստը, **վերնագրել:** **Ճանաչել** բառի ուղիղ իմաստը:
6/4	«Մեր բակի պատմությունը» պատմվածքի վերլուծությունը: Բառի ուղիղ իմաստը	**Զարգացնել** պատմվածքը վերլուծելու կարողություններ: **Օգնել** հարստացնելու բառապաշարը, կապակցված խոսքի մեջ ճիշտ կիրառելու բառերի տարբեր տեսակները:	Հերոսների արարքներից ելնելով՝ **վերլուծել** կերպարները: Տեքստի միտքն **արտահայտե**լ գծապատկերներով, աղյուսակներով, նկարներով և ոչ խոսքային հաղորդակցության միջոցով: Տեքստից համապատասխան մեջբերումներ **անել**՝ ասելիքն ապացուցելու համար, **մատնանշել** հեղինակին, ստեղծա-

		Նպաստել ճանաչելու բառի ուղիղ իմաստը:	գործությունը: **Հարստացնել** բառապաշարը՝ կապակցված խոսքի մեջ ճիշտ կիրառելով բառերի տարբեր տեսակները, բառի ուղիղ և փոխաբերական իմաստները:
6/5	«Մեր բակի պատմությունը» պատմվածքի դաստիարակչական նշանակությունը: Բառի փոխաբերական իմաստը	**Նպաստել** հասկանալու պատմվածքի դաստիարակչական նշանակությունը՝ ձևավորելով սեփական արժեհամակարգ: **Օգնել** հարստացնելու բառապաշարը, կապակցված խոսքի մեջ ճիշտ կիրառելու բառի փոխաբերական իմաստը:	**Ներկայացնել** պատմվածքի դաստիարակչական նշանակությունը: Օգտագործելով տրված տեքստերի սկիզբը՝ **կազմել** տարաբնույթ տեքստեր՝ պատմողական, նկարագրական, դատողական: Տեքստի վերաբերյալ առաջադրված հենակետային բառերի և նախադասությունների միջոցով **վերականգնել** տեքստը, **վերնագրե**լ: Տեքստում **գտնել** և **տարբերել** ուղիղ և փոխաբերական իմաստներով կիրառված բառերը, **բացատրել** դրանք՝ ըստ տվյալ տեքստի, պարբերության, նախադասության:
6/6	«Մեր բակի պատմությունը» պատմվածքի ամփոփումը: Բառի փոխաբերական իմաստը (ուսուցանող գրավոր)	**Զարգացնել** եզրահանգումներ, ամփոփումներ կատարելու կարողություններ: **Նպաստել** կազմելու գրավոր և բանավոր կապակցված խոսք՝ կիրառելով համապատասխան լեզվաքերականական նյութը:	Տեքստից **առանձնացնել** այն պարբերությունները, որոնցում կա եգրահանգում: Տեքստից **առանձնացնել** կերպարներին բնութագրող հատվածները և **կազմել** հերոսների համեմատական բնութագիրը: Կերպարներին արդարացնելու հիմնավորումները **ներկայացնել** դատողական խոսքով: Կերպարների բնութագրման մեջ փորձել **գտնել** սխալ վարքագծի դրսևորումներ և **հիմնավորել, ներկայացնել** սեփական կարծիք: Տեքստում **գտնել** և **տարբերել** ուղիղ և փոխաբերական ի-

			մաստներով կիրառված բառերը, **բացատրել** դրանց՝ ըստ տվյալ տեքստի, պարբերության, նախադասության արտահայտած իմաստը:
2	Թեմատիկ սահիկաշարի պատրաստում	**Զարգացնել** թեմատիկ գիտելիքները և համակարգչային հմտությունները:	
1/1	**Գործնական աշխատանք 1**	**Զարգացնել** գործնական աշխատանքի հմտություններ:	
1/1	***Թեմատիկ գրավոր աշխատանք 2***	**Ստուգել** և **գնահատել** ստացած գիտելիքները:	
6/1	Հանրի Զարյան, «Նա» պատմվածքը: Համեմատություն	**Նպաստել** հասկանալու պատմվածքի իմաստը: **Ծանոթացնել** համեմատության կիրառման դերին:	Տեքստը **կարդալ** ուղղախոսական կանոններին համապատասխան: **Թվարկել** հերոսներին: Բովանդակությունը հաղորդելիս՝ **հերթագայել** պատմելն ու նկարագրումը: Տեքստում **գտնել** համեմատությունները և **նշել** հեղինակի՝ դրանք գործածելու նպատակը:
6/2	«Նա» պատմվածքի բովանդակությունը և գաղափարը: Ուղղախոսություն և ուղղագրություն	**Զարգացնել** հասկանալով ընթերցելու, տեքստում գլխավոր միտքն արտահայտող, հերոսներին բնութագրող բառերն ու նախադասությունները գտնելու հմտությունը: **Խթանել** բանավոր և գրավոր խոսքում հայերենի հնչյունների արտաբերման և արտասանության կանոնների ճիշտ կիրառումը:	**Վերլուծել** պատմվածքի բովանդակությունը, մատնանշել գլխավոր միտքը: Հասկանալի **ձևակերպել** և **պատմել** սեփական զգացումների մասին՝ կարդալով տեքստը: Կարդացած նյութի մեջ **տարբերել** և **առանձնացնել** գլխավոր մտքերը երկրորդականից, **վերաշարադրել** համապատասխան տրամաբանական հերթականությամբ՝ ըստ մտադրության և նախօրոք կազմած պլանի:

			Բանավոր խոսքում ճիշտ **կիրառել** հայերենի հնչյունների արտաբերման և արտասանության կանոնները:
6/3	«Նա» պատմվածքի կերպարների բնութագիրը: Ձայնավորների արտասանությունը և գրությունը է-ե	**Նպաստել** հերոսների բնութագրմանը: **Օգնել** հասկանալու է-ե ձայնավորների արտասանության և գրության առանձնահատկությունները:	Գրավոր **վերաշարադրել** տեքստը՝ հավելելով նոր հերոսներ: **Կազմել** գրավոր կամ բանավոր շարադրանք՝ հորինելով նոր սկիզբ և ավարտ: **Վերլուծել** պատմվածքը, **մատնանշել** գլխավոր միտքը: «Նա »պատմվածքը **համեմատել** տարբեր պատմվածքների հետ, **ցույց տալ** նմանությունները և տարբերությունները: Կարծիք **հայտնել** պատմվածքի մասին: **Գրել** նամակ պատմվածքի հերոսին կամ հերոսի անունից: **Տարբերել** հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունները, **մատնանշել** դրանց արտասանության և գրության տարբերությունները, ճիշտ **արտասանել** և ճիշտ **գրել** արտասանությամբ և գրությամբ տարբերվող բառերը:
6/4	«Նա» պատմվածքի վերլուծությունը: Է-ե ձայնավորների արտասանությունը և գրությունը	**Զարգացնել** պատմվածքը վերլուծելու կարողություններ: **Նպաստել** հասկանալու է-ե ձայնավորների արտասանության և գրության առանձնահատկությունները:	Ստեղծագործության մեջ պատկերված պատմության և գործող անձանց մասին **դատել** իրեն հետաքրքրող և կարևոր տեսանկյունից: **Գնահատել** հերոսների վարքագիծը և արտահայտում սեփական վերաբերմունք: Գործող անձի գործունեությունը **կապել** սեփական կենսափորձի հետ և **հիշել** նման իրավիճակներ: **Մասնակցել** պատմվածքի շուրջ ծավալած մտքերի փոխանակմանը, **արտահայտել** կարծիք: **Արտահայտել** զգացմունքներ/ապրումներ և փորձել **բացատրել** դրանք (զարմացա, որովհետև…, զայրացա, քանի

			որ ...): Հաղորդակցվելիս **դրսևորել** բարեկիրթ խոսք և վարքագիծ: **Կատարել** վարժություններ է-ե ձայնավորների շուրջ:
6/5	«Նա» պատմվածքի դաստիարակչական նշանակությունը: Օ-ո ձայնավորների արտասանությունը և գրությունը (ուսուցանող գրավոր)	**Օգնել** հասկանալու պատմվածքի դաստիարակչական նշանակությունը՝ ձևավորելով սեփական արժեհամակարգ: **Օգնել** հասկանալու օ-ո ձայնավորների արտասանության և գրության առանձնահատկությունները:	**Որոշել** պատմվածքի գործող անձանց խոսքի առանձնահատկությունները: **Հակադրել** հերոսների արարքները, նրանց վերաբերմունքը շրջապատի նկատմամբ: **Որոշել** հերոսների արարքների դրդապատճառները, դրսևորել սեփական վերաբերմունքը դրանց նկատմամբ և գնահատել ուսուցչի ուղղորդմամբ: **Անվանել** գեղագիտական արժեքավոր մասերը կարդացած տեքստից: **Տարբերել** հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունները, մատնանշել դրանց արտասանության և գրության տարբերությունները, ճիշտ **արտասանել** և ճիշտ **գրել** արտասանությամբ և գրությամբ տարբերվող բառերը: **Կատարել** վարժություններ օ-ո ձայնավորների շուրջ:
6/6	«Նա» պատմվածքի ամփոփումը: Օ-ո ձայնավորների արտասանությունը և գրությունը	**Զարգացնել** եզրահանգումներ, ամփոփումներ կատարելու կարողություններ: **Օգնել** հասկանալու օ-ո ձայնավորների արտասանության և գրության առանձնահատկությունները:	**Կողմնորոշվել** տեքստի իմաստային բովանդակության մեջ և կարողանալ **պատասխանել** դասագրքում զետեղված հարցերին: **Տարբերակել** տեքստում հեղինակի և գործող անձանց խոսքերը, երկխոսությունը և մենախոսությունը: Տեքստում ինքնուրույն **գտնել** բառեր և արտահայտություններ, որոնք հեղինակը կիրառել է գործող անձանց, փաստերն ու իրադարձությունները նկարագրելու համար:

			Պատմել ստեղծագործության մեջ պատկերված պատմությունը՝ հերոսներից մեկի բերանով: Տեքստն ավելի լավ գիտակցելու նպատակով՝ հարցեր **առաջադրել** կարդացածի հետ կապված:
2	Համապատասխան քերականական նյութի պաստառների պատրաստում	**Նպաստել** տեսական նյութը գործնականում կիրառելու կարողությունների զարգացմանը:	
1/1	***Թեմատիկ գրավոր աշխատանք 3***	**Ստուգել** և **գնահատել** ստացած գիտելիքները:	
6/1	Վիգեն Խեչումյան, «Զվարթնոց»: Անձնավորում	**Օգնել** ճանաչելու մեր ազգային արժեքները: **Ծանոթացնել** անձնավորման կիրառման առանձնահատկություններին:	**Կարդալ** ընտրովի հատվածներ, **բացատրել** ընտրությունը: **Կազմել** տեքստի պլանը պարզ նախադասություններով, հարցական նախադասություններով, բառակապակցություններով: **Գտնել** տեքստի բանալի բառերը, նախադասությունները, **բացատրել** ընտրությունը: **Բացատրել** տրված բառերի կազմությունը, հնչյունափոխությունը, ուղղագրությունը. **կազմել** նոր բառեր տրված արմատներով, **ցույց տալ** արտասանության և գրության տարբերությունը: **Բացատրել** անծանոթ բառերը բառարանի օգնությամբ, **գտնել** տեքստում հանդիպած բառերի հոմանիշները, հականիշները: Տեքստում **գտնել** անձնավորման օրինակներ և **բացատրել**:
6/2	«Զվարթնոց» պատմվածքի բովանդակությունը: Անձնավորում	**Ծանոթացնել** մեր պատմական արժեքներին. Զվարթնոց: **Խթանել** բանավոր և գրավոր խոսքում	Պատմելիս **պահպանել** տեքստի իմաստային հաջորդականությունը: Ստեղծագործաբար **վերաշարադրե**լ պատմվածքի բովան-

		հայերենի հնչյունների արտաբերման և արտասանության կանոնների ճիշտ կիրառման ընկալումը:	դակությունը՝ կիրառելով նոր սովորած բառերը և պատկերավոր արտահայտությունները: Պատմվածքի իմաստը հաղորդելիս՝ ստեղծագործաբար **օգտագործել** հեղինակային բառապաշարը և գեղարվեստական միջոցները: Տարբեր ձևերով **արտահայտել** վերաբերմունք (օրինակ՝ համաոոտ բնութագիր, մեկնաբանություն հերոսի վարքի մասին...) գործող դեմքի կամ հեղինակի նկատմամբ: **Ստեղծել** ստեղծագործության դիպաշարի մեկ այլ ավարտով գրավոր տարբերակ**:** Տեքստում **գտնել** անձնավորման օրինակներ և **բացատրել:**
6/3	«Զվարթնոց» պատմվածքի գաղափարը: Ը ձայնավորի արտասանությունը և գրությունը	**Զարգացնել** հասկանալով ընթերցելու, տեքստում գլխավոր միտքն արտահայտող բառերն ու նախադասությունները գտնելու հմտությունը: **Օգնել** հասկանալու **ը** ձայնավորի արտասանության և գրության առանձնահատկությունները:	**Ցույց տալ** պատմվածքի գլխավոր գաղափարն արտահայտող բանալի բառերը, նախադասությունները: **Լուսաբանել** պատմվածքի փաստերը: **Ներկայացնել** կերպարները՝ պատմվածքից դուրս բերելով նրանց բնութագրող տողերը: **Կատարել ը** ձայնավորի արտասանության և գրության հետ կապված վարժություններ:

6/4	«Զվարթնոց» պատմվածքի կերպարների բնութագիրը: Ը ձայնավորի արտասանությունը և գրությունը	**Նպաստել** ընկալելու հերոսների գործողությունները, տեքստում **գտնել** նրանց բնութագրող բառերն ու նախադասությունները: **Նպաստել** հասկանալու **ը** ձայնավորի արտասանության և գրության առանձնահատկությունները:	**Ներկայացնել** պատմվածքի հերոսների արտաքինը նկարագրող, բնավորությունը բացահայտող էական գծերը: **Թվարկել** պատմվածքի կերպարները, պատմվածքից **դուրս գրել** նրանց բնութագրող տողերը: Տեքստում **գտնել ը** ձայնավորի արտասանությանը և գրությանը վերաբերող բառեր և **բացատրել:** **Նշել** միջավայրը, որտեղ կատարվում են պատմվածքի գործողությունները: **Կատարել ը** ձայնավորի արտասանության և գրության հետ կապված վարժություններ:
6/5	Զվարթնոց» պատմվածքի վերլուծությունը: Ը ձայնավորի արտասանությունը և գրությունը	**Զարգացնել** պատմվածքը վերլուծելու կարողություններ: **Նպաստել** հասկանալու **ը** ձայնավորի արտասանության և գրության առանձնահատկությունները:	Կարողանալ **վերլուծել** պատմվածքը: **Թվարկել** պատմվածքի այն բոլոր բառերը, որոնք նոր կամ անծանոթ են: Տեքստից ելնելով՝ **բացատրել**, թե դա ինչ կարող է նշանակել: **Որոնել** ազգային խորհրդանիշներ: Բնագրից **բերել** փաստեր՝ հաստատելով դրանք: **Կատարել ը** ձայնավորի արտասանության և գրության հետ կապված վարժություններ:
6/6	«Զվարթնոց» պատմվածքի դաստիարակչական նշանակությունը: Ը ձայնավորի արտասանության և գրության իմաստը (ուսուցանող գրավոր)	**Նպաստել** հասկանալու պատմվածքի դաստիարակչական նշանակությունը՝ ձևավորելով սեփական արժեհամակարգ: **Զարգացնել** եզրահանգումներ, ամփոփումներ կատարելու կարողությունները:	**Շարունակել** հետևյալ միտքը. «Ամենահետաքրքիրն այս հատվածում այն է, որ …»: **Շարունակել** հետևյալ միտքը. «Ամենահուզիչը հատվածի այն մասն է, երբ… »: **Նկարել** որևէ խորհրդանիշ, որն արտահայտում է պատմվածքի միտքը:

		Նպաստել հասկանալու **ը** ձայնավորի արտասանության և գրության առանձնահատկությունները:	Կարողանալ պատմվածքում **առանձնացնել** այն պարբերությունները, որոնցում առկա են եզրահանգումներ:
1/1	***Թեմատիկ գրավոր աշխատանք 4***	**Ստուգել** և **գնահատել** ստացած գիտելիքները:	
6	Էքսկուրսիա-դաս (Մատենադարան, Գրողների տուն-թանգարան…, հանդիպում գրողների հետ)	**Զարգացնել** տեսական գիտելիքները գործնականորեն կիրառելու կարողությունները:	
6/1	Հովիկ Վարդումյան, «Երգը» պատմվածքը: Երկհնչյունների արտասանությունը և գրությունը (յա-իա-եա)	**Նպաստել** ճանաչելու մեր ազգային արժեքները: **Ծանոթացնել** ***յա-իա-եա*** երկհնչյունների արտասանության և գրության առանձնահատկություններին:	**Մեկնաբանել** պատմվածքի վերնագրի կապը բովանդակության հետ՝ բերելով բնագրային համապատասխան օրինակներ: Զուգահեռներ **անցկացնել** թեմայով նման ստեղծագործությունների միջև: **Վերարտադրել** պատմվածքում ներկայացված դեպքերը և **արտահայտել** դիրքորոշում: **Կատարել** ***յա-իա-եա*** երկհնչյունների արտասանության և գրության հետ կապված վարժություններ:
6/2	«Երգը» պատմվածքի բովանդակությունը: Երկհնչյունների արտասանությունը և գրությունը (յա-իա-եա)	**Ծանոթացնել** «Երգը» պատմվածքի բովանդակությանը: **Նպաստել** ընկալելու ***յա-իա-եա*** երկհնչյունների արտասանության և գրության առանձնահատկություններին:	**Ներկայացնել** պատմվածքի բովանդակությունը: **Ներկայացնել** պատմվածքի կառուցվածքը: Ստեղծագործաբար **վերաշարադրե**լ պատմվածքի բովանդակությունը՝ կիրառելով հեղինակային բառերը և պատկերավոր արտահայտությունները: **Կատարել** ***յա-իա-եա*** երկհնչյունների արտասանության և գրության հետ կապված վարժություններ:

6/3	«Երգը» պատմվածքի գաղափարը: Երկհնչյունների արտասանությունը և գրությունը (ույ-յու)	**Զարգացնել** հասկանալով ընթերցելու, տեքստում գլխավոր միտքն արտահայտող բառերն ու նախադասությունները **գտնելու** կարողությունը: **Օգնել** հասկանալու ***ու-յու*** երկհնչյունների արտասանության և գրության առանձնահատկությունները:	**Բացատրել** ստեղծագործության ենթաիմաստը և հիմնավորել հեղինակի ուղերձները: Բնագրից **բերել** ասածը հիմնավորող նախադասություններ: **Դատել** հետաքրքրող հարցերի շուրջ և **արտահայտել** դիրքորոշում թեմայի վերաբերյալ: **Կատարել** ***ու-յու*** երկհնչյունների արտասանության և գրության հետ կապված վարժություններ:
6/4	«Երգը» պատմվածքի կերպարների բնութագիրը Երկհնչյունների արտասանությունը և գրությունը (ույ-յու)	**Նպաստել** ընկալելու հերոսների գործողությունները, տեքստում **գտնել** նրանց բնութագրող բառերն ու նախադասությունները: **Նպաստել** հասկանալու ***ույ-յու*** երկհնչյունների արտասանության և գրության առանձնահատկությունները:	**Ներկայացնել** սեփական կարծիքը կամ հեղինակի վերաբերմունքը իր հերոսի նկատմամբ**:** **Կարդացած** պատմությունը կապել անձնական փորձի հետ: **Մեկնաբանել** պատմվածքի գլխավոր հերոսի արարքները և համեմատել մյուս հերոսների հետ: **Ներկայացնել** հերոսներին՝ պատմվածքից դուրս բերելով նրանց բնութագրող տողեր: **Ներկայացնել** հերոսների համեմատական բնութագիրը: **Կատարել** ***ու-յու*** երկհնչյունների արտասանության և գրության հետ կապված վարժություններ:
6/5	«Երգը» պատմվածքի վերլուծությունը: Երկհնչյունների արտասանությունը և գրությունը (ոյ, յո-իո)	**Զարգացնել** պատմվածքը վերլուծելու կարողությունները: **Նպաստել** հասկանալու ***ոյ, յո-իո*** երկհնչյունների արտասանության և գրության առանձնահատկությունները:	**Վերլուծել** պատմվածքի կերպարները՝ ըստ մշակած հարցաշարի: **Անվանել** պատմվածքի սիրելի հերոսին, գործող անձին և բացատրել, թե ինչով է պայմանավորված ընտրությունը: **Կատարել** ***ոյ, յո-իո*** երկհնչյունների արտասանության և գրության հետ կապված վարժություններ:

6/6	«Երգը» պատմվածքի դաստիարակչական նշանակությունը: Երկհնչյունների արտասանությունը և գրությունը (ոյ, յո-իո) (ուսուցանող գրավոր)	**Նպաստել** հասկանալու պատմվածքի դաստիարակչական նշանակությունը՝ ձևավորելով սեփական արժեհամակարգ: **Զարգացնել** եզրահանգումներ, ամփոփումներ կատարելու կարողություններ: **Նպաստել** հասկանալու ***ոյ, յո-իո*** երկհնչյունների արտասանության և գրության առանձնահատկությունները:	**Պարզաբանել** պատմվածքի դաստիարակչական նշանակությունը: **Արժևորել** պատմվածքը: **Կատարել** ***ոյ, յո-իո*** երկհնչյունների արտասանության և գրության հետ կապված վարժություններ: **Արտահայտել** վերաբերմունք հեղինակի ասելիքի վերաբերյալ: **Կատարել** ***ոյ, յո-իո*** երկհնչյունների արտասանության և գրության հետ կապված վարժություններ:
2	Որևէ պատմվածքի քննարկում	**Նպաստել** զարգացնելու քննադատական մտածողության, կարծիք, դիրքորոշում արտահայտելու կարողություններ:	
2	Թեմատիկ կրկնություն	**Ամփոփել** և **ամրապնդել** թեմայի վերաբերյալ ստացած գիտելիքները:	
1/1	***Թեմատիկ գրավոր աշխատանք 5***	**Ստուգել** և **գնահատել** ստացած գիտելիքները:	

	ԲԱԺԻՆ IV. ԵՎ ԱՅՍՊԵՍ ՀՅՈՒՍՎՈՒՄ Է ԻՄ ԵՐԳԸ		
6/1	Մարո Մարգարյան, «Մագաղաթի սրբությունով…» բանաստեղծությունը Ինչ է բանաստեղծությունը	**Զարգացնել** բանաստեղծությունը արտահայտիչ և հասկանալով ընթերցելու կարողություններ: **Ծանոթացնել** չափածո ժանրի տեսակներից մեկի՝ բանաստեղծության ժանրային առանձնահատկություններին:	**Կարդալ** բանաստեղծությունը արտահայտիչ, հասկանալով և հայերենին հատուկ շեշտադրումով: **Կարդալ** հասկանալով և **կազմել** բանաստեղծության զգայական ընկալման աղյուսակ (քառաբաժան): Բանաստեղծությունը **վերարտադրել** արձակ շարադրանքով: **Որոշել** բանաստեղծության խորհրդանիշները՝ դրանք կապելով ազգային մշակույթի հետ: **Ներկայացնել** բանաստեղծական տան առանձնահատկությունները:
6/2	«Մագաղաթի սրբությունով…» բանաստեղծության կառուցվածքն ու բովանդակությունը: Բանաստեղծական տուն	**Նպաստել** ընկալելու բանաստեղծության կառուցվածքը և բովանդակությունը, բացատրելու բանաստեղծության խորհրդանիշները: **Բացատրել՝** ինչ է բանաստեղծական տունը:	**Մտնանշել** բանաստեղծության կառուցվածքը: **Մեկնաբանել** բանաստեղծության բովանդակությունը: Բանաստեղծության համար **կատարել** մեղեդու ընտրություն: **Կատարել** բանաստեղծության նկարազարդում:
6/3	«Մագաղաթի սրբությունով…» բանաստեղծության գաղափարը: Բանաստեղծական տուն	**Նպաստել** ընկալելու բանաստեղծության գաղափարը:	**Բացահայտել** բանաստեղծության արտահայտած գաղափարը սեփական բառերով: **Որոնել** բանաստեղծության մեջ նկարագրվող մագաղաթի, մատյանների, քանդակների մասին տեղեկություններ և **ներկայացնել:** **Բացահայտել** բանաստեղծության գրության հավանական

			կամ փաստացի ժամանակաշրջանը: Բանաստեղծությունը **շարադրել** արձակ՝ նորովի կիրառելով պատկերավորման միջոցները՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում:
6/4	Մագաղաթի սրբությունով…» բանաստեղծության վերլուծությունը: Բանաստեղծական տուն	**Զարգացնել** բանաստեղծության պատկերներն ընկալելու, վերլուծելու կարողություններ:	**Վերլուծել** բանաստեղծությունը սեփական ընկալմամբ: **Ներկայացնել** բանաստեղծության քնարական հերոսի ապրումները: Համեմատելով **վերլուծել** տարբեր բանաստեղծությունների տեքստեր՝ հիմնավորելով: **Կատարել** մաթեմատիկական համապատասխան հաշվարկներ՝ ըստ բանաստեղծության տեքստի:
6/5	«Մագաղաթի սրբությունով…» բանաստեղծության դաստիարակչական նշանակությունը: Բանաստեղծական տուն (ուսուցանող գրավոր)	**Օգնել** հասկանալու բանաստեղծության դաստիարակչական արժեքը:	**Արտահայտել** վերաբերմունք բանաստեղծական խոհի վերաբերյալ: Բանաստեղծական տեքստից **առանձնացնել** պատկերավորման միջոցները՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում, **բացատրել** դրանց դերը բանաստեղծության մեջ: **Հորինել** բանաստեղծի մենախոսությունը՝ արժևորելով բանաստեղծությունը որպես պատկերավոր մտածողության և անձի հոգևոր զարգացման միջոց: **Գտնել** համապատասխան մեղեդի, տեսաֆիլմ՝ բանաստեղծության բովանդակությունը և հույզը հաղորդելու համար: **Փաստարկել** և **բացատրե**լ ընտրությունը:
6/6	Թեմայի ամփոփում	**Ամփոփել** և **ընդհանրացնել** թեմայից ստացած գիտելիքները:	

6/1	Արտաշես Ղազարյան, «Հայաստան» բանաստեղծությունը: Բաղաձայն հնչյունների արտասանությունը և գրությունը:	**Զարգացնել** բանաստեղծությունը արտահայտիչ և հասկանալով ընթերցելու կարողությունները: **Ծանոթացնել** բաղաձայն հնչյունների արտասանության և գրության առանձնահատկություններին:	**Կարդալ** բանաստեղծությունը արտահայտիչ, հասկանալով և հայերենին հատուկ շեշտադրումով: **Կարդալ** հասկանալով և **կազմել** բանաստեղծության զգայական ընկալման աղյուսակ (քառաբաժան): Բանաստեղծությունը **վերարտադրել** արձակ շարադրանքով: **Որոշել** բանաստեղծության խորհրդանիշները՝ դրանք կապելով ազգային մշակույթի հետ: **Ներկայացնել** բանաստեղծական տան առանձնահատկությունները:
6/2	«Հայաստան» բանաստեղծության կառուցվածքն ու բովանդակությունը: Բաղաձայն հնչյունների արտասանությունը և գրությունը	**Նպաստել** բանաստեղծության կառուցվածքի և բովանդակության ընկալմանը, ներկայացնել բանաստեղծության խորհրդանիշները: **Բացատրել** բաղաձայն հնչյունների արտասանության և գրության տարբերությունները:	**Մատնանշել** բանաստեղծության կառուցվածքը: **Մեկնաբանել** բանաստեղծության բովանդակությունը: Բանաստեղծության համար **կատարել** մեղեդու ընտրություն: **Կատարել** բանաստեղծության նկարազարդում:
6/3	«Հայաստան» բանաստեղծության գաղափարը: Բ-պ-փ բաղաձայնների հնչյունների արտասանությունը և գրությունը:	**Նպաստել** ընկալելու բանաստեղծության գաղափարը: **Խթանել** ***բ-պ-փ*** բաղաձայնների ուղղախոսական և ուղղագրական կանոնների, օրինաչափությունների իմացությունը և ճիշտ կիրառությունը խոսքի մեջ:	**Բացահայտել** բանաստեղծության արտահայտած գաղափարը սեփական բառերով: **Որոնել** բանաստեղծության մեջ նկարագրվող մագաղաթի, մատյանների, քանդակների մասին տեղեկություններ և **ներկայացնել:** **Բացահայտել** բանաստեղծության գրության հավանական կամ փաստացի ժամանակաշրջանը: Բանաստեղծությունը **շարադրել** արձակ՝ նորովի կիրառելով

			պատկերավորման միջոցները՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում: **Մեկնաբանել** ***բ-պ-փ*** բաղաձայն հնչյունների ուղղախոսական և ուղղագրական կանոնները, օրինաչափությունները և ճիշտ կիրառել խոսքում:
6/4	«Հայաստան» բանաստեղծության վերլուծությունը: Բ-պ-փ բաղաձայնների հնչյունների արտասանությունը և գրությունը:	**Զարգացնել** բանաստեղծության պատկերներն ընկալելու, վերլուծելու կարողություններ: **Խթանել** ***բ-պ-փ*** բաղաձայնների ուղղախոսական և ուղղագրական կանոնների, օրինաչափությունների իմացությունը և ճիշտ կիրառությունը խոսքի մեջ:	**Վերլուծել** բանաստեղծությունը սեփական ընկալմամբ: **Ներկայացնել** բանաստեղծության քնարական հերոսի ապրումները: Համեմատելով **վերլուծել** տարբեր բանաստեղծությունների տեքստեր՝ հիմնավորելով: **Կատարել** մաթեմատիկական համապատասխան հաշվարկներ՝ ըստ բանաստեղծության տեքստի: **Կատարել** վարժություններ ***բ-պ-փ*** բաղաձայն հնչյունների ուղղագրության շուրջ:
6/5	«Հայաստան» բանաստեղծության դաստիարակչական նշանակությունը: Բ-պ-փ բաղաձայնների հնչյունների արտասանությունը և գրությունը (ուսուցանող գրավոր)	**Օգնել** հասկանալու բանաստեղծության դաստիարակչական արժեքը: **Խթանել** ***բ-պ-փ*** բաղաձայնների ուղղախոսական և ուղղագրական կանոնների, օրինաչափությունների իմացությունը և ճիշտ կիրառությունը խոսքի մեջ:	**Արտահայտել** վերաբերմունք բանաստեղծական խոհի վերաբերյալ: Բանաստեղծական տեքստից **առանձնացնել** պատկերավորման միջոցները՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում, **բացատրել** դրանց դերը բանաստեղծության մեջ: **Հորինել** բանաստեղծի մենախոսությունը՝ արժևորելով բանաստեղծությունը որպես պատկերավոր մտածողության և անձի հոգևոր զարգացման միջոց: **Գտնել** համապատասխան մեղեդի, տեսաֆիլմ՝ բանաստեղծության բովանդակությունը և հույզը հաղորդելու համար: **Փաստարկել** և **բացատրե**լ ընտրությունը:

			Տեքստում **գտնել** համապատասխան բաղաձայններ և **դուրս գրել** ըստ տեսակի, **կատարել** հնչյունաբանական վերլուծություն:
6/6	Թեմայի ամփոփում	**Ամփոփել** և **ընդհանրացնել** թեմայից ստացած գիտելիքները:	
1/1	***Թեմատիկ գրավոր աշխատանք 6***	**Ստուգել** և **գնահատել** թեմայից ստացած գիտելիքները:	
5/1	Համո Սահյան, «Որոտանի կիրճում» բանաստեղծությունը: Ռիթմ	**Նպաստել** ըմբռնելու բանաստեղծական խոսքը, բանաստեղծության կառուցվածքը և տաղաչափական պատկերը: **Ծանոթացնել** արտահայտչական առանձնահատկություններին:	**Կարդալ** բանաստեղծությունը արտահայտիչ, հասկանալով և հայերենին հատուկ շեշտադրումով: **Որոշել** բանաստեղծության խորհրդանիշները՝ դրանք կապելով ազգային մշակույթի հետ: Բանաստեղծությունը **շարադրել** արձակ՝ նորովի կիրառելով սովորած բառերը, պատկերավորման միջոցները՝ մակդիրները և համեմատությունները: **Բացահայտել** բանաստեղծությունը գրելու հավանական կամ փաստացի ժամանակաշրջանը: **Պարզել** բանաստեղծության մեջ նկարագրված գրելու վայրը. տեղեկություն տվյալ վայրի մասին. **բերել** փաստեր բանաստեղծությունից: Չափածո տեքստերում **գտնել** և **մատնանշել** հնչյունական արտահայտչամիջոցները՝ ռիթմ, նմանաձայնություն, **բացատրել** դրանց դերը տվյալ բանաստեղծության մեջ:
5/2	«Որոտանի կիրճում»…» բանաստեղծության կառուցվածքն ու բովանդակությունը: Ռիթմ	**Նպաստել** ընկալելու բանաստեղծության կառուցվածքը և բովանդակությունը: **Բացատրել** բաղաձայն հնչյունների ար-	**Մատնանշել** բանաստեղծության կառուցվածքը: **Մեկնաբանել** բանաստեղծության բովանդակությունը: **Ուսումնասիրել** և **ցույց տալ** բանաստեղծության կառուց-

		տասանության և գրության տարբերությունները:	վածքը, տունը, ռիթմը, տողերի քանակը, վանկերի քանակն ամեն տողում: **Գտնել, դուրս գրել** մակդիրները, համեմատությունները, **բացատրել** դրանց նշանակությունը բանաստեղծության մեջ: **Բացատրել** տեքստի նշված բառերի կազմությունը, հնչյունափոխությունը, ուղղագրությունը. **կազմել** նոր բառեր տրված արմատներով, **ցույց տալ** արտասանության և գրության տարբերությունը:
5/3	«Որոտանի կիրճում»…» բանաստեղծության գաղափարը: Ռիթմ	**Նպաստել** ընկալելու բանաստեղծության գաղափարը: **Խթանել** հասկանալու բանաստեղծության ռիթմը:	**Որոշել** տեքստի հիմնական միտքը, հենակետային բառերը: **Բացահայտել** և **ներկայացնել** բանաստեղծության արտահայտած գաղափարը սեփական բառերով: **Որոնել** բանաստեղծության մեջ նկարագրվող թռչունների մասին տեղեկություններ և **ներկայացնել:** **Բացահայտել** բանաստեղծությունը գրելու հավանական կամ փաստացի ժամանակաշրջանը: Նկարազարդումներ **անել՝** հաղորդելու համար բանաստեղծության տրամադրությունը: **Կատարել** օտար լեզվով գրված պարզ բանաստեղծությունների կամ երգերի տեքստերի հայերեն թարգմանություն: **Մատնանշել** բառերի արտասանության և գրության տարբերությունները, բառակազմական վերլուծությամբ **ապացուցել** բառերի ուղղագրությունը:
5/4	«Որոտանի կիրճում»…» բանաստեղծության վերլուծությունը:	**Զարգացնել** բանաստեղծության պատկերներն ընկալելու, վերլուծելու կարողությունները:	**Կատարել** չափածո խոսքի լեզվաոճական վերլուծություն: **Պարզել** բանաստեղծության արտահայտած տրամադրությունը, հույզը:

			Մասնակցել բանաստեղծության շուրջ ծավալված բանավեճին, **արտահայտել** վերաբերմունք: **Անվանել** տարբեր տեսակետներից իրեն հետաքրքրող տողերը տեքստից: **Կարդալ** բանաստեղծությունը և **արտահայտել** զգացմունքներ, տպավորություններ: **Տարբերել** հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունները, **մատնանշել** դրանց արտասանության և գրության տարբերությունները, ճիշտ **արտասանել** և ճիշտ **գրել** արտասանությամբ և գրությամբ տարբերվող բառերը:
5/5	«Որոտանի կիրճում»…» բանաստեղծության դաստիարակչական նշանակությունը: Ռիթմ (ուսուցանող գրավոր)	**Օգնել** հասկանալու բանաստեղծության դաստիարակչական արժեքը: **Ձևավորել** և **զարգացնել** բանաստեղծության տեքստը արտահայտիչ, հասկանալով կարդալու կարողությունները:	Բանաստեղծությունն **ընկալել** որպես հոգևոր հարստություն և ազգային արժեքների մնայուն գրավական: **Գնահատել** հեղինակի վարքագիծը և **արտահայտել** վերաբերմունք: Քնարական հերոսին արդարացնելու հիմնավորումները **ներկայացնել** դատողական խոսքով: Բանավոր խոսքում ճիշտ **կիրառել** հայերենի հնչյունների արտաբերման և արտասանության կանոնները: Տեքստից **ընտրել, դուրս գրել, խմբավորել** պատկերավորման միջոցները: **Բացատրել** դրանց դերը տվյալ տեքստում:
1/1	**Գործնական աշխատանք 2:** Հավաքել և կազմել մակդիրների, համեմատությունների ձեռագիր բառարան	**Զարգացնել** տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններ:	

6//1	Գևորգ Էմին, «Մեր այբուբենը» բանաստեղծությունը: Հանգ Բաղաձայնների արտասանությունը և գրությունը	**Բացատրել** Գևորգ Էմինի «Մեր այբուբենը» բանաստեղծության հանգավորման առանձնահատկությունները: **Ծանոթացնել** հանգի գործածության առանձնահատկություններին: **Նպաստել** ընկալելու բաղաձայնների արտասանության և գրության տարբերությունները:	**Կարդալ** բանաստեղծությունը արտահայտիչ, հասկանալով և հայերենին հատուկ շեշտադրումով: **Որոշել** բանաստեղծության խորհրդանիշները՝ դրանք կապելով ազգային մշակույթի հետ: Բանաստեղծությունը **շարադրել** արձակ՝ նորովի կիրառելով սովորած բառերը, պատկերավորման միջոցները՝ մակդիրները և համեմատությունները: **Բացահայտել** բանաստեղծության գրության հավանական կամ փաստացի ժամանակաշրջանը: **Պարզել** բանաստեղծության մեջ նկարագրված գրության վայրը. տեղեկություն տվյալ վայրի մասին. **բերել** փաստեր բանաստեղծությունից: Չափածո տեքստում **գտնել** և **մատնանշել** հնչյունական արտահայտչամիջոցները՝ ռիթմը, նմանաձայնությունը, **բացատրել** դրանց դերը տվյալ բանաստեղծության մեջ: **Համեմատել** տարբեր տեքստերում կիրառված պատկերավորման միջոցները, բացատրել դրանց դերը տվյալ տեքստում: **Մատնանշել** բանաստեղծության պատկերները, հանգավորումը: **Բացատրել** բաղաձայնների արտասանության և գրության առանձնահատկությունները:
6/2	«Մեր այբուբենը» բանաստեղծության կառուցվածքն ու բովանդակությունը: Գ-կ-ք բաղաձայնների արտասանությունը և	**Ձևավորել** և **զարգացնել** բանաստեղծության տեքստը արտահայտիչ, հասկանալով կարդալու կարողություններ: **Նպաստել** ընկալելու բանաստեղծության	**Մատնանշել** բանաստեղծության կառուցվածքը: **Մեկնաբանել** բանաստեղծության բովանդակությունը: **Ուսումնասիրել** և **ցույց տալ** բանաստեղծության կառուցվածքը, տունը, ռիթմը, տողերի քանակը, վանկերի քանակն

	գրությունը:	կառուցվածքը և բովանդակությունը: **Բացատրել՝** ***գ-կ-ք*** բաղաձայն հնչյունների արտասանության և գրության տարբերությունները:	ամեն տողում: **Գտնել, դուրս գրել** մակդիրները, համեմատությունները, **բացատրել** դրանց նշանակությունը բանաստեղծության մեջ: **Բացատրել** տեքստի նշված բառերի կազմությունը, հնչյունափոխությունը, ուղղագրությունը. **կազմել** նոր բառեր տրված արմատներով, **ցույց տալ** արտասանության և գրության տարբերությունը: **Կատարել** բառային և բառարանային աշխատանք:
6/3	«Մեր այբուբենը» բանաստեղծության գաղափարը: Գ-կ-ք բաղաձայնների արտասանությունը և գրությունը:	**Նպաստել** ընկալելու բանաստեղծության գաղափարը: **Նպաստել** ընկալելու ***գ-կ-ք*** բաղաձայնների ուղղախոսական և ուղղագրական կանոնների, օրինաչափությունների իմացությունը և դրանց ճիշտ կիրառությունը:	**Որոշել** տեքստի հիմնական միտքը, հենակետային բառերը: **Բացահայտել** և **ներկայացնել** բանաստեղծության արտահայտած գաղափարը սեփական բառերով: **Որոնել** և **գտնել** բանաստեղծության մեջ թվարկվող՝ հայոց այբուբենին վերագրվող հատկանիշները: **Բացահայտել** բանաստեղծության գրության հավանական կամ փաստացի ժամանակաշրջանը: Նկարագրդումներ **անել՝** հաղորդելու համար բանաստեղծության տրամադրությունը: **Կատարել** օտար լեզվով գրված պարզ բանաստեղծությունների կամ երգերի տեքստերի հայերեն թարգմանություն: **Մատնանշել** բառերի արտասանության և գրության տարբերությունները, բառակազմական վերլուծությամբ **ապացուցել** բառերի ուղղագրությունը:
6/4	«Մեր այբուբենը» բանաստեղծության դաստիարակչական նշա-	**Զարգացնել** բանաստեղծության պատկերներն ընկալելու, վերլուծելու կարո-	**Կատարել** չափածո խոսքի լեզվաոճական վերլուծություն:

	նակությունը: Գ-կ-ք բաղաձայնների արտասանությունը և գրությունը:	ղությունները: **Խթանել *գ-կ-ք*** բաղաձայնների ուղղախոսական և ուղղագրական կանոնների, օրինաչափությունների իմացությունը և ճիշտ կիրառությունը:	**Պարզել** բանաստեղծության արտահայտած տրամադրությունը, հույզը: **Մասնակցել** բանաստեղծության շուրջ ծավալված բանավեճին, **արտահայտել** վերաբերմունք: **Անվանել** տարբեր տեսակետներից հետաքրքիր տողեր տեքստից: **Կարդալ** բանաստեղծությունը և **արտահայտել** զգացմունքներ, տպավորություններ: **Տարբերել** հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունները, **մատնանշել** դրանց արտասանության և գրության տարբերությունները, ճիշտ **արտասանել** և ճիշտ **գրել** արտասանությամբ և գրությամբ տարբերվող բառերը:
6/5	««Մեր այբուբենը» բանաստեղծության վերլուծությունը: Գ-կ-ք բաղաձայնների արտասանությունը և գրությունը (ուսուցանող գրավոր)	**Օգնել** հասկանալու բանաստեղծության դաստիարակչական արժեքը: **Խթանել *գ-կ-ք*** բաղաձայնների ուղղախոսական և ուղղագրական կանոնների, օրինաչափությունների իմացությունը և ճիշտ կիրառությունը գրավոր խոսքում:	Բանաստեղծությունն **ընկալել** որպես հոգևոր հարստություն և ազգային արժեքների մնայուն գրավական: **Գնահատել** հեղինակի վարքագիծը և **արտահայտել** վերաբերմունք: Քնարական հերոսի՝ այբուբենին նվիրված հիմնավորումները **ներկայացնել** դատողական խոսքով: Բանավոր խոսքում ճիշտ **կիրառել** հայերենի հնչյունների արտաբերման և արտասանության կանոնները: Տեքստից **ընտրել, դուրս գրել, խմբավորել** պատկերավորման միջոցները: **Բացատրել** դրանց դերը տվյալ տեքստում:-
6/6	Թեմայի ամփոփում	**Ամփոփել** և **ընդհանրացնել** թեմայից ստացած գիտելիքները:	

6/1	Վահագն Դավթյան, «Մի փշոտ, փափուկ ճանապարհ» բանաստեղծությունը	**Բացատրել** Վահագն Դավթյան, «Մի փշոտ, փափուկ ճանապարհ» բանաստեղծության հանգավորման առանձնահատկությունները: **Խթանել** ուղղախոսական և ուղղագրական կանոնների, օրինաչափությունների իմացությունը և ճիշտ կիրառությունը խոսքի մեջ:	Արտահայտիչ և հասկանալով **կարդալ** բանաստեղծությունը: **Հիմնավորումներ անել** բանալի բառերի կիրառմամբ: Չափածո տեքստը **վերափոխել** նկարագրական խոսքի՝ կիրառելով հեղինակային բառեր, բառակապակցություններ, նախադասություններ: **Հավելել, լրացնել** վերափոխված տեքստը: Վերափոխված արձակ տեքստին հերոս(ներ) **ավելացնել** կամ ընդհակառակը՝ **սեղմել, կրճատել**: Նոր ձևով **սկսել, շարունակել** և **ավարտել** տեքստը: **Վերլուծել** և **համեմատել** տարբեր բանաստեղծությունների տեքստեր: **Գտնել** նմանություններ և տարբերություններ:
6/2	«Մի փշոտ, փափուկ ճանապարհ» բանաստեղծության կառուցվածքն ու բովանդակությունը	**Ձևավորել** և **զարգացնել** բանաստեղծության տեքստը արտահայտիչ, հասկանալով կարդալու կարողությունները: **Նպաստել** ընկալելու բանաստեղծության կառուցվածքը և բովանդակությունը:	**Մատնանշել** բանաստեղծության կառուցվածքը՝ տուն, ռիթմ, հանգ: Արձակ շարադրանքով **վերարտադրել** բանաստեղծության բովանդակությունը: **Բացատրել** տեքստի պատկերավորման միջոցները՝ մակդիր և համեմատություն: **Մեկնաբանել** հեղինակի խոհը, զգացմունքները: Ներկայացնել սեփական զգացողությունները տեքստը կարդալուց հետո: **Կազմել** բանաստեղծության զգայական ընկալման (մոդալության) աղյուսակ:
6/3	«Մի փշոտ, փափուկ ճանապարհ» բանաստեղծության գաղափարը:	**Նպաստել** ընկալելու բանաստեղծության գաղափարը:	**Բացահայտել** բանաստեղծության գաղափարը սեփական ընկալմամբ:

		Խթանել ամրապնդելու ուղղախոսական և ուղղագրական կանոնների, օրինաչափությունների իմացությունը և ճիշտ կիրառությունը խոսքի մեջ:	**Կարծիք հայտնել** բանաստեղծության մասին: **Որոշել** տեքստի հիմնական միտքն արտահայտող նախադասությունը: Բանաստեղծությունը շարադրել արձակ, նոր ձևով կիրառել սովորած մակդիրները և համեմատությունները: **Նկարագարդումներ անել՝** հաղորդելու համար բանաստեղծության տրամադրությունը: **Գտնել** համապատասխան մեղեդի բանաստեղծության ռիթմին համահունչ:
6/4	«Մի փշոտ, փափուկ ճանապարհ» բանաստեղծության դաստիարակչական նշանակությունը	**Զարգացնել** բանաստեղծության պատկերներն ընկալելու, վերլուծելու կարողությունները: **Խթանել** բաղաձայնների ուղղախոսական և ուղղագրական կանոնների, օրինաչափությունների իմացությունը և ճիշտ կիրառությունը:	**Մեկնաբանել** բանաստեղծության վերնագիրը՝ կապելով բովանդակության հետ: **Գտնել** տեղեկություններ տեքստում հիշատակված տեղանունների վերաբերյալ:

6/5	«Մի փշոտ, փափուկ ճանապարհ» բանաստեղծության վերլուծությունը (ուսուցանող գրավոր)	**Օգնել** հասկանալու բանաստեղծության դաստիարակչական արժեքը: **Խթանել** բաղաձայնների ուղղախոսական և ուղղագրական կանոնների, օրինաչափությունների իմացությունը և ճիշտ կիրառությունը գրավոր խոսքում:	**Վերլուծել** բանաստեղծությունը՝ մեկնաբանելով քնարական հերոսի ապրումները: Վերաբերմունք **արտահայտել** հեղինակի հույզի վերաբերյալ, **ապրումակցել:** Տեղեկություններ **հաղորդել** տեքստում հիշատակված բույսերի, առարկաների, երևույթների վերաբերյալ: Բանաստեղծությունը **շարադրել** արձակ՝ նորովի կիրառելով սովորած բառերը, պատկերավորման միջոցները՝ մակդիրները և համեմատությունները: **Մատնանշել** բառերի արտասանության և գրության տարբերությունները: Բառակազմական վերլուծությամբ **ապացուցել** բառերի ուղղագրությունը: **Կազմել** գրագետ կապակցված խոսք:
6/6	Թեմայի ամփոփում	**Ամփոփել** և **ընդհանրացնել** թեմայից ստացած գիտելիքները:	
1/1	***Թեմատիկ գրավոր աշխատանք 7***	**Ստուգել** և **գնահատել** թեմայից ստացած գիտելիքները:	
4	Կիսամյակային կրկնություն	**Ամփոփել** և **ամրապնդել** կիսամյակում ստացած գիտելիքները:	
6	Տարեկան կրկնություն	**Ամփոփել** և **ամրապնդել** տարվա ընթացքում ստացած գիտելիքները:	

4	Նախագծային աշխատանքի պաշտպանություն	**Ամփոփել** և **գնահատել** նախագծային աշխատանքները:	
4	Տարեվերջյան էքսկուրսիա- դասեր	**Զարգացնել** ճանաչողական կարողությունները և հմտությունները:	
4	Դասեր՝ համակարգչային դասարանում	**Նպաստել** համակարգչային հմտությունների և կարողությունների զարգացմանը:	

ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մենք գիտենք, որ «Մայրենի 5»-ի ծրագիրը բաղկացած է չորս բաժնից: Բաժիններից առաջինը հեքիաթն է՝ իր լեզվաքերականական նյութերով:

Երեխայի համար հեքիաթը կրթական և ճանաչողական մեծ արժեք ունի: Այն երեխաների սիրած ժանրն է: Եվ պատահական չէ, որ 5-րդ դասարանի մայրենիի ծրագրում ընդգրկված են հեքիաթներ՝ ոչ միայն ընթերցողական կարողությունները զարգացնելու նպատակով:

Հեքիաթի կրթական արժեքը հսկայական է. այն սովորեցնում է հայրենասիրություն, ծնողասիրություն, անշահախնդրություն, ընկերասիրություն, համեստություն, ազնվություն, աշխատասիրություն, քաղաքավարություն և այլն, ինչը հանգեցնում է սովորողի արժեքային համակարգի ձևավորմանն ու զարգացմանը, կողմնորոշում դրսևորելուն:

Հեքիաթներն ունեն իրենց առանձնահատկությունները:

Դրանք պահպանում են ազգային անհատականությունը, և յուրաքանչյուր ժողովրդական հեքիաթ յուրովի է առանձնահատուկ:

Կարևոր է հեքիաթի ուսուցումը: Սովորաբար, նախքան հեքիաթ կարդալը, կատարվում է փոքրիկ նախապատրաստական զրույց (կարող եք հարցնել, թե ինչ հեքիաթներ կան, որոնք եք կարդում, կազմակերպեք հեքիաթների ցուցահանդես):

Կենդանիների մասին հեքիաթներ կարդալուց առաջ խորհուրդ է տրվում հիշել կենդանիների սովորությունները, ցույց տալ նկարազարդումներով:

Եթե հեքիաթի նյութը բնության մասին է, ապա զուգահեռ պետք է իրականացվի էքսկուրսիա-դաս՝ դիտարկումներ, գրառումներ անելու, զուգորդումներ անցկացնելու նպատակով:

Սովորաբար կենդանիների մասին հեքիաթ կարդալը նախապատրաստություն չի պահանջում, բայց երբեմն պետք է հիշեցնել, տեղեկություն տալ այս կամ այն կենդանու վարքի և սովորության մասին:

Ուսուցիչը կարդում է հեքիաթը, բայց ցանկալի է նաև այն պատմել:

Հեքիաթը ներկայացրեք որպես իրատեսական պատմություն՝ առանց բացատրելու, որ «կյանքում դա չի պատահում»: Հեքիաթը կարող է օգտագործվել բնութագրեր և գնահատականներ տալու համար, քանի որ հեքիաթների հերոսները սովորաբար մեկ կամ երկու բնութագրական հատկությունների արտահայտիչներն են, որոնք հստակորեն բացահայտվում են իրենց գործողություններում:

Մի՛ վերափոխեք հեքիաթի բարոյականությունը մարդկային կերպարների և փոխհարաբերությունների տարածքում: Հեքիաթի դիդակտիկությունն այնքան ուժեղ և վառ է, որ երեխաներն իրենք եզրակացություններ են անում. «Գորտը ճիշտ է՝ պարծենալ պետք չէ» («Ճանապարհորդ գորտը» հեքիաթ): Եթե երեխաները նման եզրակացությունների հանգեն, ապա կարող ենք ենթադրել, որ հեքիաթ կարդալը հասել է իր նպատակին:

Հեքիաթի ուսուցումը օգնում է արտահայտել սեփական կարծիք, զարգացնում է երեխաների խոսքը և ստեղծագործականությունը:

Հեքիաթն օգտագործվում է նաև պլաններ կազմելու, հեքիաթը վերարտադրելու կրթական աշխատանքների համար: Սովորողները պլանի մասերը, վերնագրի և բովանդակության կապը հեշտությամբ հայտնաբերում են հեքիաթի տեքստում:

Հեքիաթը վերլուծելիս չպետք է կենտրոնանալ այն փաստի վրա, որ դրանում ինչ-որ բան գեղարվեստական է, այլապես հեքիաթի հմայքն անհետանում է:

Հեքիաթի բովանդակությունը, դրա ամբողջական վերլուծությունը մշակելուց հետո այն պետք է կարդալ դերերի միջոցով: Արտահայտիչ ընթերցանությունը, դերերով կարդալը միշտ հաճույք են պատճառում երեխաներին, հեշտացնում հեքիաթին բնորոշ հատկությունների յուրացումը՝ խոսակցական լեզու, կրկնություններ, հատուկ ռիթմ:

Հեքիաթ կարդալու հետ կապված հնարավոր է պատրաստել տիկնիկներ, տիկնիկային թատրոնի զարդեր, կենդանիների և մարդկանց արձանիկներ՝ տիկնիկային կամ ստվերային թատրոնի համար:

Տարրական դիտարկումներ պետք է կատարվեն հեքիաթի ստեղծագործական առանձնահատկությունների վերաբերյալ, քանի որ այդ դիտարկումները մեծացնում են երեխաների՝ հեքիաթի ընկալման գիտակցությունը:

Հեքիաթի հետ աշխատելիս (երեխաների կարդալը, մեծահասակների բարձրաձայն կարդալը, հեքիաթների վերարտադրման տարբեր ձևերի և այլ տեսակների տեղափոխումը) անհրաժեշտ է նշել դրա առանձնահատկությունները, երեխաների հետ միասին հասնել դրա իմաստին, լայնորեն օգտագործել հեքիաթը որպես երեխաների գեղագիտական դաստիարակության աղբյուր:

Պետք է կատարել հեքիաթների տարբերակների համեմատություն, տարբեր ժողովուրդների համար նույն սյուժեի տարբեր «հրատարակություններ», հեքիաթի խոր ընկալման համար խաղալիքների ներգրավում՝ ժողովրդական հեքիաթի և գրականության միջև կապ հաստատելու համար:

Հեքիաթն ուսումնասիրելու ամենալավ միջոցը բեմադրելն է: Դա նպաստում է երկխոսություններով հարստացնելու, զարգացնելու խոսքը:

Մեծահասակների ղեկավարությամբ երեխաները հեքիաթի դիպաշարի հիման վրա բեմագիր (սցենար) են կազմում: Այս աշխատանքը հեքիաթն ընկալելու հուսալի միջոց է:

Հնչերանգը մեծ նշանակություն ունի հեքիաթներ կարդալիս: Սխալ հնչերանգը՝ ինտոնացիան, «քանդում է հեքիաթային աշխարհի պատրանքը»: Հեքիաթը դառնում է ձանձրալի, անհետաքրքիր, անգույն, և անհետանում են հերոսների խառնվածքը, անհատականության արտացոլումը, իմաստի յուրահատուկ երանգները:

Հեքիաթի խոսքը պարզ է, հետևաբար՝ վերապատմումը պետք է մոտ լինի տեքստին (ծիծաղով, խաղով կամ տխրությամբ):

Փորձենք «Հեքիաթ» բաժնից ներկայացնել մի քանի դասի պլան՝ Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան:

Դասագրքում «Հեքիաթ» բաժնի առաջին թեման «Ոսկի արտ» հայկական ժողովրդական հեքիաթն է՝ «Նախադասություն» լեզվաքերականական նյութով: Այդ թեմային թեմատիկ պլանով հատկացված է 5 դասաժամ:

Ձեզ ենք ներկայացնում թեմայի 3-րդ դասը՝ դասի պլանով:

ԴԱՍ 3

Դասի թեման՝ «Ոսկի արտ» հեքիաթի կերպարների բնութագիրը: Նախադասություն:

Դասի նպատակը՝

- **Նպաստել** զարգացնելու սովորողների ընթերցելու, հեքիաթի տեքստը հասկանալու, հերոսներին բնութագրելու կարողություններ՝ հարստացնելով բառապաշարը տարբեր տեսակի նախադասությունների կիրառմամբ:
- Սովորողի մեջ **ձևավորել** տեքստի ուսումնասիրման, մտքերը տարբեր նախադասություններով արտահայտելու և հիմնականն ու երկրորդականը միմյանցից առանձնացնելու կարողություններ:
- **Նպաստել** զարգացնելու հեքիաթի հերոսներին ըստ նրանց արարքների բնութագրելու կարողություններ:

Դասի վերջնարդյունքները՝

- Բնագիրը վարժ, անսխալ ու արտահայտիչ **կարդալ:**
- Հեքիաթի բովանդակությունը **վերարտադրել** ստեղծագործաբար:
- **Վերարտադրել** ընթերցած հեքիաթը՝ բնութագրելով և վերլուծելով կերպարները:
- **Նկարագրել** և **ներկայացնել** հերոսներին, նրանց արարքներն ու դրդապատճառները:
- **Ձևավորել** ստեղծագործելու, կանխատեսելու կարողություններ:
- **Դաստիարակել** ագահությունից, աչքածակությունից, ստախոսությունից զերծ մնալու, ճշմարտախոս, ազնիվ, բարի, մարդասեր լինելու հատկանիշներ:
- **Կազմել** կապակցված խոսք՝ կիրառելով համապատասխան լեզվաքերականական նյութը (նախադասություն):

Ուսումնական նյութեր՝ «Ոսկի արտ» հեքիաթը, կերպարի բնութագրման գծակարգեր, հեքիաթի փաստերը լուսաբանող թերթիկներ:

Ուսուցման մեթոդներ՝ «Մտագրոհ», «Խթանող հարցեր» «Բազմանիստ», «Ուղղորդված ընթերցանություն», «Կանխատեսման ուղեցույց»:

Դասի տևողությունը՝ 45 րոպե:

Դասի ընթացքը

Տնային առաջադրանքների ստուգում ենք իրականացնում: Դասի այս փուլում դրական արդյունքների հասնելու համար պետք է կարողանանք ծավալել այնպիսի գործողություն, որը հնարավորություն կընձեռի բարձրացնելու դասի նպատակաուղղվածությունը և արդյունավետությունը՝ համակարգված հնարքների կիրառման միջոցով հնարավորինս արագ ստուգելու դասարանի բոլոր աշակերտների տնային աշխատանքները: Սա ենթադրում է, որ ուսուցիչը հնարավորություն կստանա կարճ ժամանակահատվածում (5-7 րոպե) բացահայտել աշակերտների մեծամասնության գիտելիքների աստիճանը և ընդհանուր բացթողումները, տնային առաջադրանքի ստուգման ընթացքում հիմնական հասկացությունների արդիականացման և կարգավորման հնարավորությունը, կվերացնի բացահայտված թերությունների պատճառները:

Տնային աշխատանքները ստուգելուց և բացթողումները շտկելուց հետո որոշ աշակերտների գնահատում ենք (ուսուցանող գահատում) և անցում կատարում դասի հաջորդ փուլին:

«Խթանող հարցերի» միջոցով ամփոփում ենք նախորդ դասը, դարձյալ գնահատում՝ հիմնավորելով գնահատականը (բնութագրական):

Տնային հանձնարարությունների ստուգումից և հին դասի կարճ հարցումից հետո անցնում ենք նոր նյութի ուսուցմանը:

Նոր թեմայի ուսուցումը կազմակերպում ենք **ԽԻԿ** համակարգով:

ԽԻԿ-ը ժամանակակից ուսուցման մեթոդների համակարգ է, որը ուսուցման գործընթացը բաժանում է հետևյալ փուլերի՝

Խթանում

Իմաստի ընկալում

Կշռադատում:

Բնութագրելով յուրաքանչյուր փուլում ուսուցչի անելիքը՝ ԽԻԿ-ը նաև ենթադրում է մի շարք մեթոդներ՝ տվյալ փուլին անհրաժեշտ արդյունքին հասնելու համար:

Խթանման փուլում պետք է հիմնվել աշակերտների նախկին փորձառության և գիտելիքների վրա, հետաքրքություն առաջացնել թեմայի վերաբերյալ. որոշ դեպքերում ավելի արդյունավետ կլինի այն անցկացնել խաղերի միջոցով:

Պետք է իմանալ, որ **խթանման** փուլի հիմնական նպատակներից են՝ նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողների գիտելիքները, քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով՝ ակտիվացնել, աշակերտների մեջ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

Դասի նախնական փուլը սկսում ենք **մտագրոհով**: «Հարևան» հիմնաբառով կազմակերպում ենք մտագրոհ:

«Հարևան» բառի վերաբերյալ աշակերտներն արտահայտում են իրենց պատկերացումները, և ուսուցիչն անմիջապես գրատախտակի վրա գրանցում է նրանց արտահայտած բոլոր մտքերը:

Գծակարգը կլինի մոտավորապես այսպիսին.



Այնուհետև սովորողներին հանձնարարվում է մտագրոհի հետևանքով առաջացած **կապերով** (բառերով) և **«հարևան»** բառով կազմել մեկ նախադասություն՝ բնութագրելով հերոսին: Կարելի է սահմանումը ներկայացնել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր շարադրանքով: Ապա աշակերտները կամ խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում է հերոսին բնաթագրող իր տարբերակը: Այս մոտեցումը նպաստավոր պայ-

մաններ է ստեղծում նոր մտքերի և տեսակետների ձևավորման համար, ինչպես նաև ընդհանուր ուժերով ձեռք բերված գիտելիքը հիշողության մեջ դրոշմվելու ավելի մեծ հավանականություն կա:

Խթանումից հետո անցնում ենք **իմաստի ընկալման** փուլին՝ կիրառելով «Ուղղորդված ընթերցանություն» մեթոդը:

Դասանյութը բաժանում ենք երեք իմաստային դադարների և կարդում ենք առաջին մասը (կամ սովորողներն են կարդում), երբ ավարտում ենք, առաջին դադարից հետո հարց ենք տալիս սովորողներին՝ «Ձեր կարծիքով ի՞նչ է լինելու հետո»: Աշակերտներն իրենց կանխատեսումներն են անում հետագա գործողությունների ընթացքը կանխատեսելու ուղղությամբ, սակայն յուրաքանչյուրի կանխատեսումից հետո կրկին հարց ենք տալիս. «Ինչո՞ւ եք այդպես կարծում»՝ ապահովելով թեմայի պատճառահետևանքային կապերը: Բոլորն իրենց կարծիքներն արտահայտում են՝ ապահովելով մոտիվացիան:

Գծակարգով աշխատելիս կարելի է ուսուցումը կազմակերպել անհատական կամ խմբային աշխատանքով, որն ավելի է ամրապնդում յուրացումը:

Ապա անցնում ենք դասի երկրորդ մասի ընթերցմանը, որ աշակերները հասկանան՝ ինչ եղավ հետո, և համեմատեն իրենց կանխագուշակման հետ՝ արդյոք ճիշտ էին գուշակել գործողությունների հետագա ընթացքը:

Հատվածը ընթերցելուց հետո երրորդ կանգառն ենք անում՝ կրկին նույն հարցերն առաջադրելով՝ պարզելու համար սովորողների կանխատեսելու, տրամաբանելու կարողությունները: Սա նպաստում է աշակերտների կանխատեսումների զարգացմանը: Ենթադրություններ անելով՝ ձևավորվում և զարգանում է սովորողի բանավոր խոսքը, զարգանում է քննադատական մտածողությունը, կարողանում է դիրքորոշում դրսևորել, սեփական կարծիք արտահայտել:

Կարող ենք սովորողներին հանձնարարել յուրաքանչյուր կանգառից հետո լրացնել «Կանխատեսման ուղեցույցի» գծակարգը:

Կանխատեսման ուղեցույց

1. Ի՞նչ է լինելու հետո: ա) բ) գ)	**2. Ինչո՞ւ եմ այդպես կարծում:** ա) բ) գ)
3. Ի՞նչ եղավ: ա) բ) գ)	**4. Նոր ավա՛րտ հորինիր և վերնագրի՛ր:**

Ընթերցումն ավարտելուց հետո կազմակերպում ենք քննարկում և մտքերի փոխանակություն:

Այնուհետև անցնում ենք **կշռադատման** փուլին:

Դասարանը բաժանում ենք խմբերի՝ հանձնարարելով կատարել հետևյալ առաջադրանքը. Երկսյուն աղյուսակում տեքստից դուրս գրել ժողովրդախոսակցական ոճին հատուկ նախադասությունները՝ գրելով դրանց համարժեք գրականը:

Ժողովրդախոսակցական նախադասություն	**Գրական հայերեն նախադասություն**

Աշխատանքներն ավարտելուց հետո խմբերը կարդում են իրենց գրառումները, բացատրում են՝ իրենից ինչ է ներկայացնում նախադասությունը, ինչպես են կազմվում նախադասությունները (նախորդ դասարաններից արդեն ծանոթ են այդ թեմային): Ուսուցիչն հավելումներ է կատարում լեզվաքերականական նյութի վերաբերյալ, սովորողները կազմում են նախադասություններ, օրինակներ են բերում բնագրի նախադասություններից: Գնահատում ենք սովորողներին ուսուցանող գնահատմամբ, քանի որ առաջին կիսամյակում միավորային գնահատում չկա:

Այնուհետև աշակերտներին բաժանում ենք խմբերի և տալիս ենք *ուսումնական նյութ 1-ը՝* «Լուսաբանել հեքիաթի փաստերը»:

Անուն, ազգանուն _____Ամսաթիվ_____

Լուսաբանեք այս հեքիաթի փաստերը

Ներկայացրո՛ւ պատմվածքում եղած փաստերի ամփոփումը

Հեքիաթի վերնագիրը

_____

Հեղինակը _____

Կերպարները

_____

_____

_____

_____

Միջավայրը

_____

_____

_____

_____

Հեքիաթի գլխավոր միտքը/գաղափարը

_____

_____

_____

_____

«Հայրը և զավակները» հեքիաթի ուսուցումը - 5 ժամ

ԴԱՍ 2

(Ա հատված)

Թեման՝ «Հայրը և զավակները» հեքրիաթի բովանդակությունը և գաղափարը: Հաղորդակցում, տեսակները

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի նպատակը՝

- **Խթանել** սովորողի հաղորդակցական կարողությունների զարգացումը:
- **Նպաստել** հասկանալու հեքիաթի բովանդակությունն ու գաղափարը:
- **Առաջացնել** հետաքրքրություն նկարչության, երաժշտության նկատմամբ:
- **Օգնել** աշակերտին՝ սեփական բառերով արտահայտել լսածն ու հասկացածը:

Դասի վերջնարդյունքները՝

- **Կարդալ** արտահայտիչ և սահուն:
- Հեղինակային և սեփական բառերով համառոտ **պատմել** հեքիաթի բովանդակությունը:
- Բանավոր և գրավոր **վերաշարադրել** հեքիաթը տարբեր հերոսների անունից:
- **Վերարտադրել** «Հայրը և զավակները» հեքիաթը՝ վեր հանելով նրա հիմնական գաղափարը:
- **Հորինել** հեքիաթ՝ պահպանելով ժանրին բնորոշ առանձնահատկությունները:
- **Որոշել** խորվաթական ժողովրդական հեքիաթի տարբերակիչ առանձնահատկությունները՝ համեմատելով հայկական ժողովրդական հեքիաթների հետ:
- Կարծիք **հայտնել** հեքիաթի մասին:
- **Համեմատել** հեքիաթի գրական տեքստը համանման կինոնկարի, ներկայացման կամ մուլտֆիլմի հետ. **նշել** նմանությունները և տարբերությունները:

- **Գտնել** հեքիաթի բովանդակությանը համապատասխան մեղեդի, տվյալ թեմայի հետ կապված **նկարազարդումներ անել** կամ **ծեփել:**
- **Դիտել** հեքիաթի թեմատիկ նկարը և **կազմել** շարադրանք՝ վերնագրելով բովանդակությանը համապատասխան:
- **Ներկայացնել** խոսքային և ոչ խոսքային հաղորդակցական տեքստեր, մենախոսություն, երկխոսություն, ժեստային հաղորդակցություն, մնջախաղ, դերախաղ:
- **Կատարել** նորածանոթ բառերի բացատրություն: Դրանք գործածել գրավոր խոսքում:

Ուսումնական մեթոդները՝ «Բազմանիստ», «Խթանող հարցեր», «Նախնական կազմակերպիչ», «Ուղղորդված ընթերցանություն», «Քառաբաժան», «Նկարի վերլուծության գծակարգ»:

Ուսումնական նյութերը՝ բնագրի պատճեններ, բազմանիստի գծակարգեր, հասկանալու և վերլուծելու գծապատկերներ, նկարի վերլուծության գծակարգեր, թուղթ, նշագրիչներ:

Դասի ընթացքը

Ստուգում ենք տնային հանձնարարությունը, սխալների վերլուծություն ենք կատարում, եթե այդպիսիք կան, բնութագրական գնահատում ենք մի քանի աշակերտի՝ հիմնավորելով այն: Ապա ստուգում ենք հին նյութի յուրացումը, գնահատում (ուսուցանող) և անցնում նոր նյութի ուսուցմանը:

Նոր դասը սկսում ենք «Բազմանիստով»: Ինչպես գիտենք, սա խթանման փուլում կիրառվող վարժություն է, որն օգնում է սովորողներին ուսուցման գործընթացին մասնակցելու համար ակտիվանալ և կենտրոնանալու: Գրատախտակին կառուցում ենք բազմանիստ՝ հիմնաբառ ընտրելով «ընտանիք»-ը:

Բազմանիստը կարող է ունենալ հետևյալ տեսքը.



Վարժության վերջում սովորողներին առաջարկվում է սկզբնաբառով և վերջնաբառով կազմել մեկ նախադասություն՝ դրա համար նրանց տրամադրելով որոշակի ժամանակ: Մի քանի աշակերտ կներկայացնեն իրենց կազմած նախադասությունները: Շատ արդյունավետ է, եթե դասի ավարտին ուսուցիչը նորից անդրադառնա բազմանիստին:

Աշակերտներն արդեն տրամադրված են դասին:

Կատարում ենք ևս մեկ խթանման վարժություն՝ «Նախնական կազմակերպիչ»: Այս մեթոդը շատ արդյունավետ է խթանման փուլում սովորողների հետաքրքրությունը շարժելու համար: Մեթոդի էությունը հետևյալն է. սովորողների ուշադրությունը կենտրոնացնելու և հետաքրքրություն առաջացնելու նպատակով ուսուցիչը նախապես ընտրում է թեմայի հետ խիստ կապված և հետաքրքրաշարժ մի փաստ կամ դրվագ և ընթերցում այն, կամ երեխաներին խնդրում է պատմել իրենց ընտանիքի, ընտանիքի անդամների փոխհարաբերությունների մասին, որից հետո կազմակերպել փոքրիկ քննարկում:

Այնուհետև սովորողներին բաժանում ենք խմբերի և հանձնարարում ենք կարդալ հեքիաթի Ա հատվածը և կատարել հետևյալ առաջադրանքները.

- Մեկ նախադասությամբ գրել, թե ինչի մասին էր կարդացած հատվածը:
- Բնագրից ընտրել 2 հենակետային բառ, որը հատվածի բովանդակության առանցքն է կազմում:
- Հատվածից դուրս գրել մեկ նախադասություն, որում տեքստի հենակետային միտքն է ամփոփված:
- Նկարել որևէ խորհրդանիշ, որն արտահայտում է հատվածի գաղափարը:
- Կարդացած հատվածը կապել որևէ երաժշտության հետ: Հիմնավորել ընտրությունը:

Աշխատանքին հատկացված ժամանակը լրանալուց հետո խմբերը կարդում են իրենց գրառումները, լրացնում միմյանց:

Կազմակերպում ենք քննարկում, ապա բնութագրական գնահատում կատարում և գրատախտակին գրում ենք (անհատական աշխատանք).

Շարունակել հետևյալ նախադասությունները.

Ամենահետաքրքիրն այս հատվածում այն է, որ _____:

Ամենահուզիչը հատվածի այն մասն է, երբ _____:

Երբ պատասխաններն արդեն պատրաստ են, հնարավորություն ենք ընձեռում երեխաներին կարդալ իրենց գրառումները:

Խրախուսում ենք յուրաքանչյուրին և բացատրում, որ մենք բոլորս դասի ընթացքում հաղորդակցվեցինք: Պետք է իմանան, որ հաղորդակցումը տեղեկության փոխանցման գործընթաց է, որը կատարվում է խոսքով և ժեստերով: Հաղորդակցումը կարող է տեղի ունենալ դեմառդեմ, ինչպես հիմա, նաև կապի տարբեր միջոցներով՝ հեռախոսով, էլեկտրոնային փոստի միջոցով և այլն: Հաղորդակցումը լինում է **խոսքային** և **ոչ խոսքային:**

Հաղորդակցման հիմնական արտահայտությունը խոսքայինն է, որի մեջ երկխոսությունն ունի մեծ դեր: Երկխոսությունը, որի պարզ ձևը զրույցն է, կայանում է, եթե դրան մասնակցում են երկու կամ ավելի մարդ:

Ոչ խոսքային հաղորդակցումը տեղի է ունենում զանազան ժեստերի և դիմախաղի միջոցով, որը կոչվում է շարժումների լեզու: Ժեստը նույնպես տեղեկատվություն է, այն շարժանշան և հաղորդակցական գործառույթ ունի: Տարբերակվում են գլխի և ձեռքի ժեստեր: Մենք ամեն օր միմյանց հետ հաղորդակցվում ենք այս բոլոր ձևերով:

Ասածն ամրապնդելու նպատակով հանձնարարում ենք կատարել հետևյալ առաջադրանքները.

1. Հեքիաթը կրկին կարդալով՝ դո՛ւրս գրիր խոսքային հաղորդակցման (երկխոսության) օրինակներ:

2. Երկխոսություններում գտի՛ր դիմելաձեր և քննարկի՛ր ընկերներիդ հետ:
3. Դիմախաղով ցո՛ւյց տուր այս նախադասության միտքը, որ հասկանալի լինի. «Դուստրերն ու փեսաները սկզբում շատ զարմացան, հետո սկսեցին հոնքերը կիտել»:
4. Քո կյանքից հիշի՛ր ոչ խոսքային հաղորդակցման իրավիճակ և ներկայացրո՛ւ մնջախաղով: Իրենց գրառումները ներկայացնելուց հետո սովորողներին բաժանում ենք քառաբաժանի գծակարգեր և հանձնարարում ենք լրացնել աղյուսակը (խմբային աշխատանք):

1. Ի՞նչ զգացում ապրեցիր ընթերցելիս: ա) բ) գ)	**3. Ի՞նչ գույնի է ստեղծագործությունը:** ա) բ) գ)
2. Ի՞նչ մեղեդի հիշեցիր ընթերցելիս: ա) բ) գ)	**4. Ի՞նչը կփոխեիր ստեղծագործության մեջ:** ա) բ) գ)

Խմբերը հերթով կարդում են իրենց աշխատանքները: Կատարում ենք գնահատում և հանձնարարում ենք ուշադիր դիտել էջի թեմատիկ նկարը, ապա բաժանում ենք «Նկարի վերլուծության գծակարգերը» և հանձնարարում նկարը վերարտադրել հետևյալ պահանջներին համապատասխան.

1. 2-3 րոպե ուսումնասիրե՛ք նկարը:
2. Ընդհանուր պատկերացո՛ւմ կազմեք նկարի մասին:
3. Նկարը դիտե՛ք մանրամասնորեն:
4. Ստորև բերվող աղյուսակում թվարկե՛ք նկարում պատկերված մարդուն, առարկաները և գործողությունները:

Նկարի վերլուծության գծակարգ

Մարդ	Առարկա, խորհրդանիշ	Գործողություն

Եթե չեն հասցնում աշխատանքն ավարտել , ապա հանձնարարում ենք որպես տնային աշատանք:

Կատարում ենք **անդրադարձ**:

Ուսումնական նյութ 1

Լուսաբանել հեքիաթի փաստերը

(գրավոր ներկայացնել հեքիաթում եղած փաստերի ամփոփումը)

Հեքիաթի վերնագիրը_____

Հեքիաթի տեսակը_____

Կերպարները

_____

_____

_____

Միջավայրը

_____

_____

_____

Հեքիաթի գլխավոր միտքը/ գաղափարը

_____

_____

_____

Հանձնարարությունը կատարելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը, քննարկում և մտքերի փոխանակություն են կատարում, ձևավորող գնահատում ենք անում, այնուհետև անցնում ենք կերպարների բնութագրմանը:

Խմբերին բաժանում ենք «**Հերոսների բնութագրման թերթիկը**» և հանձնարարում լրացնել այն:

Ուսումնական նյութ 2

Հերոսների բնութագրման թերթիկ

Հերոս	Հերոսի արտաքին նկարագիրը	Հերոսի երկու վարքագիծ	Ինչո՞ւ նա այդպես վարվեց

Հանձնարարության համար նախատեսված ժամանակը լրանալուց հետո սովորողները խումբ առ խումբ ներկայացնում են իրենց աշխատանքները, լրացնում են միմյանց, պարզաբանումներ անում և գնահատվում ձևավորող գնահատմամբ:

Ուսուցիչն **անդրադարձ** է կատարում, հանձնարարում տնային աշխատանք դասագրքի վարժություններից:

ԱՌԱԿԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժողովուրդներն իրենց պատմության ընթացքում ստեղծել են ասացվածքներ, առածներ, հեքիաթներ, առակներ:

Առակները դարերի ընթացքում մուտք են գործել աշխարհի շատ ժողովուրդների, այդ թվում՝ հայ ժողովրդի հոգևոր գանձարանը և դարձել նրա անբաժանելի մասը:

Առակը պատմություն կամ զրույց է, որն հաճախ ունի ավարտ՝ ներկայացնելով տվյալ բովանդակության բարոյախոսական եզրահանգումը:

Առակի պատմողական մասը ժանրային առումով նրան մոտեցնում է հեքիաթին, հատկապես հրաշապատում-կենդանական հեքիաթին:

Առակները լինում են ուսուցողական, աստվածաշնչյան և այլն:

Առակներն ունեն դաստիարակչական մեծ նշանակություն:

Անհիշելի ժամանակներից հայ ժողովուրդն ստեղծել է խոսքի կատարյալ նմուշներ՝ հեքիաթներ, առասպելներ, հանելուկներ, շուտասելուկներ, առածներ, ասացվածքներ, որոնք էական նշանակություն են ունեցել երեխաների բարոյական դաստիարակության գործում: Պատահական չէ, որ դրանք արժանացել են Խ. Աբովյանի, Ղ. Ալիշանի, Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի և այլ նշանավոր մտավորականների բարձր գնահատականին: Այսպես, Ղ. Աղայանը դրանք համարել է ոչ միայն հայեցի դաստիարակության, այլև երեխայի լեզվի մարզման և ազգային մտածողության կերտման միջոց:

Առակների միջոցով երեխաների մեջ դաստիարակվում է հայրենասիրություն, ազնվություն, աշխատասիրություն, ինչպես նաև ծուլությունը, չարությունը, շահամոլությունը և վախկոտությունը խարազանելու պատրաստակամություն: Ուսուցողական և դաստիարակչական տեսակետից առակների կրթական արժեքն այսօր էլ բարձր է գնահատվում:

«Կռիլովի առակները ոչ թե սովորական այլաբանություններ են, այլ բանաստեղծական պատկերներ, փոքրիկ պատմվածքներ, դրամաներ՝ բանաստեղծական ընդգծված կերպարներով»,- գրել է Բելինսկին: Առակների այս բնորոշումից պարզ երևում է, թե ինչպես կարելի է ճիշտ ընտրել առակի դասավանդման մեթոդիկան, որ դրա արժեքը չկորչի, չխաթարվի գեղագիտական ու դաստիարակչական ազդեցությունը:

5-րդ դասարանի ծրագիրը ներառում է «Առակ» բաժինը: Առակներն ուսուցանելիս պետք է նոր մեթոդներ ու մեթոդական հնարներ կիրառել, որի հիմնական խնդիրը պետք է լինի առակի հումորն ու այլաբանական միտքը սովորողի գիտակցությանը հասցնելը:

Առակի ուսուցումն առանձնահատուկ տեղ ու դեր ունի մայրենիի դասընթացում, քանի որ անգնահատելի է առակի թե՛ ուսուցողական և թե՛ դաստիարակչական նշանակությունը: Առակների ուսուցողական արժեքը մեծ է նրանով, որ երբ ուզում ենք դաստիարակել երեխային, դա կարող ենք իրականացնել հենց առակում առկա բարոյախոսության միջոցով: Քանի որ առակի հերոսները կենդանիներ, բնության երևույթներ, կերպարանափոխված մարդիկ են, այդ պատճառով սովորողի համար ավելի հեշտընկալելի ու պարզ է դառնում առակի հիմնական մտքի վերհանումը:

Այսպիսով՝ առակների դասավանդումը երբեք չի կորցնում իր հիմնական նպատակը՝ դաստիարակել բարոյական բարձր արժեքային համակարգ ունեցող սերունդ, վերացնել սովորողի բնավորության վատ գծերն ու թերությունները, ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները: Առակների ուսուցումը նպաստում է զարգացնելու նաև սովորողի ընթերցասիրությունը, կարդալու որակական հատկանիշները:

Դասագրքերում ընդգրկված հայ և այլազգի առակագիրների ստեղծագործություններն իրենց պարզ ու մատչելի գրելաոճով միշտ էլ սիրելի ու հետաքրքիր են ընթերցողների համար:

Աստվածաշնչյան առակները նույնպես դաստիարակչական դեր ու արժեք ունեն սովորողի արժեհամակարգի ձևավորման վրա: Ահա թե ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց արդիականությունը, թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը:

Առակների բաժնից ձեզ ենք ներկայացնում դասի պլանի նմուշօրինակ, որն ուղղորդող բնույթ ունի: Մայրենիի դասավանդումն ունի առանձնահատկություն՝ իր միասնացված կառուցվածքի պատճառով:

Դասը «Երեք ծառաների առակն» է (ըստ Մատթեոսի ավետարանի), որին հատկացրել ենք 5 դասաժամ: Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում դասի 3-րդ ենթաթեման՝ «Երեք ծառաների առակի» (ըստ Մատթեոսի ավետարանի) գաղափարը և այլաբանությունը: **Ույ** երկհնչյունի հնչյունափոխությունը:

ԴԱՍ 3

Դասի թեման՝ «Երեք ծառաների առակի» (ըստ Մատթեոսի ավետարանի) գաղափարը և այլաբանությունը: **Ույ** երկհնչյունի հնչյունափոխությունը:

Դասի նպատակը՝

- **Նպաստել** հասկանալու առակի գաղափարը, այլաբանությունը:
- **Զարգացնել** սովորողների տրամաբանական և քննադատական մտածողությունը:
- **Ձևավորել** ակտիվ ընթերցող և հետաքրքրություն առաջացնել ընթերցանության հանդեպ:
- **Ձևավորել** աշխատանքային, սոցիալական հմտություններ:
- **Ծանոթացնել *ույ*** երկհնչյունի հնչյունափոխությանը:
- **Զարգացնել** լեզվաքերականական նյութը կապակցված խոսքի մեջ կիրառելու կարողություններ:

Դասի վերջնարդյունքները՝

- Հասկանալով, վարժ և արտահայտիչ **կարդալ** տեքստը, **ընկալել** տեքստի տարբեր մասերի միջև եղած կապերը:
- Կարողանալ հանգամանորեն **բնութագրել** հերոսներին՝ մեկնաբանելով նրանց արարքների շարժառիթները:
- Կարողանալ **հորինել** փոքրիկ պատմություն (որպես ավարտ՝ նոր վերնագիր դնելով):
- **Ձևակերպել** առակի գաղափարը հեղինակային բառերով, **հիմնավորել**:
- **Ներկայացնել** առակի այլաբանությունը սեփական ընկալմամբ:
- Առակում **ցույց տալ** բարոյախրատական մասը, **մեկնաբանել:**
- **Բացատրել *ույ*** երկհնչյունի հնչյունափոխության հետ կապված առանձնահատկությունները:
- Տեքստում **գտնել *ույ*** երկհնչյունի հնչյունափոխություն ունեցող բառեր, դրանցով նոր բառեր **կազմել, ցույց տալ** հնչյունափոխությունը:
- **Կատարել** նորաձանոթ բառերի բացատրություն՝ գործածելով խոսքում:
- Տարբեր ձևերով **արտահայտել** վերաբերմունքը (օրինակ՝ համառոտ բնութագիր, մեկնաբանություն հերոսի վարքի մասին ...) գործող հերոսի նկատմամբ:

Ուսուցման մեթոդներ՝ «Հարց ու պատասխան», «Ուղղորդված ընթերցանություն», «Կանխատեսման ուղեցույց», «Ընթերցողի թատրոն»:

Ուսումնական նյութեր՝ Դասագիրք, «Կանխատեսման ուղեցույցի» գծակարգեր, «Հասկանալու և վերլուծելու գծակարգի» պատճեններ, թուղթ, նշագրիչներ:

Դասի տևողությունը՝ 45 րոպե:

Դասի ընթացքը

Ստուգում ենք տնային աշխատանքը, շտկումներ ենք կատարում, եթե դրա կարիքը կա, կարճ հարցումով ստուգում ենք հին դասը, ուսուցանող գնահատում կատարում, ապա անցնում նոր նյութի ուսուցմանը:

Խթանման փուլում կիրառում ենք «Հարց ու պատասխան» մեթոդական հնարը: Մինչ առակը կարդալը ուսուցիչը հարցեր է տալիս սովորողներին.

1. Մարդուն գեղեցկացնում են աշխատասիրությո՞ւնը, հանդուրժողականությունն ու ներողամտությո՞ւնը, իսկ վախկոտությո՞ւնը, անհանդուրժողականությունն ու հիշաչարությո՞ւնը:
2. Ի՞նչ եք կարծում, վախկոտությունը, անհանդուրժողականությունն ու հիշաչարությունը պե՞տք է պատժվեն:
3. Ձեր շրջապատում երբևէ հանդիպե՞լ եք բարեսիրտ, գթառատ, արդարամիտ մարդկանց, իսկ չարակամ, դաժան, անիրավ անձա՞նց:
4. Ի՞նչ խորհուրդ կտայիք վերջիններիս:

Սրանք բաց հարցեր են, որոնք նպաստում են սովորողների քննադատական մտածողության զարգացմանը: Յուրաքանչյուրը յուրովի է պատասխանում հարցին՝ իր ընկալմանը համապատասխան: Զարգացնող ուսումնառության մեջ հատուկ նշանակություն է տրվում աշակերտների ակտիվությանը: Շատ կարևոր է, թե որքանով է աշակերտը պատրաստ տեքստի հետ հաղորդակցվելու. կարո՞ղ է հարցերին պատասխանել, կարո՞ղ է հարցեր տալ տեքստի վերաբերյալ, կարո՞ղ է տեքստից առանձնացնել հիմնականը երկրորդականից:

Սովորողներին ակտիվացնելուց հետո անցնում ենք դասի իմաստի **ընկալման** փուլին: Ընտրում ենք «Ուղղորդված ընթերցանություն» մեթոդը, որն այս տարիքային խմբում կիրառելը նպատակային է:

Աշակերտներն ուղղորդված ընթերցանությամբ կարդում են առակը, դադարներից հետո պատասխանում են հարցերին (Ի՞նչ է լինելու հետո, ինչո՞ւ եք այդպես կարծում:), որոնք լրացնում են կանխատեսման ուղեցույցում, նշում են այն բառերը կամ արտահայտությունները, որոնք դժվարացել են հասկանալ: Աշխատանքը խմբային է:

Այն ունի հետևյալ կառուցվածքը.

Կանխատեսման ուղեցույց

1. Ի՞նչ է լինելու հետո: ա) բ) գ)	**2. Ինչո՞ւ եմ այդպես կարծում:** ա) բ) գ)
3. Ի՞նչ եղավ: ա) բ) գ)	**4. Նոր ավա՛րտ հորինիր և վերնագրի՛ր:**

Այնուհետև 4-հոգանոց խմբերով աշակերտներն ավարտում ու ընդհանրացնում են պատմությունը և վերնագրում: Խմբերը ներկայացնում են իրենց շարադրանքները:

Կատարվում է քննարկում և մտքերի փոխանակում:

Ընթերցումն ու հանձնարարությունը կատարելուց հետո բնութագրական գնահատում ենք կատարում, ապա, պարզելու համար, թե ինչպես են աշակերտները հասկացել տեքստը, ուսուցիչը քարտեր է բաժանում նրանց՝ հետևյալ հարցերով.

- Մեկնաբանե՛ք, թե ինչպես է առակում ներկայացված տերը:
- *Պարզաբանե՛ք*, թե ինչպես *են* առակում *նկարագրված* ծառաները:
- Ինչո՞ւ տերը խրախուսեց երկու ծառաների արարքները, իսկ երրորդին պատժեց:
- Աշխատանքներն ավարտելուց հետո խմբերն իրենց թերթիկները փոխանցում են միմյանց՝ փոխադարձ գնահատման նպատակով: Պահանջում ենք, որ բնութագրական գնահատում կատարելիս անպայման հիմնավորեն այն:
- Դարձյալ կատարվում է քննարկում և մտքերի փոխանակում:
- Հետադարձ կապն ապահովելու նպատակով հարցնում ենք, թե որ առակի կամ հեքիաթի հետ կարող են համեմատել առակի բովանդակությունը: Պատասխանները լսելուց հետո հանձնարարում ենք անհատական աշխատանք: «Ընթերցանությունից հետո» թերթիկները բաժանում ենք սովորողներին, որ լրացնեն՝ հարցերի միջոցով ամբողջացնելու թեմայի յուրացումը:

«Ընթերցանությունից հետո» թերթիկ (անհատական աշխատանք)

Անուն, ազգանուն՝ ----------

Առակի վերնագիրը՝ ----------

Ամսաթիվը՝ ----------

1.Առակի հիմնական գաղափարը (ները):

---

2. Ո՞ր հերոսն է քեզ սրտամոտ: Ինչո՞ւ:

---

3. Ինչո՞ւ հերոսներն այդպես վարվեցին:

---

4. Թվարկի՛ր այն բառերը, որոնք քեզ անծանոթ են, գրի՛ր դրանց բացատրությունը:

_____ _____

Աշխատանքին հատկացված ժամանակը լրանալուց հետո ուսուցիչը, սովորողները կարդում են իրենց գրառումները:

Արդեն անդրադառնում ենք լեզվաքերականական նյութի ուսուցման աշխատանքներին: Քանի որ դասի թեմայում ներառված է ***ույ*** երկնչյունի ուսուցումը, լեզվական նյութը բացատրելուց հետո թեմայի ամրապնդում ենք իրականացնում վարժությունների միջոցով:

Աշակերտներին բաժանում ենք վեց խմբի՝ յուրաքանչյուրին հանձնարարելով կատարել հետևյալ վարժությունները. սրանք տարամակարդակ վարժություններ են.

1. Առակում գտի՛ր երկինչյուն ունեցող բառեր: Այդ բառերից մեկին ավելացրո՛ւ վերջածանց: Բացատրի՛ր հնչյունի փոփոխությունը:

2. ***Մարգ, գրամ*** բառերը կարդա՛ հակառակ ուղղությամբ, նշի՛ր օրինաչափությունը: Նման բառազո՛ւյգ գտիր «Երեք ծառաների առակ»–ում:

3. Բնագրում գտի՛ր երկու բարդ բարդ, որոնք նույն արմատն ունեն:

4. ա) Նշի՛ր՝ մեկնաբանելով տրված բառերի երկինչյունները. հավիտյան, ներկայացնել, յուրաքանչյուր:

բ) Այդ բառերով կազմի՛ր նախադասություններ:

5. Լրացրո՛ւ բաց թողնված ույ կամ յու երկինչյունները և խմբավորի՛ր:

Ընկ_զ, ողջ_ն, ձ_թ, զգ _շ, ս_նակ, աղ_սակ, ալ _ր, պա _սակ, բ _ր, բ _ր, հ_ս, հ _ս, ար_ ն, թ_ ն, շառաչ_, ողջ _ն, աշխ _ժ, հնչ _ն, կարգաչ_, կահ_ք, գահ_ք, սառ_ց, հ_թ, գահ_ք:

ույ	յու

6. Նկարի շուրջ կազմե՛ք բեմականացման բեմագիր (սցենար) և ներկայացրե՛ք ըստ վերը բերված ուսումնական նյութի (խմբային աշխատանք):

Աշակերտները ներկայացնում են իրենց աշխատանքները. բնութագրական գնահատում ենք կատարում և անցնում հաջորդ դասին:

Այսքանից հետո՝ հաջորդ դասին, ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է մեկ անգամ ևս ընթերցել տեքստը և այն բաժանել դերերի (հեղինակ, թագավոր, ծառաներ՝ 1, 2, 3): Մասնակիցները նշում են իրենց դերերը նշագրիչներով՝ բնագրի պատճենած թերթիկների վրա: Աշակերտները դատում են այն մասին, թե ինչպես պետք է խոսեն առակի գործող անձինք, ինչպիսի ժեստեր և դիմախաղ կարող են ունենալ:

Դասն իրականացնում ենք «Ընթերցողի թատրոն» մեթոդով:

Մեթոդական մեկնաբանություն: Աշակերտներին այնքան անգամ ընթերցե՛լ տվեք տեքստը, որքան անհրաժեշտ է, որ նրանք համոզվեն սեփական հնարավորություններում, համոզվեն, որ կարող են հարմարվել դերին և ազատ կարող են ընթերցել կամ անգիր ասել խոսքը):

«Ընթերցողի թատրոնի» մասնակիցները զբաղեցնում են իրենց տեղերը: Նրանք իրենց ձեռքում ունեն «բեմագրի» մասերը, կամ դրանք դրված են սեղանի վրա, եթե անգիր են արել տեքստը: Ընտրում են տեղ զբաղեցնելու իրենց համար ցանկալի տարբերակը, միայն թե այնպես, որ չմոռանան «հանդիսատեսին»՝ մյուս աշակերտներին:

Մեթոդական մեկնաբանություն: Օգնեք աշակերտներին, որ նրանք կարողանան ճիշտ դիրք զբաղեցնել: Ցանկալի է, որ և՛ «հանդիսատեսը» լավ տեսնի մասնակիցներին, և՛ մասնակիցները՝ միմյանց, և սկսում են տեքստի ընթերցումը (10 րոպե):

Գնահատում:

1. Աշակերտները, նախօրոք ստեղծած չափանիշների համաձայն՝ գնահատում են իրենց համադասարանցիներին:

Սանդղակը ներկայացնում է ուսուցանող գնահատման չափանիշները: Ամեն վանդակում պետք է շրջագծել բնութագրիչներից մեկը և իրենց գնահատման դիմաց գրել կարճ ծանոթություն՝ հիմնավորելով սեփական գնահատումը:

Արդյունքները	Բնութագրիչները			Ծանոթություն
Բոլոր բառերը պա՞րզ էին արտասանվում:	երբեմն	այո	ոչ	
Շեշտադրությունն արվո՞ւմ էր հանգուցային բառերի վրա:				
Տրամադրվածությունը և զգացմունքները տպավորի՞չ էին հաղորդված:				
Ձայնի ուժգնությունը տպավորի՞չ էր օգտագործված:				
Ձայնի հնչերանգը տպավորի՞չ էր օգտագործված:				
Ընտրած հատվածը համապատասխան տեմպո՞վ էր ընթերցված:				
Հաստատո՞ւմ էր տեսողական կապ լսարանի հետ:				
Ժեստերը համապատասխա՞ն էին օգտագործված:				
Կետադրությունը ճի՞շտ էր հասկացված, մեկնաբանված:				
Կարողացա՞վ գրավել և պահպանել լսարանի ուշադրությունը:				

Բեմականացումն ավարտելուց հետո կատարվում է քննարկում, մտքերի փոխանակություն:

Կատարում ենք **անդրադարձ:**

Խմբերին բաժանում ենք հետևյալ գծակարգը՝ լրացնելու:

Ի՞նչ գիտեինք:	Ի՞նչ սովորե-ցինք:	Ի՞նչը մնաց անհասկանալի:	Ի՞նչ դիտողություններ կամ առաջարկություններ ունենք:

Խմբերը լրացնում են աղյուսակը, և ուսուցիչը հավաքում է թերթիկները, ամփոփում է թեման և հանձնարարում տնային աշխատանք:

ԱՌԱԿԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ, ՄՏՔԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Նյութը նախատեսված է մայրենիի ուսուցիչների համար, որ դասավանդելիս աշխատեն արմատավորել ուսուցման ժամանակակից մոտեցումներ: Մեթոդները վերցված են համաշխարհային և մանկավարժական փորձից: Մեր ցանկությունն է՝ օգնել ուսուցիչներին ստեղծելու մեթոդական զինանոց և այն օգտագործել նպատակին համապատասխան, վերացնել ուսանելու և ուսուցանելու գործընթացի միապաղաղությունը, որպեսզի ուսուցումը և ուսումնառությունը դառնան ավելի հետաքրքիր և զվարճալի:

Այսօր դպրոցում մայրենի լեզվի գործնական, հաղորդակցական հմտություններին և կարողություններին կողմնորոշված ուսուցանումը չունի այլընտրանք: Այսօրվա ուսուցիչը կանգնել է բարդությունների առջև. փոխվում են ժամանակները, փոխվում են դասավանդման եղանակն ու ոճը.

- ✓ Ինչո՞ւ սովորեցնենք:
- ✓ Ի՞նչ սովորեցնենք և ինչպե՞ս սովորեցնենք:
- ✓ Ինչպե՞ս մատուցենք աշակերտներին համամարդկային և ազգային արժեքներ:
- ✓ Ինչպե՞ս սովորողների մեջ զարգացնենք անձնական արժանապատվության զգացում:
- ✓ Ինչպե՞ս նրա մեջ ձևավորենք ինքնուրույն մտածելու ունակություն:
- ✓ Ինչպե՞ս սովորեցնենք հարգել ուրիշի կարծիքը, ինչպե՞ս դարձնենք նրան ճաշակով ընթերցող, ունկնդիր ...

Այս հիմնախնդիրների մասին մտածել են բոլոր արհեստավարժ մանկավարժները, մտածում են և կմտածեն: Այս մոտեցման հիմքում ընկած են երկարատև պրպտումները, տարիների փորձը, հայկական և համաշխարհային մանկավարժական լավագույն ավանդույթների և նորությունների իմացությունը, որոնք էլ, կարծում ենք, մեծ օգնություն կցուցաբերեն ինչպես սկսնակ, այնպես էլ՝ փորձված մանկավարժներին և նաև նրանց, ովքեր հետագայում որոշել են մայրենիի ուսուցիչ դառնալ:

Մայրենի լեզուն անձի ինքնարտահայտման, մտքի ձևավորման և հաղորդման միջոց է: Նրա ուսուցումը հիմնվում է այն սկզբունքների վրա, որոնք ճանաչված են որպես ուսուցման ընդհանուր համապիտանի սկզբունքներ. այն հատկապես նախատեսում է՝

- ▪ Շեշտադրությունն անել ուսումնական նյութի ոչ թե քանակային, այլ կառուցվածքային և որակական կողմերի վրա:
- ▪ Ուսուցման կենտրոնացում կատարել սովորողների մտավոր, հոգեբանական և ֆիզիկական հնարավորությունների վրա:

- Ուսուցման անհատականացում՝ աշակերտի՝ որպես անհատի, ունակությունների և հնարավորությունների առավելագույն հաշվառում:
- Ուսուցման գործընթացի առավելագույն կենտրոնացում պատկերացման և գիտակցման և ոչ թե ընկալման ու մտապահման վրա:
- Ուսուցման գործընթացի կենտրոնացում՝ աշակերտի անհատականության վրա:
- Ուսուցման գործընթացի կառուցում՝ աշակերտի և ուսուցչի, բացի դրանից՝ աշակերտների ինտերակտիվ ուղղվածության հիման վրա:
- Արդյունքներին կողմնորոշված ուսուցում:
- Լեզվի գործառույթային տարբեր կողմերի և ձևերի միասնականացված ուսուցում:

Ներկայացնում ենք ժամանակակից դասի անցկացման ևս մեկ նմուշօրինակ:

Վարդան Այգեկցի - 4 ժամ

ԴԱՍ 1, 2

Դասի թեման՝ Վարդան Այգեկցի, «Բարին ու չարը» առակը:
Դասի տևողությունը՝ 90 րոպե

Դասի նպատակը՝

- Նպաստել հասկանալով, վարժ և արտահայտիչ կարդալու տեքստը, ընկալել տեքստի տարբեր մասերի միջև եղած կապերը:
- Զարգացնել սովորողների տրամաբանական և քննադատական մտածողությունը:
- Ձևավորել ակտիվ ընթերցող և հետաքրքրություն առաջացնել ընթերցանության հանդեպ:
- Ձևավորել աշխատանքային, սոցիալական հմտություններ:
- Ծանոթացնել «Բառ և վանկ» լեզվաքերականական թեմային:

Դասի վերջնարդյունքները՝

- Գեղարվեստական տեքստը կարդալ մտքում, ապա բարձրաձայն ու արտահայտիչ:
- Հասկանալ տեքստը և մեկնաբանել գործող անձանց բնավորությունները:
- Երկխոսությունը մեկնաբանել և հաղորդել ունկնդրին:
- Լրացնել հասկանալու և վերլուծելու գծապատկերը առակի հիմնախնդրի և հիմնական մտքի մասին:
- Կարողանալ հանգամանորեն բնութագրել հերոսներին՝ մեկնաբանելով նրանց արարքների շարժառիթները:
- Կարողանալ զուգորդել և համադրել ազգային արժեքները համամարդկային արժեքների հետ:
- Կարողանալ թեմայի մասին շարադրել կարծիք՝ գրավոր և բանավոր:
- Կարողանալ հորինել փոքրիկ պատմություն (որպես ավարտ՝ նոր վերնագիր դնելով):
- Տարբերել բառը վանկից, տառը հնչյունից:

Ուսումնական մեթոդները՝ «Խթանող հարցեր», «Բազմանիստ», «Ուղղորդված ընթերցանություն», «Մտածի՛ր, զո՛ւյգ կազմիր, քննարկի՛ր», «5-րոպեանոց շարադրանք»:

Ուսումնական նյութերը՝ բնագրի պատճեններ, բազմանիստի գծակարգեր, հասկանալու և վերլուծելու գծապատկերներ, թուղթ, նշագրիչներ:

Դասի ընթացքը

Ստուգում ենք տնային հանձնարարությունը, կատարում ենք շտկումներ, եթե այդպիսիք կան, բնութագրական գնահատում ենք մի քանի աշակերտի՝ հիմնավորելով գնահատումը: Ապա ստուգում ենք հին նյութի յուրացումը, ուսուցանող գնահատում կատարում և անցնում ենք նոր նյութի ուսուցմանը:

Դասի սկզբնական փուլում գործածում ենք «Խթանող հարցեր» մեթոդը: Ուսուցիչը նախապես պատրաստում է դասի նյութի հետ անմիջականորեն առնչվող հարցեր, որոնց պատասխանները զետեղված են դասի տեքստի մեջ: Այս ձևը կարող է կիրառվել դասընթացի համարյա բոլոր թեմաների ուսուցման ընթացքում: Օրինակ՝ ուսուցիչը հարցեր է տալիս կամ գրում է գրատախտակին.

- Մարդուն գեղեցկացնում են հանդուրժողականությունն ու ներողամտությո՞ւնը, իսկ հիշաչարությունն ու անհանդուրժողականությո՞ւնը:
- Ի՞նչ եք կարծում, բարին արժանի՞ է բարությամբ լցվելու: Ինչո՞ւ:
- Ի՞նչ եք կարծում, չարը պե՞տք է պատժվի: Ինչո՞ւ:

Ժամանակ ենք տալիս երեխաներին մտածելու, ապա պատասխանելու հարցերին: Սահմանված ժամանակը լրանալուց հետո սովորողներին հնարավորություն ենք տալիս արտահայտելու իրենց կարծիքները:

Դասի այս փուլում կիրառում ենք ևս մեկ մեթոդական հնար՝ «Բազմանիստ (պրիզմա)»: Այս մեթոդը կիրառվում է բացառապես նյութի սկզբնական՝ խթանման փուլում՝ ապահովելով սովորողների ակտիվությունն ու հետաքրքրությունը՝ ակտիվացնելով, կապ հաստատելով սովորողների ունեցած գիտելիքների ու պատկերացումների և ուսուցանվող նոր նյութի միջև: Սրանով իսկ մեթոդի կիրառումն ապահովում է թեման վերլուծել կարողանալու հաջող մեկնարկը:

Մեթոդական հնարն արդյունավետ է այն դեպքերում, երբ պահանջվում են կարճ բառերի, հատկանիշների, ցուցանիշների թվարկումներ: Հնարը ենթադրում է արագություն և արագ կողմնորոշում, ուշադրության կենտրոնացում և մասնակիցների՝ իրար հաջորդող ու համաձայնեցված գործողություններ:

Բազմանիստը մոտավորապես այսպիսի տեսք կունենա.



Աշխատում ենք, որ բոլոր աշակերտները մասնակցեն դասին:

Երբ բազմանիստը փակվում է, առաջարկում ենք հիմնաբառով (բարի), վերջնաբառով (հերոս) և բազմանիստի շուրջը եղած կապերով կազմել մեկ նախադասություն: Յուրաքանչյուրը յուրովի կկազմի այն ու կներկայացնի: Երբ դասարանն արդեն տրամադրվում է դասին, անցնում ենք նոր նյութի յուրացմանը:

Սովորողներին ակտիվացնելուց հետո անցնում ենք դասի հիմնական փուլին, որի ընթացքում իրականացվում է նյութի ուսուցումը: Այս փուլի հիմնական խնդիրներն են՝

- նյութի բովանդակությունը հասցնել սովորողին,
- սովորողներին ներգրավել ուսուցման գործընթացում, գտնել ուղիներ, որոնցով սովորողներն ինքնուրույն կկարողանան հետազոտել նյութը:

Դասի այս փուլում նպատակային է կիրառել «**Մտածի՛ր, զո՛ւյգ կազմիր, քննարկի՛ր»** մեթոդը: Այս վարժություն/մեթոդն ունի հետևյալ առանձնահատկությունը. արագ կատարվող համատեղ ուսումնառության վարժություն է, որն օգնում է աշակերտներին մտածել, կշռադատել կարդացած նյութի շուրջ և ընկերների օգնությամբ հստակեցնել, ձևակերպել իրենց մտքերը:

Յուրաքանչյուրն ինքնուրույն կարդում է «Չարն ու բարին» նյութը, մի քանի րոպե մտածում թեմայի շուրջ: Նյութը կարդալուց հետո սովորողները զույգեր են կազմում և միմյանց հետ մտքեր փոխանակում կարդացածի վերաբերյալ՝ փորձելով գտնել այն պատասխանը, որն ամբողջացնում է իրենց երկուսի գաղափարները (գիտելիքը):

Այնուհետև զուգընկերոջ հետ փոխանակում են իրենց եզրակացությունները, համեմատում իրենց արտահայտած մտքերի նմանություններն ու տարբերությունները: Զույգը, միավորելով իրենց գաղափարները, ստեղծում է մեկ ընդհանուր տարբերակ սովորած նյութի վերաբերյալ: Քննարկումներն ավարտելուց հետո զույգերից յուրաքանչյուրը, ըստ ցանկության, ներկայացնում է նոր նյութ, բերում համապատասխան օրինակներ և ձևակերպում է, որ նախանձն ու չարությունը ոչ մի լավ բանի չի հասցնում մարդուն. այն դատապարտված է կործանման:

Դասն ամրապնդելու նպատակով կիրառում ենք «5-րոպեանոց շարադրանքի» մեթոդը: Տեքստից դուրս ենք բերում բանալի բառեր և հանձնարարում ենք դրանցով կազմել գրավոր խոսք:

Բարի, Չար, թի, կացին. փարչ, գողանալ, ծարավել, ջրհոր, քաջք, պատմել, թագավոր, աղջիկ, դիվահար, մազ, վառել, առողջանալ, փեսա, ոսկի, հարստանալ, հոր, քար, կորչել:

Աշխատանքին տրված ժամանակը լրանալուց հետո երեխաները կարդում են իրենց գրառումները, ձևավորող գնահատում ենք և կատարում թեմային առնչվող քերականական առաջադրանքներ:

Քանի որ մեր լեզվական նյութը «Բառ և վանկ»-ն է, դասախոսության միջոցով բացատրում ենք՝ ասելով՝ երեխանե՛ր, եկե՛ք «Բարին և չարը» առակից դուրս գրենք բառեր, որոնք օդի մեկ մղումով են արտասանվում՝ *գործ, յոթ, հոր* և այլն: Այժմ դուրս գրենք բառեր, որոնք օդի երկու և ավելի մղումով են արտասանվում՝ *բարի, կացին, թագավոր, ժամանակ* և այլն: **Օդի մեկ մղումով արտասանվող հնչյունը կամ հնչյունախումբը կոչվում է վանկ:**

Մեկ վանկից կազմված բառերը միավանկ են, երկու և ավելի վանկերից կազմված բառերը՝ բազմավանկ: Առանց ձայնավորի վանկ չի կարող կազմվել: Վանկի ձայնավորը կոչվում է **վանկարար հնչյուն**, բաղաձայնը՝ ոչ վանկարար հնչյուն: Օրինակ՝ *բարի* բառի վանկարար հնչյուններն են՝ ***ա, ի***, ոչ վանկարար հնչյունները՝ ***բ, ր***: Բառի մեջ որքան ձայնավոր կա, այդքան էլ վանկ կա: *Բարի* բառը երկվանկ է, քանի որ երկու ձայնավոր ունի՝ ***ա, ի***:

Վանկի մեջ կարող է լինել միայն մեկ ձայնավոր, օրինակ՝ ա-ռակ, ու-տել, թ-գա-վոր:

Ձայնավորով վերջացող կամ միայն ձայնավորով կազմված վանկը կոչվում է **բաց վանկ**: Օրինակ՝ տա-րի, բա-րի, մա-տա-նի, ա-նա-լի բառերի վանկերը բաց են:

Բաղաձայնով վերջացող վանկը կոչվում է **փակ վանկ**: Օրինակ՝ Վար-դան, որ-սորդ, եղ-նիկ բառերի վանկերը փակ են:

Լսվող, բայց չգրվող ***ը*** հնչյուն ունեցող վանկը կոչվում է գաղտնավանկ: ***Ը***–ն գրվում է տողադարձի ժամանակ, օրինակ՝ կը–թություն, ջը–րաման, դուս–տը:

Թեման ամրապնդելու նպատակով աշակերտներին բաժանում ենք խմբերի և կատարել ենք տալիս հետևյալ առաջադրանքները. որպեսզի արդյունավետ լինի և միաժամանակ շատ առաջադրանքներ կատարվեն, նպատակային յուրաքանչյուր խմբի մեկ առաջադրանք են տալիս:

1. Տեքստում գտի՛ր *վարս*, *աղջիկ*, *արքա*, *ամուսնացնել* բառերի հոմանիշները:
2. Համեմատի՛ր *ջրհոր* և *ջրաման* բառերը: Բառերի արմատներով նոր բառե՛ր կազմիր:
3. *Կացին* բառի տառերով չո՛րս բառ կազմիր:
4. Բնագրում գտի՛ր բառեր, որոնց տառերի և հնչյունների քանակը հավասար չէ:
5. Բնագրում գտի՛ր բառեր, որոնց բոլոր ձայնավորները ***ա*** են:
   Նմուշ՝ պատասխան:
6. Ի՞նչ թվեր են գործածված առակում: Հիշի՛ր առած–ասացվածքներ, թևավոր խոսքեր, որտեղ գործածված են այդ թվերը:
   Նմուշ՝ Յոթ որդով սեղան նստել:
7. Տրված բառերից յուրաքանչյուրում փոխի՛ր մեկ ձայնավոր և նո՛ր բառ ստացիր: Հոգնել, համբերել, վարք, բերք, արագ:
   Նմուշ՝ հորթ-հարթ:
8. Բառարանում գտի՛ր կարմիր գրված բառերի բացատրությունը և գործածի՛ր նախադասությունների մեջ:

Աշխատանքներն ավարտելուց հետո աշակերտները կարդում են. փոխադարձ գնահատում ենք կատարում, եթե սխալներ կան, վերլուծում:

Դասի ավարտին կիրառում ենք «Քառաբաժան»:

Թեմայի յուրացումը ստուգելու նպատակով ուսուցիչը խմբերին առաջարկում է կազմել քառաբաժան՝ տետրի էջը խաչաձև բաժանելով 4 հավասար մասերի, կամ քառաբաժանի տպագիր գծակարգեր բաժանելով: Յուրաքանչյուր մասում ուսուցիչն առաջարկում է գրել թեմային համապատասխան որոշակի հարց ու պատասխանել, օրինակ.

Բնութագրող Բնութագրի՛ր առակի գլխավոր հերոսին:	**Զգացմունքներն արտահայտող** Ի՞նչ զգացումներ ունեցար առակը կարդալուց հետո:
Կենսափորձ Առակի բովանդակությունը ի՞նչ հիշեցրեց քեզ: Ի՞նչ համանման պատմություն ես ընթերցել կամ կինոնկար դիտել:	**Իմաստավորում** Նոր վերնագի՛ր դիր առակին:

Աշակերտներն ավարտում ու ընդհանրացնում են պատմությունը և վերնագրում: Խմբերը ներկայացնում են իրենց շարադրանքները (գնահատանք դրսևորելով):

Սրանից հետո, պարզելու համար, թե որքանով են աշակերտներն իմաստավորել առակի հիմնական միտքը, նրանց լրացնելու համար բաժանվում են վերլուծության և հասկանալու գծակարգեր՝

Այս առակում հիմնախնդիրը սկսվում է, երբ ----------
Սրանից հետո ----------
Առակն ավարտվում է ----------
Այս առակի հիմնական միտքն այն է, որ ----------

Ծանոթություն: Եթե դասի ժամանակ աշակերտները չեն հասցնում լրացնել գծակարգը, կարող են աշխատանքն ավարտել տանը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ: Աշակերտները վերլուծում և գնահատում են սեփական աշխատանքը (ինքնագնահատում), կռահում են, թե ինչն են լավ արել և ինչի բարելավման կարիք ունեն՝ տվյալ դասի ընթացքում ձեռքբերումները մատնանշելով և բացթողումները հաջորդ դասին շտկելու նպատակով:

Հանձնարարում ենք տնային աշխատանք. «Վ. Այգեկցուց ընտրել առակ, որի գլխավոր հերոսն աղվեսն է: Առակից մի դրվագ արտահայտել նկարով»:

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ջուլիո» պատմվածքի ուսուցումը- 6 ժամ

ԴԱՍ 4

Թեման՝ «Ջուլիո» պատմվածքի դաստիարակչական նշանակությունը: Նույնահունչ համանուններ

Նպատակները՝

- **Նպաստել** հասկանալու պատմվածքի դաստիարակչական նշանակությունը:
- **Օգնել** հարստացնելու բառապաշարը, կապակցված խոսքի մեջ ճիշտ կիրառելու բառերի իմաստային տարբեր տեսակները:
- **Նպաստել** ճանաչելու նույնահունչ համանուններ:

Վերջնարդյունքները՝

- **Նշել** տեքստի դաստիարակչական արժեքը:
- **Փոփոխել** տրված տեքստը. նոր հերոսներ **ավելացնել** կամ ընդհակառակը՝ **սեղմել, կրճատել:**
- **Հորինել** դիպաշար (սյուժե) ունեցող պատմություններ՝ օգտագործելով պլան, նախօրոք մշակված հարցեր, պայմանական նշաններ և միջոցներ (պատկերապատում, ծաղրանկար և այլն:
- **Կազմել** նկարագրական խոսք՝ կիրառելով տրված բառերը, բառակապակցությունները, նախադասությունները:
- **Գնահատել** հերոսների վարքագիծը և **արտահայտել** վերաբերմունք:
- Գործող անձի գործունեությունը **կապել** անհատական կենսափորձի հետ **և հիշել** նման իրավիճակներ:
- Ըստ տեքստի **ստեղծել** ուսումնական նյութեր՝ բառարան, պաստառ, գրքույկ և այլն, դրանց համար հակիրճ գրառումներ **անել:**
- **Տարբերել** բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության: Նույնահունչ համանուններ ճանաչել խոսքում:

Ուսուցման մեթոդներ՝ «Բազմանիստ», «Խթանող հարցեր», «Մտածի՛ր, զո՛ւյգ կազմիր, քննարկի՛ր», «Հարցերի քարտարան»:

Ուսումնական նյութեր՝ «Ջուլիո» պատմվածքը, հարցերի քարտեր, նշագրիչներ, թուղթ կամ տետր:

Դասի տևողությունը՝ 45 րոպե:

Դասի ընթացքը

Դասի այս փուլում ստուգում ենք տնային առաջադրանքները, բացահայտում աշակերտների մեծամասնության գիտելիքների մակարդակը և ընդհանուր բացթողումները՝ վերացնելու բացահայտված թերությունների պատճառները:

Տնային աշխատանքները ստուգելուց և բացթողումները շտկելուց հետո որոշ աշակերտների գնահատում ենք և անցնում դասի հաջորդ փուլին:

Խթանող հարցերի միջոցով ամփոփում ենք նախորդ դասը, դարձյալ գնահատում՝ հիմնավորելով գնահատականը:

Տնային հանձնարարությունների ստուգումից և հին դասի կարճ հարցումից հետո անցնում ենք նոր նյութի ուսուցմանը:

Նոր թեմայի ուսուցումը կազմակերպում ենք **ԽԻԿ** համակարգով:

Մինչև բուն թեմային անցնելը **դասախոսության** միջոցով սովորողներին բացատրում ենք, թե ինչ է պատմվածքը: Ասում ենք, որ պատմվածքը գրականության պատմողական ժանրերից մեկն է, որն ունի դիպաշար, և այն փոքր ծավալի արձակ ստեղծագործություն է: Պատմվածքի մեջ նկարագրվում է կյանքի մի դեպք, դրվագ՝ կապված մեկ կամ մի քանի հերոսների հետ: Պատմվածքի հիմքում հիմնականում ընկած է կենսական որևէ փաստ, իրական դեպք:

Պատմվածքն իր արմատներով կապվում է բանահյուսության հետ, որտեղից գալիս է նրա հիմնական առանձնահատկությունը՝ պատմելու ձևը, պատումը: Հետագա զարգացման ընթացքում պատմվածքը թե՛ բովանդակության և թե՛ ձևի տեսակետից ենթարկվել է էական փոփոխությունների:

Պատմվածքի օրինակ է Ակսել Բակունցի «Սպիտակ ձին»: Այդ պատմվածքը հայ գյուղացու ծանր կյանքի նկարագիրն է՝ առանց դեպքերի լայն ծավալման, դեպքերը զարգանում են մի գծով՝ կապված ձիահավաքի հետ, կերպարներն էլ ընդամենը մի քանիսն են:

Իր ժանրային առանձնահատկություններով պատմվածքն ընդհանուր շատ գծեր ունի նորավեպի հետ (նովել), բայց և որոշ կողմերով տարբերվում է նրանից: Ի տարբերություն նորավեպի, պատմվածքի սյուժեն հակում չունի դեպի արտասովորը, դեպքերն այնտեղ զարգանում են ավելի սովորական, հանդարտ ընթացքով: Նովելում գործողություններն ավելի սրընթաց են, իսկ ավարտը՝ անսպասելի: Պատմվածքում հեղինակը երբեմն շեղումներ է կատարում, պատկերում բնության տեսարաններ, հոգեվիճակներ, այնինչ նորավեպում գործողությունները զարգանում են անշեղորեն, առանց նման միջարկումների: Պատմվածքում հանգույցը լուծվում է ոչ թե նորավեպի նման անսպասելի ու հանկարծակի, այլ ավելի սովորական ձևով:

Այսքանը բացատրելուց հետո անցնում ենք թեմայի ուսուցմանը՝ «Ջուլիո» պատմվածքի դաստիարակչական նշանակությանը: Նույնահունչ համանուններ:

Ուսուցիչը պետք է իմանա, որ սովորողների համոզմունքներն ու կենսադիրքորոշումները ձևավորելու հոգեբանական բարդ աշխատանքն այսօրվա պայմաններում դպրոցի առաջնահերթ ու կարևորագույն խնդիրներից մեկն է: Ուսուցման ընթացքում պետք է հմտորեն զուգակցվեն կրթության և դաստիարակության հարցերը: Փաստական տվյալներն ինքնին ինքնանպատակ բնույթ են կրում, եթե աշակերտը չի սեփականացնում փաստերից բխող եզրակացությունները:

Գրականության ուսուցչի հիմնական նպատակը պետք է լինի գրականության դասը ծառայեցնել հիմնականում երկու խնդրի լուծման.

ա) աշակերտներին սովորեցնել կարդալ, մեկնաբանել, վերլուծել, բնութագրել կերպարները, բացահայտել գաղափարական և գեղարվեստական առանձնահատկությունները, անել ինքնուրույն եզրահանգումներ, փաստարկել ու հիմնավորել իրենց կարծիքները,

բ) դաստիարակել գրական ստեղծագործության առաջատար գաղափարներով և գեղարվեստական արժանիքներով՝ դրանք զուգակցելով լեզվաքերականական համապատասխան նյութերի յուրացմամբ:

Գրականությունը լայն հնարավորություն է ընձեռում սովորողների բարոյագիտական համոզմունքների ձևավորման համար: Աշակերտների մեջ հայրենասիրություն, մարդասիրություն, ծնողասիրություն, ընկերասիրություն, պարտքի զգացում և այլն դաստիարակելու և վերաբերմունք սերմանելու մեծ հնարավորություն է տալիս պատմվածքի ուսուցումը: Պատմվածքներն ուսումնասիրելիս իրականացնում ենք դաստիարակչական բնույթի մի շարք խնդիրներ.

1. Զգացմունքների դաստիարակություն (սեր, ատելություն, կարեկցանք, ապրումակցում, միջանձնային հարաբերությունների մշակույթ):
2. Ծնողասիրության դաստիարակություն և պարտքի զգացման գիտակցում:
3. Հարգանք սրբությունների նկատմամբ և այլն:

Դասի առաջին՝ խթանման փուլը սկսում են բազմանիստի կառուցմամբ.

Բազմանիստը մտածողության ընթացքը պատկերավոր, շոշափելի դարձնելու պարզ ձև է: Բազմանիստի հիմնական նպատակը ներկայացվող գաղափարի, հասկացության վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերհանումն ու արձանագրումն է: Բազմանիստը կիրառվում է դասի խթանման փուլում՝ ապահովելով ինչպես աշակերտների հետաքրքրությունն ու ակտիվությունը, այնպես էլ նյութի ուսումնասիրման գործընթացի արդյունավետ սկիզբը: Մեթոդը լիարժեք ու արդյունավետ դարձնելու նպատակով կիրառում ենք հետևյալ քայլերը.

1. Գրատախտակի կենտրոնում գրվում են այն հիմնական հասկացությունը, միտքը, թեման, մեկնաբառը, ինչը ենթակա է ուսումնասիրության:
2. Հաջորդ քայլը՝ առանց քննարկման գրանցվում են մեկնաբառի ազդեցությամբ մտքում ծագած առաջին երկու պատահական բառերը: Հարկ է նշել, որ խմբային աշխատանքի ժամանակ գրանցվում են առաջին հնչած բառերը: Պետք է հետևել, որ հնարավորինս կանխվի գիտակցական մակարդակում ծնված բառերի ու հասկացությունների գրանցումը, և խրախուսվեն ենթագիտակցական ոլորտում ծնված ասոցիատիվ կապերը:
3. Ասոցիատիվ մտածողության վրա հենվող այս ընթացքը շարունակվում է մինչև վերջ: Առավել արդյունավետ է երեք շերտից բաղկացած բազմանիստը (ինչպես տրված է օրինակում), որից հետո բազմանիստը սկսում ենք փակել: Այս անգամ բառը լրացվում է նախորդ երկու բառերի ասոցիատիվ կապը հաշվի առնելով:
4. Բազմանիստը եզրափակվում է վերջնաբառով:
5. Բազմանիստի ամփոփիչ քայլը մեկնաբառի ու վերջնաբառի միջև տրամաբանական կապ գտնելն է, որը պետք է իր արտացոլումը գտնի մեկ նախադասության կամ մտքի մեջ. վերջինիս կարելի է անդրադառնալ հետո՝ նյութի ամփոփման ժամանակ:
6. Որպեսզի միաժամանակ զարգանա նաև բանավոր խոսքը, կարելի է հանձնարարել բազմանիստի եզրաբառերով կազմել նախադասություն:
7. Այսպիսով, եթե բազմանիստի կառուցման ամբողջ ընթացքում ակտիվանում է ենթագիտակցական ոլորտը, ապա վերջին քայլում մեկնաբառն ու վերջնաբառը մեկ նախադասությամբ կապելիս կամ եզրաբառերով նախադասություն կազմելիս ակտիվանում է գիտակցական ոլորտը:

Ստորև ներկայացնում ենք մեր թեմային առնչվող՝ վերոհիշյալ քայլերով կատարված մի օրինակ՝ «Ջուլիո» բառով:



Բազմանիստ կառուցելն ավարտելուց հետո խմբերից պահանջում ենք աջ և ձախ եզրաբառերով կազմել նախադասություններ, օրինակ՝ «Ջուլիոյի հայրը որդու հանդեպ աննրբանկատ վարմունք էր ցուցաբերում»:

Բազմանիստին կանդրադառնանք դասի ավարտին:

Այնուհետև կիրառում ենք «**Նախնական կազմակերպիչ»** մեթոդական հնարը: Սովորողների ուշադրությունը կենտրոնացնելու և թեմայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու նպատակով՝ ուսուցիչը նախապես ընտրում է թեմայի հետ խիստ կապված և հետաքրքրաշարժ մի փաստ կամ դրվագ և ընթերցում այն: Օրինակ՝ Լեոնարդո դա Վինչիի «Որդիական երախտագիտություն» պատմվածքը, որից հետո կազմակերպում ենք փոքրիկ **քննարկում:**

Որդիական երախտագիտություն

Մի անգամ՝ առավոտյան, երկու ծեր հոպոպ՝ արուն և էգը, զգացին, որ այս անգամ այլևս չեն կարողանալու բնից դուրս թռչել: Նրանց աչքերը պատվել էին խիտ մշուշով, չնայած որ երկինքն անամպ էր, և օրը խոստանում էր արևոտ լինել: Սակայն նրանք երկուսն էլ միայն խավար մշուշ էին տեսնում և իրենց շուրջը ոչինչ չէին տարբերակում: Թռչունները ծեր էին և անուժ: Նրանց թևերի և պոչի փետուրները նման էին հին ոստերի: Թռչունների ուժերն արդեն սպառվել էին:

Ծեր հոպոպները որոշեցին այլևս չլքել բույնը և միասին սպասել իրենց վերջին ժամին, որը իրեն երկար սպասել չէր տա:

Սակայն նրանք սխալվում էին. նրանց այցելության եկան իրենց երեխաները: Սկզբում հայտնվեց որդիներից մեկը, որը պատահաբար թռչում էր ծնողների կողքով: Նա նկատեց, որ ծեր ծնողները հիվանդ են, և նրանց մենակ շատ դժվար է: Նա գնաց լուրը հասցնելու իր մյուս եղբայրներին և քույրերին:

Երբ բոլոր երիտասարդ հոպոպները հավաքվեցին հայրական տան մոտ, նրանցից մեկն ասաց.

- Մեր ծնողներից մենք ստացել ենք ամենամեծ և անգին ընծան՝ կյանքը: Նրանք կերակրել և մեծացրել են մեզ՝ չխնայելով իրենց ուժերն ու իրենց մեջ եղած սերը: Եվ հիմա, երբ նրանք երկուսն էլ կույր են, հիվանդ և ի վիճակի չեն իրենց կերակրել, մեր սուրբ պարտքն է նրանց բուժել ու խնամել:

Այս խոսքերից հետո բոլորը միահամուռ գործի անցան: Մի քանիսը անմիջապես սկսեցին նոր՝ ավելի տաք բույն կառուցել, մյուսները գնացին միջատներ և թրթուրներ որսալու, իսկ մնացածը թռան անտառ:

Շուտով նոր տունը պատրաստ էր, որտեղ երեխաները զգուշությամբ տեղափոխեցին իրենց ծեր ծնողներին: Որպեսզի տաքացնեն ծնողներին, նրանք ծածկեցին ծերունիներին իրենց թևերով, ինչպես մայր թռչունն է տաքացնում իր մարմնի ջերմությամբ իր դեռ չծնված ձագուկներին: Հետո ծնողներին աղբյուրի ջուր խմեցրին, կերակրեցին և զգուշությամբ սկսեցին մաքրել նրանց ծեր ու կոտրատվող փետուրները:

Վերջապես անտառից վերադարձան մյուս հոպոպները և իրենց կտուցների մեջ բերեցին կուրությունից ապաքինող բույսեր: Բոլորը սկսեցին բուժել ծերունիներին այդ հրաշագործ խոտի հյութով: Սակայն բուժումը դանդաղ էր ընթանում, և ստիպված եղան զինվել համբերությամբ՝ փոխնեփոխ փոխարինելով մեկմեկու՝ մենակ չթողնելով ծնողներին և ոչ մի րոպե:

Եվ ահա եկավ այն ուրախալի օրը, երբ հայրն ու մայրը բաց արեցին իրենց աչքերը, իրենց շուրջը նայեցին և ճանաչեցին իրենց զավակներին: Այսպես որդիները բուժեցին իրենց ծնողներին՝ վերադարձնելով նրանց տեսողությունն ու ուժերը:

Ընթերցումն ավարտելուց հետո հարցեր ենք տալիս երեխաներին.

1. Քո կյանքում հանդիպե՞լ ես նման իրավիճակի: Ի՞նչ եք արել:
2. Ի՞նչ է նշանակում երախտագիտություն, պարտքի զգացում:
3. Ծնողներիդ օգնելու նպատակով ի՞նչ կանեիր դու:
4. Վերաբերմունք արտահայտի՛ր ծեր հոպոպների և նրանց զավակների հանդեպ:

Այս հարցերի շուրջ կազմակերպում ենք փոքրիկ քննարկում, լսում ենք բոլոր կարծիքները, և ուսուցիչը ամփոփում է՝ ասելով, որ երախտագիտությունը սոցիալական արժեք է, քանի որ այն ցույց է տալիս հարակից արժեքներ, ինչպիսիք են՝ մյուսին ճանաչելը, փոխադարձ օգնությունը, հավատարմությունն ու բարեկամությունը, որոնք իրենց հերթին կարող են հանգեցնել միմյանց նկատմամբ սիրո, հոգատարության ու երախտապարտության զգացման, փոխօգնության և այլ արժեքների ձևավորման: Երախտագիտությունը բարձրացնում է բարեկեցության զգացումը և՛ այն զգացողների, և՛ այն ստացողների մեջ: Այն բարելավում է սոցիալական հարաբերությունները՝ լինելով մյուսի ճանաչման և մեր կյանքի վրա դրա դրական ազդեցության նշան:

Խթանման փուլն ավարտելուց հետո անցնում ենք դասի ***իմաստի ընկալման*** փուլին:

Բացատրում ենք լեզվաքերականական նյութը՝ ***նույնահունչ համանուններ***: Ասում ենք, որ *նույնահունչ կամ համահունչ* են այն բառերը, որոնք տարբերվում են գրությամբ, բայց նույնն են հնչումով կամ արտասանությամբ: Օրինակ՝

ա) 1. Ախտ (հիվանդություն), 2. Աղտ (կեղտ):

բ) 1. Անոթ («անօթ», աման), 2. Անօդ («անօթ», օդազուրկ):

Այս կարգի բառերի նույնահնչությունը ժամանակակից հայերենում հիմնականում առաջանում է ձայնեղների խլացման, խուլերի ձայնեղացման, խուլերի շնչեղացման հնչյունական օրինաչափությունների հիման վրա:

Կատարում ենք վարժություններ՝ թեմայի գործնականությունն ապահովելու նպատակով: Հանձնարարում ենք տեքստից գտնել համանուններ և ցույց տալ դրանց նշանակությունը տեքստում: Ապա խմբերին բաժանում ենք քարտեր՝ հետևյալ առաջադրանքներով՝

Տրված համանուններով կազմել նախադասություններ.

1. սեր (կաթի երեսի թանձր շերտ). սեր (զգացմունք),
2. կետ (կետանիշ, գծի հատվածի սահման). կետ (ջրային կաթնասուն կենդանի),
3. տոն (ձայնաստիճան). տոն (նշանավոր իրադարձության նվիրված հանդիսավոր օր),
4. դող (մարմնի սարսուռ). դող (անվին անցկացվող ռետինե շրջանակ)
5. քանոն (ձողաշերտ՝ չափելու և ուղիղ գծելու համար). քանոն (երաժշտական գործիք):

Ավարտելուց հետո սովորողները կարդում են իրենց գրառումները, գնահատվում:

Այնուհետև խմբերին հանձնարարում ենք նորից կարդալ «Ջուլիո» պատմվածքը՝ կիրառելով «**Մտածի՛ր, զո՛ւյգ կազմիր, մտքե՛ր փոխանակիր»** մեթոդական հնարը:

Ուսուցիչն առաջարկում է զույգերից մի քանիսին ներկայացնել իրենց քննարկումների արդյունքները: Գնահատում ենք երեխաներին և անցնում դասի **կշռադատման** փուլին:

Դասի այս փուլում կիրառում ենք **«Քառաբաժան»** մեթոդական հնարը: Դասը անցկացնում ենք համակարգչային դասարանում: «Քառաբաժանը» հարմար է ու հետաքրքիր կիրառել տեքստի հետ աշխատելիս: Այն կարելի է կիրառել մեծ կամ փոքր խմբերի հետ: Դասը կարող ենք անցկացնել համակարգչային դասարանում՝ էլեկտրոնային գրատախտակի գործածությամբ:

Անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար մուտքագրել «Քառաբաժանի» չորս բաժիններից յուրաքանչյուրում:

Բաժինների հանձնարարությունները պատահական չպետք է ընտրել, դրանք պետք է համապատասխանեն նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին: «Քառաբաժանի» աղյուսակը ցուցադրվում է էլեկտրոնային գրատախտակի վրա: Երեխաները, օգտվելով word–ի աղյուսակ գծելու գործիքներից, գծում են աղյուսակը այնպես, որ հորիզոնական և ուղղահայաց վանդակները լինեն չորսական, նայելով օրինակին՝ առաջին վանդակում լրացնել.

1. Ի՞նչ էիք տեսնում պատմվածքը կարդալիս (խմբային աշխատանք):

Սովորողների խմբերը կարդում են բնագիրը՝ գտնում են տեսողական, լսողական, զգացողական բառերը: Մուտքագրում են՝ ինչ էին տեսնում, և բանավոր բացատրում՝ ինչո՞ւ:

2. Ի՞նչ էիք զգում պատմվածքը կարդալիս:

Սովորողների խմբերը կարդում են բնագիրը՝ գտնում են հերոսների հույզերը, զգացմունքները (ուրախություն, տխրություն, զարմանք, վախ) արտահայտող բառերը: Տրված պատասխաններից մեկը մուտքագրում են և այն ներկում կանաչ գույնով՝ կապելով իրենց և իրական կյանքի հետ:

3. Ձեր շրջապատում հանդիպե՞լ եք Ջուլիոյի հոր նման մեկին, ի՞նչ խորհուրդ կտայիք նրան (խմբային աշխատանք):

Սովորողները բերում են օրինակներ (բանավոր պատմում): Այնուհետև առաջարկում ենք նկարել պատմվածքի որևէ հերոսի Paint ծրագրով և նկարը պահպանել համակարգչի աշխատանքային սեղանի (desktop) վրա:

4. Ինչպե՞ս կվերնագրեք պատմվածքը:

Պատկերը կլինի հետևյալը.

1. Ի՞նչ էիք տեսնում պատմվածքը կարդալիս (կարդում են):	**2. Ի՞նչ էիք զգում պատմվածքը կարդալիս:**
3. Ձեր շրջապատում հանդիպե՞լ եք Ջուլիոյի հոր նման մեկին, ի՞նչ խորհուրդ կտայիք նրան:	**4. Ինչպե՞ս կվերնագրեք պատմվածքը:**

Սովորողները պետք է հորինեն նոր վերնագիր: Այդ վերնագիրը մուտքագրեն և ներկեն ցանկացած գույնով: Այս մեթոդական հնարը սովորողներին հնարավորություն կտա ուսուցանվող նյութը ուսումնասիրել, սովորել բազմակողմանիորեն՝ որպես մի ամբողջություն՝ միաժամանակ զարգացնելով մտածողությունը և համակարգչային հմտությունները:

Աշխատանքի կատարման համար հատկացված ժամանակը լրանալուց հետո խմբերից յուրաքանչյուրին կարդալ ենք տալիս, կատարում լրացումներ, եթե անհրաժեշտություն կա, և քննարկում, մտքեր փոխանակում, ապա միավորային գնահատում կատարում, քանի որ երկրորդ կիսամյակում արդեն գործում է միավորային գնահատումը:

Եթե ժամանակ ունենք, աշակերտներին բաժանում ենք 7 խմբի՝ յուրաքանչյուր խմբի հանձնարարելով կատարել հետևյալ առաջադրանքներից մեկը.

ԽՈՒՄԲ 1

Փոփոխել տրված տեքստը. նոր հերոսներ ավելացնել կամ ընդհակառակը՝ սեղմել, կրճատել:

ԽՈՒՄԲ 2

Կազմել նկարագրական շարադրանք՝ կիրառելով տեքստից ընտրած հենակետային բառեր, բառակապակցություններ, նախադասություններ:

ԽՈՒՄԲ 3

Գնահատել հերոսների վարքագիծը և արտահայտել վերաբերմունք:

ԽՈՒՄԲ 4

Գործող անձի գործունեությունը կապել անհատական կենսափորձի հետ և հիշել նման իրավիճակներ:

ԽՈՒՄԲ 5

Ըստ տեքստի ստեղծել ուսումնական նյութեր՝ բառարան, պաստառ, գրքույկ և այլն, դրանց համար հակիրճ գրառումներ անել:

ԽՈՒՄԲ 6

Նշել տեքստի դաստիարակչական արժեքները՝ տեքստից համապատասխան օրինակներ բերելով:

Աշխատանքներն ավարտելով՝ խմբերը կարդում են իրենց գրածները, մեկնաբանում են ու գնա-

հատվում:

ԽՈՒՄԲ 7. Տրված բառաշարքից դուրս գրել համանունները՝ բացատրելով դրանց իմաստները. դրանցից 5-ը գործածել նախադասությունների մեջ:

Սեր, ճերմակ, դաս, հոտ, չար, քանոն, քաջ, ակ, մոտիկ, ծաղիկ, մանր, աղոտ, երջանիկ, գունդ, հարկ, փոքր, այր, գեղեցիկ, ցող, շահ, բարձր, մարտ, բութ, վատ, ծամ, վճիտ, շրջել, անարգել, գա-գաթ, գոլ:

Կատարման համար նախատեսված ժամանակն սպառվելուց հետո խմբերը հերթով ներկայացնում են իրենց գրառումները: Միավորային գնահատում ենք կատարում, ապա **անդրադարձ** և հանձնարա-րում տնային աշխատանք՝ մանրամասն բացատրելով:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցանկացած ստեղծագործություն, ինչպես նաև բանաստեղծությունն ուսումնասիրելիս ուսուցիչը պետք է հասնի նրան, որ սովորողները հստակորեն տեսնեն նրանում թաքնված միտքը, հասկանան իմաստը և հեղինակի վերաբերմունքը իր հերոսների նկատմամբ:

Դասի կարևոր առանձնահատկությունն այն է, որ **ուսուցիչը դասը երբեք չպետք է սկսի հետևությամբ կամ եզրակացությամբ**, որից հետո ձգտի հիմնավորել: Ուսուցչի գերագույն նպատակն այն պետք է լինի, երբ դասավանդման արդյունքում աշակերտն ինքը հետևություններ ու եզրակացություններ անի:

Այդ ընթացքում հարցն ասես հասունանում է աշակերտի գիտակցության մեջ, ու հաջորդ օրը նա ավելի պատրաստ է լինում տեսածը, ապրածը կամ լսածը մեկնաբանելու: Այդ դասին նա, ուսուցչի օգնությամբ, ջանում է անհասկանալի երևույթը բացատրող **դատողություններ ձևակերպել** և վերջի-վերջո **հանգել եզրակացության**՝ այն վերջին դրույթին, որը լույս է սփռում անհասկանալիի վրա:

Վահագն Դավթյան, «Մի փշոտ, փափուկ ճանապարհ» - 6 ժամ

ԴԱՍ 2, 3

Թեման՝ Վահագն Դավթյան, «Մի փշոտ, փափուկ ճանապարհ» բանաստեղծության կառուցվածքն ու բովանդակությունը: Բաղաձայն հնչյունների արտասանությունը և գրությունը (կրկնություն):

Նպատակը՝

- **Ձևավորել** և **զարգացնել** բանաստեղծության տեքստը արտահայտիչ, հասկանալով կարդալու կարողություններ:
- **Նպաստել** ընկալելու բանաստեղծության կառուցվածքը և բովանդակությունը:
- **Խթանել** ամրապնդելու ուղղախոսական և ուղղագրական կանոնների, օրինաչափությունների իմացությունը և դրանց ճիշտ կիրառությունը խոսքի մեջ:

Վերջնարդյունքները՝

- **Մատնանշել** բանաստեղծության կառուցվածքը. տուն. ռիթմ, հանգ:
- Արձակ շարադրանքով **վերարտադրել** բանաստեղծության բովանդակությունը:
- Տեքստում **ճանաչել** պատկերավորման միջոցները՝ մակդիր և համեմատություն:
- **Մեկնաբանել** հեղինակի խոհը, զգացմունքները:
- **Ներկայացնել** սեփական զգացողությունները տեքստը կարդալուց հետո:
- **Կազմել** բանաստեղծության զգայական ընկալման (մոդալության) աղյուսակ:

Ուսուցման մեթոդները՝ «Ներածական զրույց», «Հնգյակ», «Հարցուպատասխանի հնարք», «ԳՈՒՍ», «Հարցերի քարտարան»:

Ուսումնական նյութերը՝ «Մի փշոտ, փափուկ ճանապարհ» բանաստեղծությունը, հարցերի քարտեր, նշագրիչներ, թուղթ կամ տետր:

Դասի տևողությունը՝ 90 րոպե:

Դասի ընթացքը

Կարճ հարցման միջոցով ստուգում ենք հին դասի յուրացումը և տնային աշխատանքը, շտկումներ ենք կատարում, եթե դրա կարիքը կա, ամփոփում ենք թեման, միավորային գնահատում կատարում և անցնում նոր նյութի ուսուցման:

«Ներածական զրույցը» տեղի է ունենում դասի սկզբում, նյութի ուսումնասիրությունից առաջ՝ աշակերտներին պարզ դարձնելու առաջիկա աշխատանքի իմաստը, պատկերացում տալու, թե ինչը ինչպես պետք է կատարել: Զրույցի ժամանակ շատ կարևոր է հարցուպատասխանի հնարքի կիրառումը:

Հնչող հարցերն են.

1. Ճամփան ինչպե՞ս կարող է լինել փափուկ, փշոտ: Հիմնավորի՛ր:
2. Արարատ լեռը կարո՞ղ է լինել նյութեղեն - աննյութեղեն:
3. Ուխտավոր հոգնած հովը ինչո՞ւ է ծունկի իջնում Արարատի խորանում:
4. «Արարատի խորան» ասելով ի՞նչ ես հասկանում:
5. Ուխտավոր հովի հետ ո՞վ է ուզում գնալ ու փարվել Արարատին: Ինչո՞ւ:

Դասարանին կամ խմբերին ուղղված յուրաքանչյուր հարցից հետո ուսուցիչը մտածելու համար տալիս է ոչ մեծ դադար, որից հետո լսում է աշակերտներից որևէ մեկի պատասխանը: Եթե աշակերտները չեն կարողանում պատասխանել հարցին, ուսուցիչը կարող է վերաձևակերպել, ավելի հստակեցնել հարցերը, դրանք մասնատել կամ նոր օժանդակող հարցեր տալ: Զրույցը պետք է ապահովի ակտիվ հաղորդակցություն դասարանում: Ուսուցիչը պետք է հետևի, որ բոլորը ակտիվորեն մասնակցեն զրույցին, ուշադիր լսեն հարցերը, մտածեն պատասխանելիս, քննարկեն իրենց ընկերների պատասխանները, փորձեն արտահայտել սեփական կարծիք:

Ուսուցիչը պետք է հնարավորություն ստեղծի, որպեսզի աշակերտները շտկեն իրենց պատասխանները, դիմեն ընկերների օգնությանը: Չեն խրախուսվում թեմայից շեղող, դրա հետ կապ չունեցող և ակտիվության պատրանք ստեղծող հարցադրումները:

Վահագն Դավթյանը խորունկ անհատականություն է, նշում է ուսուցիչը, նրա պոեզիայում երկիրը, երկինքը, ամեն մի քար ու թուփ, աստղերը, մոլորակները, տիեզերքը, մարդը նույն նյութից են, նույն շրջանակի մեջ: Վահագն Դավթյանի բանաստեղծությունը կարդալիս միանգամից ընթերցողի մեջ արթնանում են հայ գենը, հայերենը, ոգեղենությունը, մարդուն մարդ պահող իրական արժեքները: Նա այն բանաստեղծն է, որ ազգ է պահում, գալիս է ասելու, որ Հայաստանը հավերժական ընթացք ունի: Հեղինակը «Մի փոշոտ, փափուկ ճամփա» բանաստեղծությունը գրել է 1982 թվականին: Բանաստեղծությունը բաղկացած է հինգ տնից: Փորձում ենք միջառարկայական կապեր ստեղծել բանաստեղծության ծնունդի և տվյալ ժամանակի քաղաքական-տնտեսական իրականության հետ, անել եզրակացություն ստեղծագործության թեմայի ու բովանդակության վերաբերյալ՝ ժամանակաշրջանի համաենթատեքստում:

Ապա անցնում ենք իմաստի ընկալման փուլին՝ կիրառելով ԳՈՒՍ (գիտեմ-ուզում եմ իմանալ- սովորեցի) մեթոդը: Այս մեթոդը կիրառելիս գծել ենք տալիս (կամ տպած թերթիկներ) երեք սյունակից բաղկացած մի աղյուսակ, որը կարող է դառնալ աշակերտի ուղեցույցը նյութը ուսումնասիրելու ժամանակ: Աղյուսակը գծում են կամ մեծ թղթի վրա կամ գրատախտակին: Աղյուսակի կիրառումը հնարավորություն է տալիս աշխատանքն իրականացնելիս անդրադառնալ տեքստերի բովանդակությանը, հերոսի

մտորումներին ու խոհերին, բառապաշարին, արժեքներին: Սովորողները ոչ միայն ձեռք են բերում գիտելիքներ, իրենց մեջ զարգացնում են կարողություններ, այլև հասունանում են որպես անձ, զգում են սովորելու իրական հաճույքը:

Ուսումնասիրություն՝ ԳՈՒՍ աղյուսակով:

Գ Գիտեմ	Ու Ուզում եմ իմանալ	Ս Սովորել եմ
Գրի՛ր այն տեղեկատվությունը, որ արդեն գիտես:	Գրի՛ր այն տեղեկատվությունը, որ ուզում ես սովորել:	Ամփոփի՛ր և գրի՛ր այն տեղեկատվությունը, որ սովորել ես դասի կամ թեմայի վերջում:

Քանի որ մեր թեման հայրենի բնօրրանն է, հետևաբար խոսքը վերաբերում է Հայաստանին, նրանում ապրող մարդու խոհերին: Հանձնարարում ենք, որ աշակերտներն առաջին և երկրորդ սյունակներում լրացնեն այն, ինչ գիտեն Հայաստանի մասին: Աղյուսակի երրորդ սյունակում գրում են օրվա թեմայից ստացած գիտելիքները: Աղյուսակին կարելի է անդրադառնալ թեման ամփոփելիս:

Գ Գիտեմ	Ու Ուզում եմ իմանալ	Ս Սովորել եմ
Հայաստանում կան փշատի ու բարդու շատ ծառեր: Հայաստանը լեռնային երկիր է, կապույտ երկնքում միշտ փայլում է արևը: Մեր երկրի հեռուներում բանտված ննջում է Արարատ լեռը:	Ուզում եմ ծանոթանալ Հայաստանի բնաշխարհին, հայոց սրբության՝ Արարատի բանտված պատմությանը: Ուզում եմ իմանալ իմ հինավուրց հայրենիքի, պապերի, նախապապերի մասին:	Հայաստանի փոշոտ ու փափուկ ճամփաների եզրերը շրջապատված են փշատի ու բարդու ծառերով, կապույտ ու արևշող երկնքում՝ ամպի ծվենների միջից, ցոլում է Արարատ լեռը: Հոգնած հովը ուխտի է գնում՝ ծունկի իջնելու Արարատի խորանում: Հովի հետ միասին հեղինակն էլ ուզում է ուխտի գնալ ու փարվել Արարատին:

Աշխատանքը կարելի է հանձնարարել կատարելու անհատական կամ խմբային եղանակով: Աշխատանքին տրված ժամանակը լրանալուց հետո սովորողները կարդում են իրենց գրառումները, քննարկում, մտքեր են փոխանակում և գնահատվում:

Այնուհետև հանձնարարում ենք դուրս գրել բանաստեղծության մեջ հիշատակված առարկա, երևույթ, անձ ցույց տվող բառերը և մեկնաբանել:

Շարունակում ենք դասը՝ հանձնարարելով գրել «Հնգյակ» (անհատական աշխատանք):

Գրի՛ր հնգյակ՝ «Մի փշոտ, փափուկ ճանապարհ» բանաստեղծությունից ընտրելով բանալի բառ:

Հնգյակ գրելու կանոնները.

1. Առաջին տողը մեկ բառ է, որը նկարագրում է հասկացությունը (սովորաբար՝ գոյական):

2. Երկրորդ տողը բաղկացած է հասկացությունը նկարագրող երկու բառից (սովորաբար՝ ածական):

3. Երրորդ տողը բաղկացած է երեք բառից, որոնք արտահայտում են հասկացության հետ կապված գործողություններ (սովորաբար՝ դերբայներ):

4. Չորրորդ տողը բաղկացած է չորսբառանի արտահայտությունից, որը ցույց է տալիս հասկացության նկատմամբ զգացմունք կամ վերաբերմունք:

5. Վերջին տողը մեկ հոմանիշ բառ է, որ այլ կերպ է արտահայտում նույն հասկացությունը:

Օրինակ՝

Ճամփան՝

Փշոտ, փափուկ,

Հոգնած, շիկնած, մշուշված

Արարատին փարվել է երազում

Հերոսը:

Աշակերտները կարդում են իրենց գրած հնգյակները, կարծիք են արտահայտում միմյանց գրածների վերաբերյալ, ուսուցիչն ամփոփում է արդյունքները, ապա աշակերտներին բաժանում ենք հինգ խմբի՝ յուրաքանչյուրին հանձնարարելով կատարել հետևյալ առաջադրանքներից մեկը.

1. Մեկնաբանի՛ր «Մի փշոտ, փափուկ ճանապարհ» բանաստեղծության վերնագրի և բովանդակության իմաստային փոխադարձ կապի մասին: Անվանի՛ր վերնագրի այլընտրանքային տարբերակներ՝ հիմնավորելով:
2. Բանաստեղծությունից գտի՛ր այն տողերը, որտեղ հեղինակը պատմում է իր ցանկության, կարոտի, երազանքի մասին, ցույց է տալիս մարդու հոգու խռովքի գերազանցությունը բնության տարերքի խռովքի համեմատությամբ:
3. Մեկնաբանի՛ր «Մի փշոտ, փափուկ ճանապարհ» բանաստեղծության քնարական հերոսի մարդկային ապրումներն ու հույզերը:

Բնութագրող Բնութագրի՛ր բանաստեղծության լիրիկական հերոսին:	**Զգացմունքներ արտահայտող** Ի՞նչ զգացումներ ունեցար բանաստեղծությունը կարդալուց հետո:
Կենսափորձ Բանաստեղծության բովանդակությունը ի՞նչ հիշեցրեց քեզ: Ի՞նչ համանման պատմություն ես ընթերցել կամ կինոնկար դիտել:	**Իմաստավորում** Նոր վերնագի՛ր դիր յուրաքանչյուր տանը՝ բովանդակությունից ելնելով:

4. Գրի՛ր թեմատիկ շարադրություն՝ «Զգայուն անհատի լուռ դժգոհությունն ու բողոքը անարդար միջավայրի դեմ» թեմայով:

5. Բնագրում գտի՛ր և դո՛ւրս գրիր պատկերավորման և արտահայտչական միջոցները, բացատրի՛ր դրանց գործածության նպատակը:
6. Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր **բ-պ-փ, գ-կ-ք** բաղաձայնների գրությանն ու արտասանությանը վերաբերող բառեր, հիմնավորի՛ր գրությունը:

Պատասխանները հնչեցնելուց հետո կատարում ենք **անդրադարձ:**

Ի՞նչն էր ամենալավը աշխատանքը կատարելիս:	
Ի՞նչ խնդիր ուներ մեր խումբը:	
Ինչպե՞ս վճռվեց այն:	
Ի՞նչը կարող էին ավելի լավ անել:	
Ի՞նչը կարելի էր բարելավել:	

Հանձնարարում ենք տնային աշխատանք՝ մանրամասն բացատրելով:

Հարգելի՛ ուսուցիչներ, նախարարը սահմանել է դպրոցներում սովորողների գնահատման չափանիշները, հղում՝ **https://iravaban.net/418029.html**

2023-03-2 / 19 39 |

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը փետրվարի 24-ին հրաման է ստորագրել, որով սահմանել է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները՝ համաձայն հավելվածի:

Գնահատման չափանիշների ներդրումն իրականացվելու է հետևյալ ժամանակացույցով.

1) 2023-2024 ուսումնական տարի՝ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների բոլոր դասարաններում,

2) 2023-2024 ուսումնական տարի՝ ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններում,

3) 2024-2025 ուսումնական տարի՝ ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների 3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ դասարաններում,

4) 2025-2026 ուսումնական տարի՝ ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների 1-ին, 4-րդ, 9-րդ, 12-րդ դասարաններում:

Հրամանն ուժի մեջ է մտել մարտի 1-ին:

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափանիշներով սահմանվում են պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) սովորողների գնահատման (այսուհետ՝ Գնահատում) հետ կապված իրավահարաբերությունները:

2. Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի:

3. Գնահատումը միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը:

4. Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

5. Հաստատության կողմից գնահատման ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի, դժվարությունների և բացառիկ ընդունակության վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը կարող է օգտագործվել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար:

6. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

7. Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,

2) ձևավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

2. ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

8. Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Փուլի ընտրությունը թողնվում է ուսուցչի հայեցողությանը:

9. Հայտորոշիչ գնահատումը հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ:

10. Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողի կամ ուսումնական խմբի տարիքային առանձնահատկություններից:

11. Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք,

2) բանավոր հարցում,

3) բաց հարցերով քննարկում,

4) այլ:

3. ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

12. Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է՝ բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

13. Ձևավորող գնահատման խնդիրն է՝ ապահովել

1) ներառական, փոխներգործուն ու համագործակցային ուսուցման և ուսումնառության միջավայրի ստեղծումը,

2) սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապը,

3) սովորողի՝ ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերումը:

14. Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում:

15. Ձևավորող գնահատումն ապահովում է սովորողի՝ տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ:

16. Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:

17. Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, այն քննարկվում է առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող է լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

18. Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

19. Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից:

20. Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ),

2) բանավոր հարցում,

3) գրավոր աշխատանք,

4) գործնական (լաբորատոր) աշխատանք,

5) տնային աշխատանք,

6) նախագծային աշխատանք,

7) քննարկում, բանավեճ,

8) այլ:

21. Ուսուցչի և սովորողների միջև ապահովվում է փոխադարձ հետադարձ կապ, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողն ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ բարելավելու սովորողի ուսումնառության արդյունքները:

22. Ձևավորող գնահատում իրականացնելիս ուսուցչի կողմից օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ:

23. Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

4. ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

24. Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով:

25. Ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով:

26. Ամփոփիչ գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա՝ տարեկան ամփոփիչ գնահատականը:

27. Հաստատության 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր:

28. Հաստատության 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից մինչև 12-րդ դասարանը ներառյալ ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային գնահատման միջոցով:

29. Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը, որոնք քննարկվում են առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

5. ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

30. Միավորային գնահատման կիրառման դեպքում սովորողի ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է:

31. Գնահատականը գնահատման գործընթացի նիշային արտահայտությունն է միավորներով:

32. Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսած:

33. Միավորային գնահատման դեպքում կիրառվում է սովորողների գնահատման 10-միավորային սանդղակ՝ 1 (մեկ), 2 (երկու), 3 (երեք), 4 (չորս), 5 (հինգ), 6 (վեց), 7 (յոթ), 8 (ութ), 9 (ինը), 10 (տասը), որտեղ որևէ նիշ անբավարար գնահատական չէ:

34. Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են էլեկտրոնային դասամատյանում:

35. Միավորային գնահատման անհնարինության դեպքում դասամատյանում դրվում են հետևյալ նշումները՝

1) սովորողի բացակայության դեպքում՝ «բ».

2) միավորային գնահատման հաստատված ձևերը չկատարելու դեպքում՝ «-»:

36. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերն ու անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

37. Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝

1) թեստ,

2) բանավոր հարցում,

3) գրավոր աշխատանք,

4) գործնական (լաբորատոր) աշխատանք,

5) նախագծային աշխատանք,

6) այլ:

38. Միավորային գնահատման ցանկացած ձևի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ և ձևավորող գնահատումներ:

39. Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է սույն կարգի 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

40. Սովորողի տարեկան գնահատականը ձևավորվում է կիսամյակային գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

41. Սովորողների գնահատման համար ներկայացված 10 միավորային սանդղակի գնահատման միավորների բնութագրիչներն ընդհանրական են, որոնք հստակեցվում և տեղայնացվում են՝ ըստ առանձին ուսումնական առարկաների և գնահատման տարբեր ձևերի:

Միավորը	**Բնութագրիչները**
1	Ճանաչում է ուսումնական նյութի որոշ պարզ օբյեկտներ, երևույթներ և գործողություններ:
2	Ճանաչում և տարբերակում է ուսումնական նյութի պարզ օբյեկտներ, իրականացնում է պարզագույն գործնական գործողություններ՝ ըստ օրինակի:
3	Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի փոքր մասը, իրականացնում է մտավոր և գործնական պարզ գործողություններ՝ ըստ օրինակի:
4	Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի առնվազն կեսը, օրինակ՝ նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները բանավոր կամ գրավոր ձևերով, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներն առանց մեկնաբանության, իրականացնում է մտավոր և գործնական ոչ բարդ գործողություններ՝ ըստ օրինակի:
5	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ էական հատկանիշներն առանց դրանց բացատրության, իրականացնում է գործնական և մտավոր գործողություններ՝ ըստ հայտնի կանոնների կամ օրինակի:
6	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի ամբողջ ծավալի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները՝ կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունները բացահայտող բացատրական տարրերով, կիրառում է գիտելիքները ծանոթ իրավիճակում ըստ օրինակի՝ բանավոր, գրավոր կամ գործնական վարժությունների, խնդիրների, առաջադրանքների կատարման միջոցով:
7	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութն ամբողջ ծավալով, կիրառում է սովորածը ծանոթ իրավիճակում, նկարագրում և բացատրում է ուսումնասիրվող օբյեկտները,

	հայտնաբերում և հիմնավորում է առերևույթ կապերը, փորձառությունից օրինակներ է բերում, կատարում է վարժություններ, խնդիրներ և առաջադրանքներ ծանոթ իրավիճակում՝ ցուցումների հիման վրա:
8	Տիրապետում է ուսումնական նյութին և կիրառում ծանոթ իրավիճակում, մանրամասն նկարագրում է ուսումնասիրության օբյեկտները, բացահայտում է էությունը, հիմնավորում և ապացուցում փաստերով, եզրակացություններ է անում, ինքնուրույն կատարում է առաջադրանքները:
9	Լիարժեք տիրապետում է ուսումնական նյութին, կիրառում է մասամբ փոփոխված իրավիճակում: Առաջադրում է վարկածներ, ուսումնական խնդիրների լուծման նոր ճանապարհներ և ապացույցներ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական մոտեցումներ:
10	Լիարժեք կիրառում է ուսումնական նյութն անծանոթ իրավիճակներում: Բացահայտում է տարբեր երևույթների ներքին և արտաքին կապերը, օրինաչափությունները, առաջարկում է խնդիրների լուծման ռացիոնալ ուղիներ, կառուցում ալգորիթմներ, ցուցաբերում է ստացած արդյունքները վերլուծելու, գնահատելու հմտություններ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական հմտություններ:

6. ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

42. Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը կազմվում է սովորողի ուսումնական ձեռքբերումները նկարագրելու, ուսումնառության որևէ փուլի արդյունքներն ամրագրելու նպատակով:

43. Դրական է գնահատվում սովորողի յուրաքանչյուր հաջող քայլ, ինքնուրույն հարցի պատասխանը գտնելու յուրաքանչյուր (նույնիսկ անհաջող) փորձ: Խրախուսվում են նախաձեռնողականության դրսևորումը, հարցին պատասխանելը, խմբով աշխատելու ցանկությունը և ուսումնական գործընթացին ակտիվ մասնակցության այլ դրսևորումներ:

44. Սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատման առանձնահատկություններն են՝

1) գնահատվում է ոչ միայն արդյունքը, այլև սովորողի գործունեությունը,

2) գնահատվում են սովորողի անհատական ձեռքբերումները, ոչ թե այն, ինչը սովորողը չի արել, չի սովորել, չի հիշել,

3) հաշվի առնելով ուսումնական նյութի առանձնահատկությունները՝ տարբեր առարկաների գնահատման ձևերը կարող են տարբերվել:

45. Բնութագրող գնահատման ընթացքում ուսուցիչը արձանագրում է՝

1) սովորողի կողմից կրթական տեղեկատվության ընկալման և մշակման արագությունը,

2) առարկայական գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների յուրացումը,

3) տեղեկատվության մտապահումը,

4) աշխատանքի ճշգրիտ և մանրակրկիտ կատարումը,

5) սովորողի ուսումնառության մոտիվացիան,

6) սովորողի ինքնուրույնությունը,

7) սովորողի ինքնագնահատման ունակությունը:

46. Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը ներառում է նրա ուսումնական գործունեության արդյունքները՝ տվյալ դասարանի առարկայացանկում ընդգրկված ուսումնական բոլոր առարկաներից:

47. Բնութագրող գնահատումն իրականացվում է՝

1) 1-4-րդ դասարանների կիսամյակների և 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ավարտին,

2) տարրական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) կրթական ծրագրի ավարտին:

48. Տարրական դպրոցի յուրաքանչյուր սովորողի ուսումնառության կիսամյակային արդյունքների ամփոփման նպատակով կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր բոլոր առարկաներից:

49. Սովորողի ուսումնական ձեռքբերումներն արձանագրելու համար հիմք են ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքները:

50. Բնութագրող գնահատման չափանիշները հստակեցվում և տեղայնացվում են ըստ առանձին ուսումնական առարկաների:

51. Ամփոփիչ գնահատման ձևերից սովորողների ուսումնառության արդյունքները գրանցվում են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում և կցվում են սովորողի անձնական գործին:

Ուսուցչին օգնելու նպատակով ստորև տալիս ենք հայտորոշիչ թեստերի օրինակներ.

Հայտորոշիչ թեստ
Հնչյունաբանություն

1. Ընդգծել երեք բառ, որոնք սկսվում են բաղաձայն հնչյունով.

Կրթություն, բնօրրան, ելևէջ, էջանշան, եղնիկ, թախծօրոր, էժանագին, ոզնի, երամ, բացօթյա, գետեզր, խավիար, ողկույզ, ընկույզ, քրիստոնյա, բամբակ:

2. Գրել տրված բառերից երեքի հնչյունների և տառերի քանակը.

աներես _____ եղևնի _____
երկինք _____ ինքնաեռ_____
մնայուն _____ որսորդ _____

3. Ընդգծել տրված բառերից տասի երկհնչյունները.

Բազմադարյան, բամբակյա, բայց, գոյ, եզակի, ելույթ, երեկոյան, կահույք, կայմ, կիսաեզրափակիչ, հայեցի, միամսյակ, նույնպիսի, որդեկորույս, սույն, քնքշաբույր, աղբակույտ, այդքան:

4. Բառերը խմբավորել ըստ այ, յա, յու, ույ , ոյ, յո երկհնչյունների.

Նոյ, մայր, մատյան, միաձույլ, արդյոք, մյուս, նյութ, սառուցյալ, սոսափյուն, վայրկյան, տասնյակ, Օֆելյա, ադամանդյա, այդ, այրել, անկյուն, աճյուն, առյուծ, նոյեմբեր, գոյական, Արշակունյաց, բայ, բյուրեղ, բնույթ, բույր, գյուղացի, դայլայլ, դյութիչ, եղջյուր, զույգ, ընձյուղ, ժայթքել, ինքնուրույն, լայն, լուսնյակ, խարույկ, կայարան, կայմ, կյանք, կույտ, հաճույք, հյութալի, հյուծվել:

այ	յա	յու	ույ	ոյ	յո

Հայտորոշիչ թեստ
Է կամ ե ձայնավորի ուղղագրությունը

1. Լրացնել բաց թողնված տառերը՝ *է կամ ե:*

Ամենա__ժան, **խուռն__րամ,** աշտ__, եղեր__րգ, վեր__րկրյա, միջօր__, ան__, **ան__րկբա,** երբևից__, Երևանջ__կ, երբև__, մանր__աբան, ցայգ__րգ, **առօր__ական,** այժմ__ական, պաշտոն__ական, **ան__ական**, լայն__զր, հով__կ, **վայր_ջք,** լայն__կրան, հր__շ, տիեզ__րք, ողբ__րգակ, լուսն__ջք:

2. Վերը թվարկված բառերից տասը ենթարկել բառակազմական վերլուծության:

_____
_____
_____

3. Կազմել նախադասություններ 1-ին առաջադրանքի թավ գրված բառերով:

_____
_____
_____

4. Փակագծում տրված բառերում ավելացնել բաց թողնված *է, ե* տառերը և տեղադրել տեքստի համապատասխան նախադասություններում.

(ան_րկբա, հն_աբաններ, ան_ևակայելի, մանր_աբանի, ստոր_ակրյա)

Գետեզրին աշխատում էին մի խումբ _____: Նրանք հայտնաբերել էին _____ հնագույն քաղաքի փլատակները: _____էր, որ քաղաքը կործանվել էր երկրաշարժից և ծածկվել դարերի հող ու փոշով: Նրանք աշխատում էին _____ եռանդով և յուրաքանչյուր քարաբեկոր ուսումնասիրում _____ բծախնդրությամբ:

Հայտորոշիչ թեստ

Օ կամ ո ձայնավորի ուղղագրությունը

1. Լրացնել բաց թողնված տառերը *օ, ո կամ վո:*

Հողմակ__ծ, **արևազ__ծ,** հանր__գուտ, յուր__րինակ, ցածր__րակ, **ան__րակ,** արագ__տն, առ__ռեական, միջ__ռե, **բարձր__րակ,** գրա__ր, __թյակ, հատ__ոյակ, վաղ__ոդյա, __ոմիզդուխտ, __ոըստ__ռե, **նախ__ր__ք,** չ__գնել, չ__գևորել, բն__ոինակ, գիշեր__թիկ, նորա__ճ, հնգ__ոյակ, տրտմ__ր__ր, **արագ__ռեն,** բան__ր:

2. Վերը թվարկված բառերից վեցը ենթարկել բառակազմական վերլուծության:

_____

_____

_____

3. Կազմել նախադասություններ 1-ին առաջադրանքի թավ գրված բառերով:

_____

_____

_____

4. Փակագծում տրված բառերում ավելացնել բաց թողնված *օ, ո* տառերը և տեղադրել տեքստի համապատասխան նախադասություններում.

(մեղմ_ր_ր, արևազ_ծ, քնքշ_ր_ր, սառն_որակ, յուր_ոինակ, բն_որանի, միջ_ռե, մեղմ_ռեն, դեղ-նազ_ծ)

_____ _____ էր: _____ ծփում էր Արարատյան դաշտը, և սյուքը _____ տարուբերում էր _____ արևածաղիկները, _____ գետակների կոհակները: Ողջ բնությունը _____ երգ էր սփռել իմ հայրենի_____ վրա, և այդ երգը նման էր _____ համերգի:

Հայտորոշիչ թեստ

Ը ձայնավորի ուղղագրությունը

1. Լրացնել *ը* տառը այն բառերում, որտեղ անհրաժեշտ է:

Հյուր__նկալ, **անակ__նկալ**, դյուր__նկալ, առ__նչվել, երկ__նչել, խոչ__նդոտել, **ակ__նթարթ,** դաս__նթաց, մ__թնկա, ան__նթեռնելի, խոյ__նթաց, **չ__մբռնել,** նախ__նտրել, սր__նթաց, **խաղ__նկեր**, __մպելիք, առ__նթեր, ակ__նդետ, դյուր__նթեռնելի, չ__նկնել, ան__մբռնելի, դր__մբոց, օր__նդմեջ, այլ__նտրանք, ճեպ__նթաց, ան__նդունակ, **ակ__նբախ,** _նթանալ, զուգ__նթաց, համ__նկնել, չ__նդդիմանալ, երկ__նտրանք, կոր__նթարդ:

2. Վերը թվարկված բառերից տասը ենթարկել բառակազմական վերլուծության:

_____
_____
_____

3. Կազմել նախադասություններ 1-ին առաջադրանքի թավ գրված բառերով:

_____
_____
_____

4. Փակագծում տրված բառերում ավելացնել բաց թողնված *ը* տառը, որտեղ անհրաժեշտ է, և տեղադրել տեքստի համապատասխան նախադասություններում:

(դաս_նկեր, ամենա_նտիր, խոյ_նթաց, ան_նդհատ, հյուր_նկալ, ան_մբռնելի, որոտ_նդոստ, մերթ_նդմերթ)

_____ տանտերը, որ իմ երբեմնի _____ էր, մեզ հյուրասիրեց _____ խորտիկներով, ապա առաջնորդեց մոտակա բարձունքը, որտեղից բացվում էր մի հրաշալի բնանկար: Լսվում էր գետակի _____ խոխոջյունը, օդում երևում էին _____ արծիվները: _____ զգացումով էր համակվել էությունս: Տերևների _____ սոսափը, _____ լսվող անտառային ձայները հիացրել էին մեզ:

Հայտորոշիչ թեստ
Յ ձայնակապի ուղղագրությունը

1. **Խմբավորել արմատի յ և ձայնակապ յ ունեցող բառերը:**

Խնայողաբար, բարոյազանց, խոյահարել, ծառայողական, կայազոր, կայուն, կոյուղի, հայասեր, Հայաստան, հայելի, հայհոյել, հայեցողություն, հայորդի, հմայել, հմայիչ, արքայաբար, բայական, բայաձև, դերբայական, գարնանային, գոյական, դիմակայել, ենթակայություն, թեյաման, թեյարան, խոյակ, հեռակայել, հոյակապ, հոյաշեն, ճայակերպ, մակբայակերտ, մայիս, մնայուն, նայել, շոյել, սփյուռքահայություն:

Արմատի յ	Ձայնակապ յ

2. Տրված բաղադրիչներով կազմել բառեր՝ կիրառելով յ կիսաձայնի ուղղագրության կանոնը:

Սատանա և -(ա)կան, ժողովածու և -ում, ընծա և գիր, ծառա և -ող, ծառա և -ություն, հասցե և տեր, հմա և -իչ, ձի և -(ա)վոր, մի և -ակ, մի և -անալ, մնա և -ուն, նախօրե և -ին, վերարկու և -(ա)վոր, ենթակա և -(ա)կան, Ուրարտու և -ում, աղա և -(ա)կան, առկա և -ություն, Արա և -իկ, արդի և -(ա)կան, արքա և որդի, բարո և -(ա)կան, բարո և զուրկ, բացակա և -ություն, սպա և կույտ:

_____
_____
_____

3. **Լրացնել յ ձայնակապն այն բառերում, որտեղ անհրաժեշտ է:**

Որպե__ով, մնա__ուն, շո__ել, է__ակ, մի__ասնություն, ազգա__ին, թե__աման, Սերգե__ի, Հռիփսիմե__ի, ծառա__ի, հո__ակապ, վերարկու__ով, կարդա__ի, Սարո__ի, վա__րկյան, խնա__ել, Նա__իրի, արքա__որդի, այրուձի__ի, սյուն__ակ, ջղա__ին:

4. **Ըստ անհրաժեշտության տեղադրել յ ձայնակապը և կազմել նախադասություններ հետևյալ բառերով՝ շառաչ_ուն *(ածական)*, շառաչ_ուն (գոյական), *կարկաչ _ուն (ածական), կարկաչ _ուն* (գոյական):**

_____
_____
_____

Հայտորոշիչ թեստ
Երկհնչյունների ուղղագրությունը

1. Լրացնել բաց թողնված երկհնչյունները՝ *յա, իա կամ եա:*

Գերման__, գործուն__, գրասեն__կ, էքսկուրս__, խավ__ր, ծ__ծան, հեք__թ, միմ__նց, դաստ__րակ, Երեմ__, Զմյուռն__, էներգ__, Թրակ__, ժան__կ, Կիլիկ__, կիրակնօր__, հոգ__կ, Ճապոն__, մետաքս__, Մալաթ__, Մար__մ, մենակ__ց, Օֆել__, Սոֆ__ (քաղաք), Սոֆ__, հր__, իդ__լ, այժմ__կան, փոխառ__լ, միջօր__կան, Անդր__ս, էլեկտրաէներգ__, քվ__րկել, Վիկտոր__(անուն), Վիկտոր__(ջրվեժ), Աս__ (անուն), Աս__ (աշխարհամաս), Անան__, ատ__ն, Արուս__կ, արևել__ն, բամ__, բար__ցական, Բուն__թ, Նատալ__, սար__կ, Սիր_, վաղորդ__ն, վերոհիշ__լ, փաս__ն:

2. Վերը թվարկած բառերը խմբավորել ըստ երկհնչյունների գրության.

յա	**իա**	**եա**

3. Լրացնել բաց թողնված *ույ* կամ *յու* երկհնչյունները և խմբավորել:

Ողջ__ն, զգ__շ, ս__նակ, կապ__տ, հ__ր, մ__ս աղ__սակ, ալ__ր, պա__սակ, բ__ր, բ__ր, հ__ս, հ__ս, ս__ն, ս__ն, առ__ծ, աշխ__ժ, ընկ__զ, ողջ__ն, ձ__թ, շառաչ__ն, հնչ__ն, հնչ__ն:

ույ	**յու**

4. **Լրացնել բաց թողնված *ոյ, յո, իո կամ եո* երկհնչյունները:**

Միլ__ն, մարմար__ն, Ն__, գ__ական, խ__ակ, ն__եմբեր, __թ, __դ, ռադ__, բրաբ__ն, թ__րեմ, քամել__ն, լեգ__ն, ամբ__ն, Պ__տր, օր__րդ, խ__, արդ__ք, ռադ__կայան, չեմպ__ն, քամել__ն:

Հայտորոշիչ թեստ
Բ-պ-փ բաղաձայնների ուղղագրությունը

1. Լրացնել բաց թողնված տառերը՝ *բ, պ կամ փ:*

Խա__անել, կա__արիչ, Դե__ետ, խա__ուսիկ, հորեղ__այր, փր__ել, եր__եմն, բամ__ել, գրա__ար, խա__ել, գամ__ռ, ամփո__ել, ճամ__ա, բամ__ակ, դիտմամ__, համ__ուրել, ար__ի, եր__ներանգ, փր__ուր, նր__անցք, սր__ել, խա__շիկ, ցայտաղ__յուր, ոսկեձո__, ջրար__ի, հար__ուխ, բա__ախել, թա__առել, խա__ուսիկ, ալեձու__, ար__ել, համ__երատար, ի__րև, Կող__, ող__, Գա__րիել, եր__եք, աղ__արկղ, դյուրաբոր__ոք, ամ__ողջ, սր__ագրել, նր__առճ, սուր__, խա__խ__ել, խարխա__ել, հա__շտակել, հա__ճե__, փա__ագ, պա__ակ, հա__շտա__:

2. Վերը թվարկած բառերը խմբավորել ըստ բաղաձայնների գրության.

բ	պ	փ

3. Կազմել նախադասություններ *խարխափել, խաբել* բառերով:

_____
_____
_____

4. Փակագծում տրված բառերում ավելացնել բաց թողնված *բ, պ կամ փ* տառերը և տեղադրել տեքստի համապատասխան նախադասություններում:

(ամ__շող, ար__շիռ, աղ__յուրները, եր__ներանգ, ա__շեցուցիչ, ջրար__ի, ներ__ողում, թ__ուտնեռում, թ__ռտում)

Գարուն էր՝ _____ գույներով, _____ ծաղիկներով: _____ երկնքում ճախրում էին թռչունները, _____ վխտում էին կենդանիները: _____ կարկաչում էին, _____ շուշանները՝ մեղմօրոր ճոճվում ջրերի վրա: Անտառը երգում, _____ կարծես _____ էր մայր բնությանը: Մարդու սիրտը _____ է այդ _____ գեղեցկություններից:

Հայտորոշիչ թեստ
Գ-կ-ք բաղաձայնների ուղղագրությունը

1. Լրացնել բաց թողնված տառերը *գ, կ կամ ք:*

Բարա__, ժայթ__ել, գիր__(փափուկ), գինարբու__(խնջույք), կար__ին, կար__ին, վար__ (հեղինակություն), վար__ (վարվելակերպ), բար__ (այրող), բար__ (նիստուկաց), կողպե__, սայթա__ել, քամու__, քսու__, գինարբու__(ծաղիկ), հո__նատանջ, միր__, առանց__, քր__ջալ, կար__ել, էլե__տրականություն, ժառան__որդ, ո__եշնչվել, արա__ընթաց, արձա__անք, թր__ախոս, անկար__ություն, անց__, վար__ագիծ, փոխօ__նություն կար__, կառ__, ուռուց__, առույ__, պատ__ամ, հե__նել, սի__ապանծ, եր__ի-ծան__, գովեր__ել, ձ__ան, ո__եշնչել, մար__արիտ, պար__և, թան__, երփներան__, տրտմաշու__, սրտմաշու__, մեղ__(թուլամորթ), մեղ__(հանցանք), դիցու __, բարա__ (հյուղակ), բարա__ (շան տեսակ):

2. Վերը թվարկած բառերը խմբավորել ըստ *գ, կ կամ ք* բաղաձայնների գրության:

գ	կ	ք

3. Կազմել նախադասություններ *վարկաբեկել, վարքագիծ* բառերով:

_____
_____
_____

4. Փակագծում տրված բառերում ավելացնել բաց թողնված *գ, կ կամ ք* տառերը և տեղադրել տեքստի համապատասխան նախադասություններում:

(ա_ցանի, նետա__իգներին, հո__ևորականներն, ճ__նավորները, գո__ավորության, ո__որում)

Գեղամա լեռների _____ մեջ անհոգ նազում են Սևանա ջրերը: Քարերի ժանիքներն _____ նման ամուր բռնել են ջրերի վրա բազմած կղզին, ուր մի ժամանակ օթևանել է Աշոտ երկաթը: Նա _____ էր իր_____, որոնք փոքրաթիվ էին, բայց կարողացան հաղթել արաբ զորքերին: Այդ հաղթանակի առթիվ կղզու_____ ու _____ պատարագ մատուցեցին առ Աստված:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Դոլուխանյան, Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Ե. 2005:

2. Գ. Մկրտչյան, Թ. Թովմասյան, Հայոց լեզու 7, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., «Աստղիկ գրատուն», 2015:

3. Գ. Մկրտչյան, Թ. Թովմասյան, Հայոց լեզու 8, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., «Կռունկ տպագրատուն», 2016:

4. Գ. Մկրտչյան, Թ. Թովմասյան, Հայոց լեզու 9, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., «Էդիթ Պրինտ», 2022:

5. Զ. Մ. Գրիգորյան, Ա. Ա. Ղազինյան, Գրականություն, 1992, «Լույս» հրատարակչություն:

Էդ. Ջրբաշյան, Հ. Մախչանյան. Գրականագիտական բառարան, Երևան, 1980:

6. Թ. Թովմասյան, Ս. Աբազյան, Գրականություն 7, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., «Մարի» հրատարակչություն, 2019:

7. Թ. Թովմասյան, Հայոց լեզու 10, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., «Էդիթ Պրինտ», 2022:

8. Թ. Թովմասյան, Հայ գրականություն 10, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., «Էդիթ Պրինտ» 2023:

9. Թ. Թովմասյան, Լ. Գրիգորյան, Մայրենի 5-6, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., «Էդիթ Պրինտ», 2023:

10. Թ. Ջահուրյան , Հայ գրականության մեթոդիկա, Եր., 1980:

11. Ն. Ե. Կովալյով, Մանկավարժության ներածություն, Երևան, 1977:

12. Ս. Վ. Գյուլբուդաղյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Եր., 1987:

ՄԱՅՐԵՆԻ 5

Մեթոդական ուղեցույց

Խմբագիր՝ Գալյա Հովհաննիսյան

EDIT PRINT
43 D.Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am